

ՀՈՒՅՄ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446

**Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց
Կաթողիկոս՝**

**Թուրքիայի կողմից Յեղասպանության
ճանաչմանը պետք է փոխհատուցում հետևի**



197, Մարտ 2015 թ.

No 197, March 2015

شماره ۱۹۷ فروردین ماه ۱۳۹۴

Այս համարում Հայերեն բաժին

1- Հայաստան.....	1
2- Արեւմտյան Հայաստան.....	15
3- Միջուռք.....	22
4- Հասարակական.....	25
5- Մշակույթ.....	29
6- Խոհեր.....	31
7- Գծանկարչություն.....	31
8- Առածանի.....	31

Պարսկերեն բաժին

1- Հայերի դերը Օսմանական թուրքիայում.....	0-3
2- Լուրեր.....	3-4
3- Հայ գրականություն.....	5

Շապիկի առաջին էջում՝ Գարեգին Բ.

Վերջին էջում՝ Լույս են տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 197, Մարտ 2015 թ.

No. 197, March 2015

ماهنامه لویس - شماره ۱۹۷ فروردین ماه ۱۳۹۴

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Խմբագրական կազմ՝

Թամար Փանոսյան, Վանիկ Բաղդասարյան
Թամ Ղարախանյան, Սաթենիկ Ավետիսյան
Էմմա Բեգիջանյան, Հովիկ Վարդուհանյան,

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com
Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Edic Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

WEB master: **Baruyr Baghdasarian**

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատավաճառ - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են
չհամընկնել խմբագրության տեսակետներին:
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

«Հռչակագիր» Ինչո՞ւ, ինչպե՞ս

Մամուլի Հովասափյան
Բեռլին, փետրվար 2015

Կյանքը մեր՝ ետպատերազմյան սերնդի նկատմամբ, թե սփյուռքում և թե Հայաստանում, համեմատած, շատ ավելի բարյացակամ է գտնվել, քան նախորդ սերունդների նկատմամբ, մանավանդ բուն երկրում ապրողների նկատմամբ, որոնց միակ պայքարը նախկինում եղել է՝ լինել չլինելու պայքար և եթե ժամանակը ինչ որ չափով նպաստավոր է եղել, ապա ժողովուրդը ապարդյուն, բայց և այնպես պայքարել է նաև անկախության հասնելու համար: Ետպատերազմյան ժամանակաշրջանում և Սովետական Հայաստանում և սփյուռքի հայ գաղթօջախներում ստեղծված բարենպաստ քաղաքական և տնտեսական պայմաններում, հայ ժողովուրդը աննախընթաց տնտեսական, մշակութային և ազգային- քաղաքական զարթոնք ապրեց: Մակայն սփյուռքում հայ քաղաքական ուժերը և կուսակցությունները, ինչպես միշտ, չկարողացան հետագա ազգային- քաղաքական պայքարի համար, ընդհանուր եզրեր գտնել և ստեղծել համընդհանուր մի հայկական կազմակերպություն: Որը կներկայացներ ամբողջ սփյուռքահայությունը, որը իր հերթին հզոր խթան կհանդիսանար՝ թե սփյուռքում հայապահպանման համար և թե մեր օրերի հրամայական խնդիրները, դրանք են՝ կազմակերպված սատարել նորաստեղծ հայկական անկախ պետականությանը և կազմակերպված դիմակայել, որոշ երկրներում ներքին քաղաքական անկայունության պատճառով, սփյուռքի գաղթօջախների հայության գլխին կախված հերթական վտանգը:

Ըստ իս, մեր օրերի համայն աշխարհի Հայությանը գերինդիքը՝ Հայաստանի՝ որպես անկախ պետականություն, անվտանգության ապահովվումն է, ինչպես նաև տնտեսական անխափան զարգացումը, ոչ թե ցեղասպանության ճանաչումը, որին այդքան կարևորություն է տալիս սփյուռքահայությունը:


Հրանդ Դինքը 2004 թվականի հունվար 30-Ակոսի համարում, հետևյալ խորագրով հոդվածում՝

Հայկական ինքնակերպարի ազատագրումը «թուրքից»

Գրում է.

«Երկու ճանապարհ կա հայի ինքնակերպարը ազատագրել «թուրքերի ազդեցությունից»: Առաջին ճանապարհը կարելի է գնալ միայն այն ժամանակ, երբ Թուրքիան, որպես պետականություն և որպես հասարակություն, հայերի նկատմամբ համակրանք կցուցաբերի և աներկբա կպարզաբանի, որ նա կիսում է հայ ազգի ցավը: Նման քայլ կարող է, ոչ անմիջապես, բայց ժամանակի ընթացքում, այն բանին հասցնել, որպեսզի հայերը մի այլ ինքնակերպար ստեղծեն, որի համար նրանք այլևս թուրքի կարիքը չեն ունենալու: Ցավոք չի կարելի մոտ ապագայում նման տարբերակի իրագործումը ակնկալել:

Իսկ երկրորդ տարբերակը կարելի է ընտրել միայն այն ժամանակ, երբ հայերը իրենք որոշեն, որ իրենց ինքնակերպարի համար այսուհետև բավարարվելու են առանց «թուրքերի»: Որովհետև այս տարբերակը միայն հայերի ցանկությունը և որոշումը պետք ունի, ապա դրա իրագործումը համեմատաբար շատ դյուրին է լինելու: Սա այն ճանապարհն է, որով մենք պետք է անցնենք:



Հայաստան

Ինչո՞ւ է Վարդան Օսկանյանը դուրս եկել ԲՀԿ-ից. նրա հայտարարությունը

05.03.2015



«Բարգավաճ Հայաստան» կուսակցության արդեն նախկին անդամ, ՀՀ նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը բացատրել է, թե ինչու է դուրս եկել կուսակցությունից: Հայտարարությունում մասնավորապես ասվում է. «Բարգավաճ Հայաստան» կուսակցությանն անդամակցությունս դադարեցնելու իմ որոշման պատճառն այն է, որ կուսակցությունը չկարողացավ իրականացնել հայ ժողովրդի՝ իմ գնահատմամբ՝ բացարձակ մեծամասնության ցանկությունը՝ այս փուլում արմատական փոփոխություններ իրականացնելու եւ երկիրը ոչ միայն ծանր վիճակից դուրս բերելու, այլեւ զարգացման ճիշտ եւ առողջ ճանապարհի վրա դնելու: ԲՀԿ-ին անդամակցությունս դադարեցնում եմ՝ գիտակցելով նրա անհաջողության մեջ պատասխանատվության իմ բաժինը:

Նրանք, ովքեր չարախնդում են կուսակցության շուրջ ստեղծված իրավիճակի վրա, առաջին հերթին պետք է լուրջ մտահոգություն ունենան երկրում ստեղծված քաղաքական վիճակի համար: Այստեղ խնդիրը ոչ թե ԲՀԿ-ն է, այլ նրա եւ նրա ղեկավարի նկատմամբ վերջին շրջանում իրականացված միջոցները: Իշխանական բոլոր լծակների կամայական, խտրական եւ հակասահմանադրական օգտագործումը առաջին հերթին մեծ հարված էր Հայաստանի միջազգային հեղինակությանը: Երկրորդ, որ ավելի կարեւոր է, այդ գործողությունները կտրեցին հայ ժողովրդի՝ երկրում անհապաղ արմատական փոփոխություններ իրականացնելու հույսը՝ դրանից բխող բոլոր հետեւանքներով: Ծնորհավորում եմ Նաիրա Չոհրաբյանին կուսակցության ղեկը ստանձնելու համար: Դա, կարծում եմ, ճիշտ որոշում էր կուսակցության քաղաքական կողմից: Կուսակցությունն ունի գիտակից եւ նվիրված քաղաքական թիմ, որը, հուսով եմ, կշարունակի պայքարը երկրում քաղաքական մենաշնորհի դեմ, ինչպես նաեւ քաղաքական մթնոլորտի առողջացման համար: Հաջողություն եմ մաղթում իմ գործընկերներին իրենց հետագա գործունեության մեջ»:

Նշենք, որ Օսկանյանը կուսակցությունից եւ խմբակցությունից դուրս գալու մասին հայտարարել է մարտի 4-ին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

ԲՀԿ նախագահ է ընտրվել Նաիրա Չոհրաբյանը

05.03.2015

ԲՀԿ արտահերթ համագումարում, գրեթե միաձայն կուսակցության նոր նախագահ է ընտրվել ԲՀԿ խմբակցության քարտուղար Նաիրա Չոհրաբյանը: Այս մասին համագումարից հետո տեղի ունեցած քրիֆինգում հայտարարել է ինքը՝ Նաիրա Չոհրաբյանը՝ նշելով, որ իր թեկնածության օգտին ձեռնպահ է քվեարկել միայն մեկ մարդ՝ պատգամավոր Լյովա Խաչատրյանը: Հիշեցնենք, որ այսօր՝ մարտի 5-ին, տեղի է ունեցել ԲՀԿ արտահերթ համագումարը, որտեղ ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը հայտարարել է ակտիվ քաղաքականությունից հեռանալու մասին: Նա հրաժարվել է կուսակցության ղեկավարի պաշտոնից, հայտարարել է նաեւ ԲՀԿ խմբակցության ղեկավարի պաշտոնից:

Գագիկ Ծառուկյանն առաջարկել ԲՀԿ ղեկավարությունը վստահել Նաիրա Չոհրաբյանին: Կուսակցության քարտուղար է ընտրվել քաղաքաշինության նախկին նախարար Վարդան Վարդանյանը:

Վերջին օրերի ընթացքում ԲՀԿ խմբակցության 36 անդամներից կուսակցությունից հեռացել են 7-ը, այս պահին ԲՀԿ խմբակցությունում կա 29 պատգամավոր:

Նշենք, որ նախագահ Սերժ Սարգսյանը փետրվարի 12-ին ՀՀԿ խորհրդի նիստում ունեցած ելույթի ժամանակ հայտարարել էր, որ Գագիկ Ծառուկյան քաղաքական դերակատարը երկրի համար դարձել է չարիք: Նա նաեւ Ծառուկյանին ազատել է Ազգային անվտանգության խորհրդի անդամի կարգավիճակից, խոստացել, որ գործընթաց է սկսվելու Ծառուկյանի՝ ԱԺ նիստերից պարբերաբար բացակայելու կապակցությամբ: Մեկ օր անց Ծառուկյանը հանդես եկավ հայտարարությամբ՝ նշելով, որ իրենք գնում են իշխանափոխության: Սակայն փետրվարի 17-ին տեղի ունեցած Սարգսյան-Ծառուկյան հանդիպումից հետո ԲՀԿ առաջնորդը նորից հայտարարությամբ հանդես եկավ՝ նշելով, որ հանրահավաքը չեղյալ է համարվում:

Գագիկ Ծառուկյանի հայտարարությունը. Ես հեռանում եմ ակտիվ քաղաքականությունից

05.03.2015



ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը կուսակցության համագումարում հանդես է եկել հայտարարությամբ, որտեղ նշել է, որ հեռանում է ակտիվ քաղաքականությունից:

Հայտարարությունում ասվում է.

«Միքելի գործընկերներ, ընկերներ Այստեղ հավաքվել են մարդիկ, որոնց հետ միասին երկար ճանապարհ ենք անցել, տեսել ենք ուրախության, տխրության, հիասթափության, ցնծության պահեր: Ես միշտ աշխատել եմ ձեզ հետ լինել անկեղծ ու բաց: Եթե աշխատանքի ընթացքում ծագել են լարվածության, իրար չհասկանալու պահեր, ես միշտ աշխատել եմ արագ հարթել դրանք, որպեսզի չմնա որեւէ նստվածք կամ հետին միտք: Մեզ միասին հաջողվեց ստեղծել թե՛ Հայաստանի ներսում, թե՛ Հայաստանից դուրս լուրջ կշիռ ունեցող, մեծ հեղինակություն վայելող կուսակցություն: Ձեզնից յուրաքանչյուրն այդ գործում ունի իր ավանդը:

Այսօր եկել է այն պահը, երբ ես որոշում եմ կայացրել՝ այլեւս չգրադվել ակտիվ քաղաքականությամբ, վայր դնել կուսակցության նախագահի եւ խմբակցության ղեկավարի լիազորությունները: Սա չի եղել հեշտ որոշում, սա երկար մտորումների արդյունք է: Սա իմ անձնական որոշումն է, եւ ես ակնկալում եմ, որ դուք ըմբռնումով կմոտենաք:

Մեկ բան ուզում եմ անպայման շեշտել. Քաղաքականության մեջ գտնվելու տարիներին ես երբեք չեմ հետապնդել անձնական շահ: Չեմ օգտագործել ժողովրդի աջակցությունը անձնական նպատակներով:

Չեմ փոխանակել ժողովրդի հավատը պաշտոնների եւ այլ շահի հետ: Իմ թիմի եւ ժողովրդի մեջքի հետեւում գործարքներ չեմ կնքել: Այս բոլոր տարիների ընթացքում ես հետապնդել եմ պարզ, մարդկային նպատակ՝ իմ ժողովրդի աչքերում տեսնել ժպիտ, եւ ոչ թե արցունքներ:

Ուզում եմ լինել ավելի՝ անկեղծ: Քաղաքական բոլոր հնարավոր ճանապարհներով ես փորձել եմ լուծումներ գտնել, պայքարել մեր

ժողովրդին տանջող խնդիրների լուծման համար: Բայց ես միշտ դեմ եմ եղել մայրամասերին, ու այստեղ նույնպես ես անկեղծ եմ: Ես չեի կարողանա ներել ինձ, եթե թափվեր անգամ մեկ անմեղ մարդու այրույն: Սա այն սահմանն է, որն իմ ուժերից վեր է: Ինձ ընդունեք այնպիսին, ինչպիսին ես կամ:

Ես հեռանում եմ ակտիվ քաղաքականությունից: Ես այլևս կուսակցության նախագահ չեմ: Բայց ես շարունակելու եմ օգտակար լինել իմ երկրին եւ իմ ժողովրդին: Դա կարվի այլ ոլորտներում, այլ բնագավառներում: Ես կշարունակեմ կառուցել իմ երկրում եկեղեցիներ, դպրոցներ, մարզադահլիճներ, օգնել մշակույթի եւ գիտության մարդկանց: Բայց ես դա կանեմ որպես հայ, որպես Հայաստանի քաղաքացի, որպես Գազիկ Ծառուկյան:

Իմ խնդրանքն է Ձեզ՝ ինձ այլևս քաղաքական հարցերով չդիմել, ես չեմ խառնվելու ձեր որևէ որոշմանը: Ես որևէ կապ այլևս չունեմ ԲՀ-ի հետ: Դուք քիչ հետո կընտրեք նոր նախագահ, նոր ղեկավար մարմիններ, եւ կուսակցության ճակատագիրն այսուհետ ձեր ձեռքերում է: Սա իմ վերջնական որոշումն է:

Ես ուզում եմ շնորհակալություն հայտնել իմ բոլոր թիմակիցներին, կառույցների ղեկավարներին, քաղխորհրդի անդամներին, մեր պատգամավորներին: Ծնորհակալություն բոլոր շարքային քիչ-ականներին:

Ես շնորհակալություն եմ ուզում հայտնել մեր քաղաքական թիմի մի խումբ մարդկանց, ովքեր գիշեր-ցերեկ, առանց հանգստյան օրերի, առանց խուսափելու պատասխանատվությունից, մի կողմ էին դրել իրենց ընտանեկան եւ անձնական հոգսերը ու աշխատում էին հանուն մեր ընդհանուր գործի: Ծնորհակալություն:

Իսկ հիմա ուզում եմ անդրադառնալ ընթացիկ հարցերին: Կան շատ թեկնածուներ, որոնք պատվով կարող էին ստանձնել կուսակցության նախագահի պաշտոնը: Ես առաջարկում եմ, որ այդ գործը վստահվի մեր գործընկեր Նաիրա Զոհրաբյանին: Հաշվի առնելով նրա ժողովրդականությունը, նվիրումը թիմին: Մնացածը ձեր որոշելիքն է: Այսուհետ ամեն ինչ ձեր որոշելիքն է:

Ծնորհակալություն»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թաղի ամենասիրուն հայ աղջկան մերկացրել, ծաղրում էին. հիշողություններ Սումգայիթից

07.03.2015

Սումգայիթյան ջարդերից փրկված 47-ամյա Ռուզաննայի հիշողությունները ծննդավայրից արդեն 27 տարի է՝ միայն ողբերգության մասին են: Երջանիկ մանկության ու երիտասարդության հուշերը ջնջել է վերջին դրվագը՝ աղբբեջանցիները մերկացրել էին իրենց թաղի ամենագեղեցիկ հայ աղջկան, փողոց հանել ու անխնա ծաղրում էին:

«Նրան տկոթ հանեցին, գցեցին բակ ու սկսեցին գոռալ՝ ահա հայ հարսնացուն: Նրա մարմնի վրա ամբողջությամբ ծխախոտ էին հանգցրել: Նրա եղբորը 5-րդ հարկից դուրս նետեցին... Ես սիրում էի ծննդավայրս: Ինձ համար ամեն ինչ վառ գույներով էր, բայց հանկարծ ամեն ինչ անսպասելիորեն փոխվեց: Այն, ինչ տեսել եմ, դեռ աչքիս առաջ է», - պատմում է Ռուզաննա Ավագյանը:

Ողբերգական դեպքերի մասին Ռուզաննան շատ չի խոսում. նրա աչքերի սարսափը մատնում է՝ չի ուզում կրկին վերապրել տեսածը...

Սվետլանա Ղարիբյանը, որը Բաքվում էր ապրում, ջարդերի ժամանակ Սումգայիթ էր գնացել՝ մորեղբորն այցելության: Այդ օրը երեկոյան ու հաջորդ առավոտյան տեսածը, ապա փախուստը Սումգայիթից հիշում է ինչպես մոլորական շուն:

«Սեղանի շուրջ նստած էինք, ձայներ լսեցինք, դուրս եկանք պատշգամբ, ու դրսում կարծես միտինգ լինեք, ինչ որ բան էին գործադրում: Ավտոկայանի մոտ 15 հանրապետությունների մոնումենտ կար, մարդիկ կենդանի աստիճան էին սարքել, աշտարակից հանեցին Հայաստանի դրոշը. սկսեցին տորթել: Մենք մտանք տուն ու լույսը հանգցրինք, մնացինք, որ առավոտյան հետ գնանք Բաքու: Առավոտյան ավտոկայանի մոտ տեսանք՝ հավաքվածները խաղում են գնդակի նման ինչ-որ բանով: Պարզվեց՝ դա ոչ թե գնդակ էր, այլ փոքրիկ երեխայի գլուխ: Երբ կանգնած էինք եւ ուզում էինք նստել ավտոբուս, այդ գլուխը

գլորվեց դեպի մեզ: Ես նկատեցի երեխայի գլխի մազերը, որ արյունոտ էին», - պատմում է տիկին Սվետլանան:

Բաքվում Սվետլանայի ընտանիքի համար ապրելը նույնպես վտանգավոր է եղել: Հիշում է, որ տղամարդիկ գիշերները արթուն պահակություն են արել՝ կանխելու Սումգայիթի հնարավոր կրկնությունն իրենց մոտ: Տիկին Սվետլանան Լեռնային Ղարաբաղ է տեղափոխվել 1988թ. ձմռանը, ամուսնացել, մինչև օրս ապրում է Ստեփանակերտ քաղաքում:

1988թ. փետրվարի 27-ից Բաքվից 20 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սումգայիթ քաղաքում աղբբեջանական իշխանություններն սկսեցին հայ բնակչության բնաջնջումը, որն ուղեկցվում էր հայերի ունեցվածքի թալանով և դժնայանքով: Երեք օրվա կոտորածների ընթացքում վիրավորվեցին և սպանվեցին բազմաթիվ մարդիկ, ընդ որում՝ սպանվածների մի մասը տանջամահ էր արվել, իսկ դիակներն այրել էին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

«Ազգային վերածնունդ» կուսակցությունը կմասնակցի Արցախի ԱԺ ընտրություններին

07.03.2015



Ստեփանակերտում մարտի 7-ին տեղի է ունեցել «Ազգային վերածնունդ» կուսակցության համագումարը: Համաձայն կուսակցության կանոնադրության՝ համապետական ընտրություններից առաջ հրավիրվում է կուսակցության համագումար:

«Ազգային վերածնունդ» կուսակցության համար քաղաքականություն ամենօրյա գործունեություն է, որն իր գոյություն էրկու տարիների ընթացքում կուսակցությունն ապացուցել է ակտիվ աշխատանքով, չնայած սահմանափակ ռեսուրսներին՝ կատարելով մշտական աշխատանք Արցախի ամբողջ տարածքում, կազմակերպելով հանրային քննարկումներ, բարձրացնելով խնդիրներ եւ առաջարկելով դրանց լուծման սեփական տարբերակները: Ելնելով վերոնշյալից՝ Համագումարը առաջարկել է կուսակցության Գործադիր մարմնին, կուսակցության նախագահին եւ տարածքային կառույցներին՝

1. 2015թ. մայիսի 3-ին կայանալիք ԼՂՀ ԱԺ ընտրություններին ընդառաջ ամբողջականացնել կուսակցական եւ ոչ կուսակցական գործիչների հետ բանակցությունները՝ մեծամասնական բոլոր ընտրատարածքներում թեկնածուներ առաջադրելու/սատարելու եւ կուսակցության համամասնական ցուցակ ձեւավորելու համար:

2. Քաղաքական թիմի մեջ ներգրավել Արցախում ճանաչված, արժանիքներ եւ հեղինակություն ունեցող անձանց:

3. Գործունեության հիմքում դնել թիմային աշխատանքը՝ ուժեղացնելով կուսակցական եւ համակիր կառույցները:

4. Օրենքով սահմանված կարգով ռեսուրսներ ներգրավել կուսակցության առաջիկա աշխատանքների համար:

Մինչև մարտի 19-ը տեղի կունենա «Ազգային վերածնունդ» կուսակցության Գործադիր մարմնի նիստ, որը կհաստատի եւ կենտրոնական ընտրական հանձնաժողով կներկայացնի կուսակցության համամասնական ցուցակը: Կհաստատվեն նաեւ մեծամասնական թեկնածուները: «Ազգային վերածնունդ» կուսակցությունը ստեղծվել է 2013թ. փետրվարին եւ գրանցվել 2013թ. մայիսին: Կուսակցությունն այժմ ունի շուրջ 560 անդամ Արցախի բոլոր շրջաններում», - ասվում է հայտարարության մեջ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Բելառուս դիվանագետը Ադրբեջանին մեղադրել է հայերի իրավունքների ոտնահարման մեջ

07.03.2015



Լատվիայի Դաուզավալիս քաղաքում Բելառուսի հանրապետության գլխավոր հյուպատոս Վլադիմիր Կլիմովը «ՄեյՉաս» պարբերականին տված հարցազրույցում մեղադրել է Ադրբեջանին նախկին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում հայ բնակչության իրավունքները ոտնահարելու համար: Այս մասին գրում է «Գրանի» գործակալությունը:

Նշենք, որ հյուպատոսը զինվորական ծառայություն է անցել նախկին Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում:

«Լեռնային Ղարաբաղից ես տեղափոխվեցի 1992թ.: Մեր ստորաբաժանմանը հանձնարարված էր կանխել ռազմական գործողությունների ծավալումը հակամարտ կողմերի միջև, զինաթափել անօրինական զինված խմբավորումները: Հայ ժողովրդին ինքնադրսեւորման իրավունք չէին տալիս: 1923-1991թթ. Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը մտնում էր Ադրբեջանի ԽՍՀ կազմի մեջ եւ բնակեցված էր գերազանցապես հայերով: Ենթադրենք հայկական ընտանիքում երեխա էր ծնվում Մալումյան ազգանունով, իսկ ԶԿԱԳ-ում նրան գրանցում էին Մալումյանով ազգանունով՝ ադրբեջանական «շուն» տալով: Չէր խրախուսվում ազգային ավանդույթներին հետևելը, լինում էին տարածաշրջաններ կրոնական հողի վրա: Բոլոր այդ վիրավորանքները կուտակվում էին, իսկ հետո ինչ-էր մեկը սադրեց իրավիճակը, եւ բռնկվեց հակամարտությունը»,- հայտարարել է դիվանագետը:

Նրա խոսքով՝ նույն բանն էր կատարվում Ուկրաինայի Հարավ-արևելքում Յուշենկոյի օրոք, երբ Արեւմտյան Ուկրաինայից մարդիկ էին ուղարկում Հարավ-Արեւելք դեկավար պաշտոններ զբաղեցնելու համար:

«Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը ինքնահռչակ պետություն է: 1994թ. հրադադարի մասին արձանագրություն ստորագրվեց մի կողմից Ադրբեջանի, իսկ մյուս կողմից Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջև: Նման իրավիճակ է նկատվում Մերձդնեստրում, որտեղ շատ տնտեսական կապեր ստեղծված են, կան հաղորդակցության եւ փաստաթղթերի ձեւակերպման խնդիրներ: Ընդհանուր առմամբ ինքնահռչակումը փակուղի տանող լուծում է»,- հայտարարել է դիվանագետը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Նախագահը շնորհավորել է Հայոց ցեղասպանությունը վերապրած հայուհու 105-ամյակը

07.03.2015

Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր շնորհավորական ուղերձ է հղել Հայոց ցեղասպանությունը վերապրած եւ այսօր իր ծննդավայրից հազարավոր կիլոմետրեր հեռու՝ ԱՄՆ Մասաչուսեթս նահանգում բնակվող տիկին Աստղիկ Թեթեգյան-Ալեմյանին՝ ծննդյան 105-րդ տարեդարձի առթիվ:

«Հարգարժան տիկին Թեթեգյան-Ալեմյան, Ինձ համար մեծ պատիվ է եւ շատ հաճելի շնորհավորել Ձեզ՝ ծննդյան փառահեղ 105-րդ տարեդարձի կապակցությամբ: Ի սրտե

մաղթում եմ Ձեզ առողջություն եւ երջանկություն՝ մշտապես շրջապատված զավակների ու հարազատների ջերմ սիրով:

Ձեր անցած կյանքի ուղին, որ լի է ինչպես բազմաթիվ փորձություններով, անդաճնալի կորուստներով, այնպես էլ լուսավոր պահերով, Հայոց ցեղասպանությունը վերապրած հայ ժողովրդի անկոտրում հավաքական կամքի խոսուն վկայությունն է: Ապրելով օտարության մեջ, հոգում կրելով անցյալի դառը հիշողություններն ու չսպիացող վերքերը՝ Դուք կարողացաք պահել ու պահպանել Ձեր ազգային, կրոնական ու մշակութային ինքնությունը, ստեղծել ամուր պլանդույթներով հայ ընտանիք, դաստիարակել զավակներին հայրենասիրության, մարդասիրության, անցյալի եւ արմատների նկատմամբ հարգանքի ոգով:

Հարգարժան տիկին Թեթեգյան-Ալեմյան, Յանկանում եմ կրկին շնորհավորել Ձեզ ծննդյան օրվա առթիվ եւ ավելացնել, որ Դուք խորհրդանշում եք մեր այն տարագիր հայրենակիցներին, ովքեր տարիներ շարունակ Ձեզ նման կրում են, վառ պահում եւ գալիք սերունդներին փոխանցում հայի վերածննդի պատգամը եւ Հայրենիքի խորհուրդը»,-ասված է ՀՀ նախագահի շնորհավորական ուղերձում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Մահացել է նկարիչ Լեւոն Կոչոյանը

11.03.2015



Կյանքի 91-րդ տարում կյանքից հեռացել է նկարիչ, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լեւոն Կոչոյանը:

Նկարչի հոգեհանգստի արարողությունը կկայանա մարտի 12-ին, Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցում, իսկ հուղարկավորությունը՝ ուրբաթ ժ. 12:00-14:00 ՀՀ նկարիչների միությունից:

ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Լեւոն Կոչոյանը ծնվել է 1924 թվականին Ռուսաստանում: Նա աշակերտել է Հակոբ Կոչոյանին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

«Հայկական ժամանակ». Ծառուկյանը Սերժ Սարգսյանին երգվել է փակել ԲՀԿ-ն

11.03.2015

«Հայկական ժամանակ» թերթը գրում է. «Երեկ քաղաքական շրջանակներում սկսեցին լուրեր շրջել թե ԲՀԿ նախկին նախագահ Գագիկ Ծառուկյանը Սերժ Սարգսյանին երգվել է, որ փակելու է «Բարգավաճ Հայաստան» կուսակցությունը: Ըստ այդ լուրերի՝ շատերը նրա հրահանգով են լքում ԲՀԿ-ն:

Երեկ ԲՀԿ-ից դուրս եկավ հերթական պատգամավորը՝ Արայիկ Աղաբաբյանը: ԲՀԿ նորընտիր նախագահ Նաիրա Չոհրաբեյանը մեր թղթակցին երեկ հայտնել է, որ առավոտյան, ժամը 8.30-ին խոսել է Արայիկ Աղաբաբյանի հետ, ով փտահեցրել է, որ չի լքելու կուսակցությունը: «Նա ինձ տղամարդավարի փտահեցրեց, որ մնալու է կուսակցությունում, եւ նրա փտահեցումից մեկ ժամ անց ես կալքերում կարդում եմ, որ նա դուրս է գալու կուսակցությունից: Տղամարդկության մասին մեկնաբանությունները թողնում եմ ձեզ»,- ասել է Նաիրա Չոհրաբեյանը:



Երեկ ԲՀԿ-ից դուրս գալու դիմում են գրել նաև Երեւանի ավագանու ԲՀԿ խմբակցության երկու անդամներ Արմեն Սահակյանը եւ Գրիգորի Գրիգորյանը: Մեր տեղեկություններով, առաջիկայում էլի ավագանիներ կլքեն ԲՀԿ-ն: ԲՀԿ-ն լրողները դա անում են Գագիկ Ծառուկյանի հրահանգով, ով շարունակում է նաև կուսակցության կառույցներից հետ պահանջել գրասենյակային գույքը»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Պուտինը ապրիլի 24-ին կլինի Երեւանում՝ Ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ

12.03.2015



ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը Հայաստան կգա՝ մասնակցելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումներին: Այս մասին AFP-ի հետ զրույցում նշել է ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը:

«Այո, նա կթռչի Երեւան», - հայտարարել է Պեսկովը՝ հավելելով, որ Պուտինն այդ հարցը քննարկելի է իր հայ գործընկեր Մերժ Մարգարյանի հետ՝ մարտի 12-ին տեղի ունեցած հեռախոսազրույցի ժամանակ:

Հիշեցնենք, որ ՀՀ նախագահ Մերժ Մարգարյանն այսօր՝ մարտի 12-ին, հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի հետ: Հեռախոսազրույցի ընթացքում երկու երկրների ղեկավարները համաձայնեցրել են իրենց առաջիկա հանդիպումների ծրագրերը՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի եւ Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 70-ամյակի կապակցությամբ անցկացվելիք միջոցառումներին համատեղ մասնակցության շրջանակներում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Սարսանգ. Լեռնային Ղարաբաղի թանկարժեք փիրուզը

13.03.2015

Մտեփանակերտից շուրջ 60 կմ դեպի հյուսիս տեղակայված են Արցախի Հանրապետությունում խոշորագույն՝ Սարսանգի ջրամբարն ու ՀԷԿ-ը, որն ապահովում է հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկի 60%-ը: Մայրաքաղաքից դեպի ջրամբար տանող երկու ճանապարհ կա: Կարճ ճանապարհը գյուղական է: Փոքր-ինչ երկար գնալու դեպքում կարելի է մայրուղով այնտեղ հասնել Մարտակերտով: Սակայն որ ճանապարհն էլ ընտրեք, լճի տեսարանի գեղեկությունը՝ խոշոր ավերակ եւ հրաշալի փիրուզագույն ջրերով, կստիպի մոռանալ ճանփորդության դժվարությունների մասին (Ֆոտոռեպորտաժ):




Սարսանգի ջրամբարը ոչ միայն հանրապետության տնտեսության կարևոր մասն է, ռազմավարական օբյեկտ, այլև հարեան Ադրբեջանի կողմից տարատեսակ հարձակումների եւ ապատեղեկատվության առարկա: Սարսանգի ՀԷԿ-ի, ԼՂՀ տնտեսությունում դրա դերի մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում պատմեց Սարսանգի ՀԷԿ-ի ղեկավար Գրիգոր Գրիգորյանը:



Սարսանգի ջրամբարի ամբարտակի շինարարությունը սկսվել է 1966 թվականին եւ շարունակվել մի ամբողջ 10 տարի՝ մինչև 1976 թվականը: Ամբարտակի բարձրությունը 120 մետր է, երկարությունը՝ 550 մետր, իսկ ստորին հատվածի լայնությունը՝ շուրջ 500 մետր: Ջրամբարի տարողությունը շուրջ 600 մլն խորանարդ մետր է, որից կարելի է օգտագործել մոտ 550 մլն խ.մ-ը, այսինքն՝ գրեթե 50 մլն-ը «մեռած ջուր է»:

«Նման ամբարտակներն աշխարհում շատ քիչ են, այդպիսիք հիմա պարզապես չեն կառուցում: Մեր ամբարտակի կառուցման ժամանակ բետոն չի օգտագործվել: ՀԷԿ-ը երկու միավորից է բաղկացած, յուրաքանչյուրը՝ 25 ՄգՎտ հզորությամբ: Կայանն աշխատում է արդեն 39 տարի, եւ շատ լավ վիճակում է՝ բարեխիղճ շահագործման եւ ժամանակին կատարվող վերանորոգման շնորհիվ», - նշեց ՀԷԿ-ի ղեկավարը: Ի դեպ, Գրիգոր Գրիգորյանը ՀԷԿ-ում աշխատում է 1986 թվականից: Աշխատել սկսել է որպես էլեկտրիկ, իսկ 2010 թվականից ղեկավարում է կայանը:



Նրա խոսքով, Արցախում կայանը հզորությամբ առաջին ՀԷԿ-ն է: Այն ապահովում է հանրապետության էլեկտրաէներգիայի պահանջարկի 40-ից մինչև 60%-ը, իսկ նոր ՀԷԿ-երի հետ միասին՝ 70%-ը:

«Հիմա ջրամբարում ջրի ամենացածր մակարդակն է: Ջուրը սեզոնային է օգտագործվում: Մարտից գետերի մակարդակը սկսում է բարձրանալ եւ, համապատասխանաբար, նաև ջրամբարի ջրի մակարդակը», - նշեց կայանի ղեկավարը:



Safavid Empire in Iran. Finally, we show that Armenians have higher genetic affinity to Neolithic Europeans than other present-day Near Easterners, and that 29% of the Armenian ancestry may originate from an ancestral population best represented by Neolithic Europeans.

Կանադայի կառավարության ներկայացուցիչներն ապրիլի 24-ին կայցելեն Երեւան

14.03.2015



Գրիգորյանը նաեւ հավելեց, որ հիմնանորոգման ժամանակ մասնագետներ են հրավիրում Հայաստանից, իսկ որպէս այդպիսին, կայանը դեռեւս խնդիրներ չի ունեցել:

Կայանի աշխատանքը սեզոնային է. ձմեռնը, երբ էլեկտրաէներգիայի սպառման ծավալներն անու՛մ են, ջրառը մեծանում է: Տարվա տարբերակներին ավելի քիչ էլեկտրաէներգիա է արտադրվում: Այդ առիթով էլ ոռոգման նպատակով Մարտանգից ջուր ստացող տարբերակներն կողմը, ամբարտակի «վթարայնություն» պատրվակով, անաստիճանափակ ջուր է պահանջում: Ոռոգման սեզոնը սկսվում է ապրիլին եւ ավարտվում օգոստոս-սեպտեմբերին: Ամռան շրջանում ջուրը հավաքվում է: Սակայն տարբերակներն կողմը, հարցը խաղաղությամբ եւ փոխադարձ համաձայնությամբ լուծելու փոխարեն, փորձում է շանտաժի ճանապարհով առաջ գնալ: Մի քանի տարի առաջ ԼՂՀ փոխարհայտեո Արթուր Աղաբեկյանը դիմել է տարբերակների կողմին՝ առաջարկելով համաձայնության գալ Մարտանգի ջրամբարի ջուրը համատեղ օգտագործելու շուրջ: Բայց՝ ապարդյուն: Արդեւ՛հասկանալի կողմն այնքան է քաղաքականացնում հարցը, որ տարածաշրջանային այցելից մեկի ժամանակ Մի՛նսկի խմբի համանախագահները նաեւ ջրամբար այցելելու ցանկություն են հայտնել: Ամեն դեպքում, ջրամբարի հուսալիության մասին է խոսում նաեւ այն հանգամանքը, որ ջրամբարի մերձակայքում մի քանի դարաբաշտան գյուղ կա, երկու ՀԷԿ Մատաղիտում, ինչպէս նաեւ բավական մեծ միջոցներ են ներդրվում ենթակառուցվածքների զարգացման համար:

Չրուցեց՝ Մարիամ Լեւինան Լուրեր Հայաստանից - NEWS.am

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման հանձնաժողովը Կանադայում մի շարք միջոցառումներ կանցկացնի ինչպէս մինչեւ ապրիլի 24-ը, այնպէս էլ դրանից հետո: Այս մասին NEWS.am-ի թղթակցին հայտնեց Կանադայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Ռուբեն Կոյունջյանը:

Նրա խոսքով՝ հանձնախումբը միջոցառումների ուղղությամբ աշխատում է արդեն երկու տարի: Դրանց շրջանակում տարբեր քաղաքներում կկայանան գիտաժողովներ, որոնց կմասնակցեն հայտնի փորձագետներ Հենրի Թերիոլը եւ Ջեֆրի Ռոբերտսոնը: Կկազմակերպվեն նաեւ մշակութային միջոցառումներ, մասնավորապէս, տեղի կունենա Պետրոս Ծուցունյանի Հայկական սիմֆոնիայի արեմիերան: Ապրիլի 24-ին Կանադայի մայրաքաղաք Օտտավայում կկազմակերպվի հիշատակի երթ, եւս 3 երթ էլ տեղի կունենա Կանադայի այլ քաղաքներում, որոնց կմասնակցեն տեղական եւ դաշնային իշխանությունների ներկայացուցիչները:

«Կանադայի կառավարության բարձրաստիճան ներկայացուցիչներն ապրիլի 24-ին ներկա կլինեն Երեւանում կազմակերպվող միջոցառումներին, սակայն անուններ դեռեւս չեն կարող նշել», - ասաց Կոյունջյանը:

Կանադայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրենը վստահ է, որ Թուրքիայի վրա Արեւմուտքի գործադրած ճնշումը կարող է ստիպել այդ երկրին փոխել Հայոց ցեղասպանության հարցում դիրքորոշումը: «Միջազգային հարթակներում այս հարցում Թուրքիային մեկուսացնելը կդառնա այն շարժիչ ուժը, որը Թուրքիային կդրդի ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Երբ մենք հասնենք պաշտոնական ճանաչման, պետք է դիմենք ցեղասպանություն հանցագործության նախագրուչացման եւ պատժի Կոնվենցիային, որպէսզի գործ ունենանք այնպիսի նուրբ հարցերի հետ, ինչպիսիք են փոխհատուցումն ու հաշտեցումը», - հավելեց նա:

Լուրեր Հայաստանից - NEWS.am



Genetic evidence for an origin of the Armenians from Bronze Age mixing of multiple populations

Marc Haber, Massimo Mezzavilla, Yali Xue, David Comas, Paolo Gasparini, Pierre Zalloua, Chris Tyler-Smith

doi: <http://dx.doi.org/10.1101/015396>

Abstract

The Armenians are a culturally isolated population who historically inhabited a region in the Near East bounded by the Mediterranean and Black seas and the Caucasus, but remain underrepresented in genetic studies and have a complex history including a major geographic displacement during World War One. Here, we analyse genome-wide variation in 173 Armenians and compare them to 78 other worldwide populations. We find that Armenians form a distinctive cluster linking the Near East, Europe, and the Caucasus. We show that Armenian diversity can be explained by several mixtures of Eurasian populations that occurred between ~3,000 and ~2,000 BCE, a period characterized by major population migrations after the domestication of the horse, appearance of chariots, and the rise of advanced civilizations in the Near East. However, genetic signals of population mixture cease after ~1,200 BCE when Bronze Age civilizations in the Eastern Mediterranean world suddenly and violently collapsed. Armenians have since remained isolated and genetic structure within the population developed ~500 years ago when Armenia was divided between the Ottomans and the

Իտալացի քաղաքական գործիչը՝ Թուրքիայի հյուպատոսին. Սկսեք ճանաչել ճշմարտությունը

14.03.2015

Իտալիայի Լոմբարդիայի շրջանային խորհրդի նախագահ Ռաֆայել Կատանեոն հանդիպել է Միլանում Թուրքիայի գլխավոր հյուպատոս Ալլըն Սեքիզբոքի հետ: Այս մասին հայտնում է Lombardia Quotidiano-ն:

Հյուպատոսը խնդրել է քննարկումից առաջ եւս մեկ անգամ խորհել Շրջանային խորհրդի անդամ Ստեֆանո Բրունո Գալլիի՝ «Հայոց ցեղասպանության հիշատակի միջոցառումների մասին» նախագծի շուրջ, որը շրջանային կառավարությանը կոչ է անում աջակցել Յեղասպանության հիշատակին նվիրված միջոցառումներին եւ քայլեր ձեռնարկել՝ ստիպելու համար Թուրքիային ճանաչել Յեղասպանությունը՝ որպէս Եվրամիությանն անդամակցելու պարտադիր պայման:



«Սկսեք ճանաչել ճշմարտությունը: Դա այն կայծն է, որից կսկսվեն ամոռջ քննարկումները մեր խորհրդում: Երկխոսությունը, խաղաղությունն ու տարբեր ազգերի հանդեպ փոխադարձ հարգանքը մեր աշխատանքի սկզբունքներն են, որոնք հարգում են մեր բոլոր անդամ խմբակցությունները»,- հայտարարել է Լոմբարդիայի շրջանային խորհրդի նախագահ Կատանենոն: Իր հերթին հյուպատոսը ներկայացրել է «Ցեղասպանություն» եզրի վերաբերյալ Թուրքիայի տեսակետը: Թուրքական կողմը կիսում է կատարվածի ցավը, եւ այդ մասին խոսվել է Թուրքիայի կառավարությունում: «Թուրքիան կարող է բացել իր դռները հայերի առջև»,- նշել է հյուպատոսը: «1915թ. ողբերգությունը խոր հետք է թողել 20-րդ դարի պատմության մեջ: Հայ ժողովրդի եւ նմանօրինակ այլ ողբերգությունները պետք է դիտարկել ոչ միայն իրավունքի, այլև պատմական ճշմարտության տեսանկյունից»,- հայտարարել է նախագծի հեղինակ Գալլին:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Սոցիալ-դեմոկրատ հնչական կուսակցությունը նշեց իր կազմավորման 128- ամյակը

14.03.2015



Սոցիալ-դեմոկրատ հնչական կուսակցությունն այսօր՝ մարտի 14-ին, նշեց իր հիմնադրման 128-րդ ամյակը: Կառավարության նիստերի դահլիճում կազմակերպված միջոցառմանը ելույթ ունեցան Ռուկան արքեպիսկոպոս Գալփակյանը, «Մարգիս Տիտունի» ուսանողական երիտասարդական միության անդամները եւ ՍԴՀԿ Հայաստանի վարչության ատենապետ Նարեկ Գալստյանը: Միջոցառման մեկնարկին հնչեցին ՀՀ եւ ՍԴՀԿ օրհներգերը: «Մարգիս Տիտունի» ուսանողական-երիտասարդական միության վարչության անդամ Վարազդատ Փանոյանն իր ելույթում անդրադարձավ երիտասարդության խնդիրներին՝ մասնավորապես գործազրկությանը, խոսեց նաեւ 2015թ. հայերի միասնականության կարեւորության մասին: «Երիտասարդներին պետք է ապահովել աշխատանքով, պետք է քաջակերել, ոգևորել, որ իրենց ուժն ու եռանդը դնեն երկրի կայացման եւ ամրապնդման մեջ, որ մեր մնան, ապրեն մեր երկրում, սիրեն մեր երկիրը: Մեր միությունը վճռական է տրամադրված, մենք լինում ենք այնտեղ, որտեղ խախտվում են երիտասարդների իրավունքները եւ պայքարում ենք դրանց վերականգնման համար»,- իր ելույթում ասաց Վարազդատ Փանոյանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Նյու Յորքում մեկնարկել է «Պատասխանատվություն 2015» միջազգային կոֆերանսը

14.03.2015

Նյու Յորքում մարտի 13-ին բացվել է «Պատասխանատվություն 2015» միջազգային կոնֆերանսը՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին: Այս մասին ասված է Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի Twitter-ի էջում: «Պատասխանատվություն 2015» (Responsibility 2015) կոնֆերանսի առաջին օրը իրավագիտության պրոֆեսոր Հանիբալ Թրեվիսը, բանախոս Ջեֆրի Ռոբերթսոնը եւ դոկտոր Անդրանիկ Գասպարյանը քննարկել են 100 տարի շարունակ մարդու իրավունքների ոտնահարումները՝ շեշտադրումը դնելով Հայոց ցեղասպանության արդար դատի վրա: Իր ելույթում բանախոս Ջեֆրի Ռոբերթսոնը դատապարտել է Հայոց ցեղասպանության հարցում ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի խուսափողական դիրքորոշումը: «Ցեղասպանության եզրափակիչ փուլը դրա ժխտումն է: Հայոց ցեղասպանության սպիները թարմ կմնան այնքան ժամանակ, քանի դեռ Թուրքիան հստակ չի ճանաչել այն եւ չի հատուցել վնասը»,- նշել է իրավաբանը: Ինչ վերաբերում է Ցեղասպանության հետեւանքների փոխհատուցմանը, ապա Ռոբերթսոնի կարծիքով՝ ամեն բան պետք է դրվի սեղանին՝ անհրաժեշտ հետազոտություններով եւ գործը ավարտին հասցնելու նպատակով համապատասխան գործունեությամբ: Ինչպես ավելի վաղ հայտնել էր NEWS.am-ը, մարտի 13-15-ը Նյու Յորքում առաջատար պատմաբանների, իրավաբանների, քաղաքական գործիչների եւ դերասանների մասնակցությամբ քննարկում է Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված «Պատասխանատվություն 2015» եռօրյա միջազգային կոնֆերանսը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Ռիգայում Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցահանդես է բացվել

14.03.2015



Լատվիայի Ազգային գրադարանում մարտի 13-ին բացվել է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված ցուցահանդես, որի նմուշները տրամադրվել են Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի կողմից: Ցուցահանդեսի բացմանը ներկա են եղել ՀՀ ԱԺ փոխնախագահ, Հայաստան-Լատվիա, Լիտվա, Էստոնիա պատգամավորական բարեկամության խմբի ղեկավար Էդուարդ Շարմազանովը, Բալթյան երկրներում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արա Այվազյանը, Բալթյան երկրներում Հայ առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ տեր Խոսրով քահանա Ստեփանյանը, Լատվիայի Սաեմայի քարտուղար Անդրեյ Կլեմենտեյը, Լատվիա-Հայաստան բարեկամության խմբի անդամ Իվան Կլեմենտեյը, Լատվիա-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար Սերգեյ Պոստալկինը, հայկական, հրեական, ռուսական եւ բելառուսական համայնքի ներկայացուցիչներ:

Յուզահանդեսի բացմանը աջակցել է Նոր Նախիջևանի եւ Ռուսաստանի թեմի Բայթյան երկրների հոգևոր հովիվ տեր Խոսրով քահանա Ստեփանյանը:

Յուզահանդեսի բացմանը երույթներով հանդես են եկել Աժ փոխնախագահ Էդուարդ Շարմազանովը, Բայթյան երկրներում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Արա Այվազյանը, Բայթյան երկրներում Հայ առաքելական եկեղեցու հոգևոր հովիվ տեր Խոսրով քահանա Ստեփանյանը, Լատվիա-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար Սերգեյ Պոտապկինը:

Բանախոսները մասնավորապես նշել են, որ Ռիգայում Հայոց ցեղասպանությանը նվիրված ցուցահանդեսի բացումը կարևոր քայլ է մարդու իրավունքների պաշտպանության գործում: Նրանք ընդգծել են, որ Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի մեծագույն հանցագործություններից մեկն է:

Լատվիա-Հայաստան բարեկամության խմբի ղեկավար Սերգեյ Պոտապկինը նշել է, որ քանի դեռ Հայոց ցեղասպանությունը չի դատապարտվել, չի կարելի բացառել հետագայում նման հանցագործությունների կրկնությունը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Հանձնաժողովը 2 ամսից կներկայացնի ՀՀ զինանշանի փոփոխված տարբերակը

16.03.2015



Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին օրենքը թերի է, նրանում գերբրի լիարժեք նկարագրություն չկա: Այս մասին այսօր՝ մարտի 16-ին, լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ պետական խորհրդանիշների՝ մասնավորապես գերբի վրա որոշակի փոփոխություններ, շտկումներ անելու նպատակով վերջերս ստեղծված մասնագիտական հանձնաժողովի անդամ, մշակութաբան Գագիկ Մանասյանը՝ նշելով, որ դրա պատճառը մեր երկրում գերբագիտության խորհուրդի բացակայությունն է:

«Այն գերբը, որն ընդունվել էր 2006թ. ճշտգրտումներից հետո, վերափոխվել է, հայտնվել են այլ նշաններ, և, ըստ երևույթին, այդ գերբերը մեծ հումոր ունեցող մարդիկ, կամ մեր թշնամիներն են տարածել: Գերբագիտության օրենքներով անընդունելի է, երբ առյուծի բերանը փակ է լինում: Մեր գերբի վրա պատկերված առյուծի և արծվի բերանները փակ են, իսկ դա նշանակում է, որ առյուծը անպաշտպան է, մեռած է, ընդունակ չէ ինքնապաշտպանության: Գերբի սուրը կտրված է, գտնվում է շղթաների մեջ, ինչը բովանդակային, գաղափարական իմաստով անթույլատրելի է: Ներքևում կա ժապավեն, որի վրա ոչինչ գրված չի, դա պետք է կամ հանել, կամ վրան գրել պետության կարգախոսը»,- ասաց Գագիկ Մանասյանը:

Հանձնաժողովի անդամները նախատեսում են 1-2 ամսից ներկայացնել զինանշանի փոփոխված տարբերակը:

Նշենք, որ Հայաստանի Հանրապետության ներկայիս զինանշանը ստեղծվել է ՀՀ առաջին հանրապետության զինանշանի օրինակով, որի հեղինակներն էին ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանն ու նկարիչ Հակոբ Առջունյանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Բանաստեղծ Հովհաննես Ղազարյանը վատահեցնում է՝ իրենք

16.03.2015



ՀԳՄ անդամ, բանաստեղծ Հովհաննես Ղազարյանը պնդում է, որ Աբովյանի նախկին ջերմատնային տնտեսության սեփականատեր Արտաշես Սարգսյանի կինը՝ Մանուշակ Սարգսյանը ստում է՝ ասելով, թե Ղազարյանները սեփականություն ունեն եւ բացի Առինջ գյուղում գտնվող տարածքից, որ իր ամուսինն է նրանց ժամանակավորապես տրամադրել, ապրելու այլ վայր ունեն:

Նշենք, որ Մանուշակ Սարգսյանը բողոքում է, որ Ղազարյանները 2013թ.՝ իր ամուսնու մահվանից 10 օր անց, առանց իրեն տեղյակ պահելու գրացվել են իրենց պատկանող այն տարածքում, որը 2001թ. իր ամուսինը խղճալով բանաստեղծի ընտանիքին, ժամանակավորապես ապրելու համար տվել է նրանց: Հովհաննես Ղազարյանը կնոջ այս պնդումը նույնպես սուտ է որակում:

«Իմ ընտանիքի անդամները, ինչպես որ Մանուշակ Սարգսյանը պնդում է, այդ տարածքի վրա չեն գրանցվել: Ընդամենը Առինջի գյուղապետը հասցե է բացել և մեզ բողոքիս հաշվառել է, որի շնորհիվ մենք նպաստ ենք ստանում»,- NEWS.am-ին ասաց Հովհաննես Ղազարյանը, որի ընտանիքում 14 անդամ կա՝ այդ թվում վեց անչափահաս, մեկ հաշմանդամ:

Նշենք, որ Մանուշակ Սարգսյանը մեզ հետ զրույցում ասել էր, որ ինքն է Ղազարյանների փոխարեն կոմունալ վճարումները կատարում: Բանաստեղծի խոսքով, սակայն, հայտարարությունն իրականությանը չի համապատասխանում, իրենք հենց Մանուշակի որդուն են փոխանցում գումարը, քանի որ ֆինանսական վիճակի պատճառով ի վիճակի չեն ամեն ամիս հասնել Աբովյան քաղաք:

«Ամեն ամիս նրանք Աբովյանից գալիս և վերցնում են մեր տան կոմունալ վարձերի գումարը և տանում վճարում: Տիկին Սարգսյանը, եթե ուզում է դատարան տալ, թող տա, ես արդար եմ, աշխատել ենք և այս կիսաքանդ տարածքը ինքներս շենացրել: Կինս ու երեխաներս տարիներ շարունակ աշխատել են, կովերին են նայել և մեր աշխատանքի արդյունքը իրենց ենք տվել, մեր աշխատանքը կերել»,- ասաց Ղազարյանը, որի ընտանիքից Մանուշակ Սարգսյանը պահանջում է ազատել տարածքը:

Հիշեցնենք, որ Աբովյանի նախկին ջերմատնային տնտեսության սեփականատեր Արտաշես Սարգսյանի այրին՝ Մանուշակ Սարգսյանը, NEWS.am-ի հետ զրույցում վստահեցրել էր, որ իր ամուսինն այդ տարածքը Ղազարյաններին չի նվիրել՝ նշելով, որ իր ասածն ապացուցող փաստաթուղթ ունի:

Հիշեցնենք, որ բանաստեղծ Հովհաննես Ղազարյանն ահազանգել էր, որ ընտանիքի 14 անդամներով, այդ թվում՝ վեց անչափահաս թոռներով, հաշմանդամ որդով ու հիվանդ տիկնոջով հայտնվել է դրսում, քանի որ Առինջ գյուղում գտնվող տարածքը 2001 թվականին անհատույց հիմունքներով բանաստեղծին տրամադրած՝ Աբովյանի նախկին ջերմատնային տնտեսության սեփականատեր Արտաշես Սարգսյանի կինը՝ Մանուշակ Սարգսյանը, ամուսնու մահվանից հետո պահանջում է լքել տունը, որտեղ նրանք բնակվել են 2001թ. մինչև օրս:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

«Հրապարակ». Ապրիլի 10-13-ին Հայաստան են ժամանելու թուրք քրիստոնյաներ

17.03.2015



«Հրապարակ» թերթը գրում է. «Մեր տեղեկություններով, ապրիլի 10-13-ը Հայաստան են ժամանելու թուրք քրիստոնյաներ, որոնք Ստամբուլում եւ այլ քաղաքներում գործող բողոքական եկեղեցու ներկայացուցիչներ են: Նրանք գալիս են իրենց ազգի անունից ներողություն խնդրելու հայ ժողովրդից 15 թվին կատարվածի համար, նպաստելու ատելության կամուրջներն այրելուն եւ համատեղ աղոթք անելու:

Ի դեպ, Ցեղասպանության 100-ամյակի պետական հանձնաժողովում Հայ առաքելական եկեղեցու ներկայացուցիչների, կաթողիկոսների կողքին ներառված է նաև բողոքական եկեղեցու՝ հայ ավետարանական եկեղեցիների համաշխարհային խորհրդի նախագահը՝ որպես կրոնական հանդուրժողականության «ակտ»:

Առավել մանրամասն թերթի այսօրվա համարում
Լուրեր Հայաստանից - NEWS.am

Չեխ պատգամավոր. Ճիշտ բառ օգտագործեք՝ Հայոց ցեղասպանություն
17.03.2015



Հարկավոր է ճիշտ բառեր օգտագործել, եւ Հայոց ցեղասպանությունն իր անունով կոչել: Այս մասին մարտի 17-ին Երևանում Եվրանեսթի Խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստի ժամանակ հայտարարեց Չեխիայից Եվրախորհրդարանի պատգամավոր Յարոմիր Շտեփինան:

Նա նշեց, որ վերջերս Ռուսադոյում է եղել, որտեղ մարդկության դեմ իրագործված հանցագործության ճանաչման հրամայականն առավել սուր է զգացվում: Շտեփինան նաև հավելեց, որ Ռուսադոյում ցեղասպանությանը կամ Հոլոքոստին մեկ հայացք նետելն անգամ բավարար է՝ հասկանալու համար, թե որքան անհրաժեշտ է անհապաղ ճանաչել Հայոց ցեղասպանությունը: «Եթե ցանկանում ենք ապագայում կանխել ցեղասպանություններն ու էթնիկ գառնները, ապա եկեք ճիշտ բառեր օգտագործենք. Հայոց ցեղասպանությունը ցեղասպանություն է եղել», - ամփոփեց չեխ պատգամավորը:

Եվրախորհրդարանի փոխնախագահը Ցեղասպանության մասին խոսել է հայերեն

17.03.2015



Եվրախորհրդարանի փոխնախագահն իր ելույթի ընթացքում հայերենով է խոսել՝ անդրադառնալով Հայոց ցեղասպանությանը: Հայերենով մի քանի արտահայտություն Ռիչարդ Չարնեցկին արել է Երևանում, մարտի 17-ին Եվրանեսթի խորհրդարանական վեհաժողովի լիագումար նիստում:

Նա նշել է, թե Երևանում լիագումար նիստի անցկացումը շոշափելի իրադարձություն է Հայաստանի եւ Եվրամիության դինամիկ զարգացող հարաբերություններում, եւ շնորհակալություն է հայտնել Հայաստանի խորհրդարանից հյուրընկալության համար: Այս նա ելույթը շարունակել է հայերեն: «Շնորհակալություն» բառից հետո նա ասել է. «Մենք գտնվում ենք մի երկրում, որն ունի երկար պատմություն եւ մեծ մշակութային ժառանգություն: Մենք ողջունում ենք հպարտ հայ ազգը եւ հիշում Ձեր ողբերգության 100-րդ տարելիցի մասին», - ասել է նա:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

ԱՄՆ Կոնգրեսի 40 անդամներ ներկայացրել են Հայոց ցեղասպանության մասին բանաձեւը

18.03.2015



ԱՄՆ Կոնգրեսի ավելի քան 40 անդամներ ներկայացրել են Հայոց ցեղասպանության հանդեպ ճշմարտության եւ արդարության մասին բանաձեւը, հաղորդում է «Asbarez»-ը:

Ներկայացման ժամանակ ելույթ են ունեցել կոնգրեսականներ Ռոբերտ Դոլդը, Ադամ Շիֆը, Դեյվիդ Վալադառն, Ֆրենկ Փալոնը եւ հայ համայնքի ներկայացուցիչներ:

Փաստաթուղթը ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային կոչ է անում ջանքեր գործադրել հայ-թուրքական կառուցողական, արդար, եւ տեւական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: Այդ հարաբերությունները պետք է հիմնված լինեն Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստերի եւ դրանց հետեւանքների լիակատար ճանաչման վրա: Բանաձեւը պետք է նաև հաստատի այս միջազգային հանցագործության արդար եւ համապարփակ փաստերի արձանագրումը:

Ռոբերտ Դոլդի խոսքով, Հայոց ցեղասպանության ժխտումը խափանում է տեւական խաղաղության եւ անվտանգության հասնելու հիմքերը՝ սպազա չարագործություններն ավելի հավանական դարձնելով:

Իր հերթին կոնգրեսական Ադամ Շիֆը հայտարարել է, թե 100-րդ տարելիցին Կոնգրեսի անդամներն ու նախագահը հնարավորություն եւ պարտավորություն ունեն հստակ ազդակ

ուղարկել, որ«մենք երբեք չենք մոռանա գոհվածների մասին, եւ մարդկության դեմ այդ հանցագործությունը կանվանենք ինչպես կա, ցեղասպանություն»:
Կոնգրեսական Ֆրենկ Փայոնը եւս ընդգծել է, թե հասել է ժամանակը, որ ԱՄՆ կառավարությունը ճանաչի ցեղասպանությունը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Քրդստան պետությունը 15-20 տարի հետո կճանաչվի դե յուրե. Արա Պապյան

18.03.2015



Արևմտյան Հայաստանի տարածքում 15-20 տարի հետո Քրդստան պետությունը կճանաչվի դե յուրե: Այս մասին, այսօր՝ մարտի 18-ին, լրագրողներին ասաց «Մոդուս վիվենդի» կենտրոնի նախագահ, քաղաքագետ Արա Պապյանը՝ ընդգծելով, որ քրդական պետությունը դե ֆակտո արդեն գոյություն ունի:

«Հայոց պետականության շահերի համար կարևոր հարց է, թե Քրդստանի ստեղծման դեպքում այն ինչ ընդգրկում կունենա, արդյոք մեր անվտանգությունը կթուլացնի, թե հակառակը: Սևրի պայմանագրի 60-րդ հոդվածով հստակորեն ասվում է, որ Քրդստանի հյուսիսային սահմանը Հայաստանի հարավային սահմանն է՝ Վանա լճից հարավ ընկած տարածքը: Այժմ Արևմտյան Հայաստանում 6.5 միլիոն մարդ կա, ովքեր խոսում են քրդերեն, այդ պատճառով էլ քրդերն այժմ մեծ հավակնություններ ունեն Արևմտյան Հայաստանի նկատմամբ, այս տեսանկյունից, պետք է հասկանալ, թե Քրդստան պետությունն ինչ ընդգրկում կունենա»,- ասաց Արա Պապյանը:

Արա Պապյանի խոսքով՝ քրդերը թուրքերի հետ հավասար հայերին կոտորելով շահեցին ստեղծված իրավիճակում եւ այժմ կարող են խոսել Քրդստան պետություն ստեղծելու մասին:

«Քրդստանի ստեղծման հիմքում ցեղասպանությունն էր: Քրդերը եղել են հայերին կոտորողները, նրանք շահել են Հայոց ցեղասպանությունից՝ ձեռք բերելով հայերի ունեցվածքը: Հենց այդ ժամանակահատվածում էր, որ քրդերը տիրացան հայ երեխաներին ու կանանց»,- ասաց Պապյանը՝ ընդգծելով, որ քրդերից շատերն այժմ բացահայտում են իրենց հայկական ինքնությունը:

Ազնավուրը մտադիր է Վատիկանում համերգ տալ Յեղասպանության 100-րդ տարելիցի առիթով

18.03.2015

Ֆրանսահայ հանրահայտ շնտեսն Ծառլ Ազնավուրը մտադիր է Վատիկանում համերգ կազմակերպել՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության գոհերի: Այս մասին գրում է KAI գործակալությունը:

Զորեքշաբթի Ազնավուրը Վատիկանում մասնակցելու է Ֆրանցիսկոս I-ի ընդունելությանը եւ պատրաստվում է Հռոմի Պապի հետ խոսել համերգի մասին:

Ըստ ՌԻԱ Նովոստիի, Պապի մերձավոր շրջանակի աղբյուրները նշել են, որ Հռոմի Պապը շատ լավ ծանոթ է Ազնավուրի ստեղծագործությունների եւ յուրմ է աշխարհի ամենահայտնի հայերից մեկի երգերը:



Ծառլ Ազնավուրը (Ծահնուր Վաղինակ Ազնավուրյան) անցյալ տարի նշեց ծննդյան 90-ամյակը: Երաժշտական քննադատները մինչև հիմա բարձր են գնահատում նրա ձայնային տվյալները, ինչը շանտյեյին թույլ է տալիս համերգներով հանդես գալ եւ նոր սպավառակներ ձայնագրել:
Ապրիլի 12-ին Հռոմի Պապը Սուրբ Պետրոսի տաճարում Պատարագ է մատուցելու 1915 թվականին սկսված Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակին:

Գարեգին Բ. Տարելիցի միջոցառումներին հրավիրել ենք մահմեդական հոգևորականների

19.03.2015



Հայաստանը մահմեդական հոգևոր առաջնորդներին հրավիրել է՝ մասնակցելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին: Այս մասին մարտի 19-ին «Արարատի ստորոտին» միջազգային մեդիաֆորումի շրջանակում Հայաստանում գտնվող տարբեր երկրների լրագրողների հետ Էջմիածնում հանդիպման ժամանակ ռուսաստանցի լրագրողի հարցին ի պատասխան՝ նշեց Ամենայն հայոց Գարեգին Բ կաթողիկոսը:

«Մենք հրավիրել ենք, մասնավորապես, արաբական երկրների մահմեդական հոգևոր առաջնորդներին, որտեղ բազմաթիվ հայեր են ապաստանել»,- հայտարարեց Գարեգին Բ-ն:

Նա հավելեց, որ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումներին հրավիրվել են նաեւ Իրանի Իսլամական Հանրապետության հոգևոր առաջնորդներ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Գարեգին Բ. Թուրքիայի կողմից Յեղասպանության ճանաչմանը պետք է փոխհատուցում հետևի

19.03.2015

Եթե Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը, բնականաբար, ուրախ կլինենք, բայց ճանաչմանը պետք է հետևի արժանի փոխհատուցումը: Այս մասին մարտի 19-ին «Արարատի ստորոտին» միջազգային մեդիաֆորումի շրջանակում Հայաստանում գտնվող տարբեր երկրների լրագրողների հետ

Էջմիածնում հանդիպման ժամանակ հայտարարեց Ամենայն Հայոց Գարեգին Երկրորդ Կաթողիկոսը:

Անդրադառնալով ռումինացի լրագրող Կատալինա Սավայի հարցին, թե Կաթողիկոսն ինչ կոչ կուղղեր Հայոց ցեղասպանությունը չճանաչած երկրներին (այդ թվում՝ Ռումինիային), Գարեգին Երկրորդը պատասխանեց. «Աշխարհի բոլոր երկրները պետք է ավելի քարձր կանգնեն սեփական շահերից, ճանաչեն ու դատապարտեն Հայոց ցեղասպանությունը: Անտարբերությունն ու ժխտումը կհանգեցնեն նման հանցագործությունների կրկնությանը»:

Կաթողիկոսը՝ Թուրքիայի մասին. Ներումը տրվում է նրան, ով գիտակցում է իր մեղքը

19.03.2015



Ներումը տրվում է նրան, ով գիտակցում է իր մեղքը: Այդ մասին հայտարարել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն՝ «Արարատի ստորոտին» միջազգային մեդիահամաժողովի մասնակիցների հետ հանդիպմանը:

Պատասխանելով Քուվեյթից ժամանած լրագրողի հարցին, թե ինչու նոր էջ չի սկսվում Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ, հաշվի առնելով, որ Քրիստոսը ներում էր քարոզում, Գարեգին Բ-ն ասել է. «Այո, Քրիստոսը ներում էր քարոզում: Բայց անգամ Տեր Աստված ի վիճակի չէ ներել նրան, ով չի գիտակցում իր մեղքը»:

Կաթողիկոս. Մինչ Ցեղասպանությունը Թուրքիայում հազարից ավելի հայկական եկեղեցի կար

19.03.2015

Մինչ Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում հազարից ավելի հայկական եկեղեցի, 90 թեմ եւ ավելի քան 5 հազար հոգևորական է եղել: Այդ մասին հայտարարել է Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն՝ «Արարատի ստորոտին» միջազգային մեդիահամաժողովի մասնակիցների հետ հանդիպմանը:

Կաթողիկոսի խոսքով, այսօր Թուրքիայում 40-ից ոչ ավելի հայկական եկեղեցիներ կան՝ հոգևորականների սահմանափակ թվով:

Ըստ Գարեգին Բ-ի՝ թուրքական իշխանությունները իրավաբանորեն չեն ճանաչում հայկական թեմը, բայց ընդունում են նրա փաստացի գոյությունը:

Թուրքիան ստիպված է լինելու ընդունել Հայոց ցեղասպանությունը. թուրք լրագրող

19.03.2015



Թուրքական Marksist.org կայքի լրագրող Աթիլա Դիրմը հերթական հրապարակման մեջ անդրադարձել է Հայոց

ցեղասպանության թեմային եւ պնդել, թե Թուրքիան ի վերջո ստիպված է լինելու ընդունել Հայոց ցեղասպանությունը:

Թուրք լրագրողը, անդրադառնալով այս տարի Չանաքալեի միջոցառումներն ավելի ակտիվ իրականացնելու թուրքական իշխանությունների նախաձեռնություններին, նշել է, թե դա ունի երկու պատճառ՝ ազգայնականության թույնն ավելի շատ լցնել աշխատավորների եւ հայաձայների երակները եւ ամենակարևորը՝ ստվերել Հայոց ցեղասպանության 100-րդ տարեկիցը:

«Հայոց ցեղասպանությունը Թուրքիայի պատմության առանցքային քարն է: Երբ այդ քարը հանվի, ստերի հիման վրա կառուցված հսկա պատմություն կող պատր վիվելու է եւ ցեղասպանություններով սնվող Թուրքիայի հանրապետության տիգերը մնալու են իրենց ստերի տակ: Այդ տիգերն այս ամենը լավ գիտեն, դրա համար էլ սովորաբար մարտի 18-ին նշվող Չանաքալեի միջոցառումներն այս տարի ապրիլի 24-ին են նշելու՝ իրենց ամբողջ աշխարհի առաջ գցելով թշվառ ու ծիծաղելի վիճակում:

Բայց այդ ամբողջ ջանքերն ապարդյուն են: Ինչքան էլ իրենք աշխարհում խայտառակվելու գնով վորձեն պատեպատ տալ, ապրիլի 24-ը Հայոց ցեղասպանության օր ճանաչող երկրների շարքն ավելանում է:

Թուրքիան ի վերջո մի կողմ է նետելու ստերը եւ առերեսվելու է պատմության հետ: Թուրքիան ստիպված է լինելու ապրիլի 24-ն ընդունել Հայոց ցեղասպանության օր, իսկ Չանաքալեի ճակատամարտը ոչ թե հաղթանակ, այլ աղետ:

Մեր ձեռքում է Թուրքիայի հանրապետությանն այդ անխուսափելի վերջին մոտեցնել: Մենք պետք է ոչ միայն ապրիլի 24-ին, այլ միշտ խոսենք Հայոց ցեղասպանության իրականությունից: Եթե մարդկանց հասկացնենք, որ դա ճիշտն է, մեր մեջքին գանվող խղճի բեռից ավելի շուտ կզատվենք»,-գրել է Աթիլա Դիրմը:

Արցախի ԱԺ ընտրություններին առաջադրվել է յոթ կուսակցություն

19.03.2015



Մարտի 19-ի ժամը 18.00-ին ավարտվել է ԼՂՀ Ազգային ժողովի 2015թ. մայիսի 3-ի հերթական ընտրությանը մասնակցելու համար կուսակցությունների ընտրական ցուցակների եւ քաղաքացիների առաջադրման ժամկետը:

ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից հայտնում են, թե համամասնական ընտրակարգով թեկնածուների ընտրական ցուցակներ ԼՂՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացրել 7 կուսակցություններ՝ Կոմունիստական, Շարժում-88 եւ Ազգային վերածնունդ կուսակցությունները՝ ընտրական ցուցակներում 14-ական, Արցախի ժողովրդավարական կուսակցությունը՝ 35, Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը՝ 34, Ազատ Հայրենիք կուսակցությունը՝ 50, Խաղաղություն եւ զարգացում կուսակցությունը՝ 6 թեկնածուների ընդգրկմամբ:

ԼՂՀ տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից տրամադրված նախնական տեղեկությունների համաձայն՝ հանրապետության բոլոր ընտրատարածքներում ընդհանուր

ամամբ մեծամասնական ընտրակարգով առաջադրվել են 50 քաղաքացիներ, ընդ որում՝ նրանցից 27-ն ինքնաառաջադրման ձևով: 3 թեկնածու առաջադրել է Հայ Յեղափոխական Դաշնակցություն կուսակցությունը, 4-ական թեկնածուներ՝ Ազատ Հայրենիք և Արցախի ժողովրդավարական կուսակցությունները, 5-ը՝ Ազգային վերածնունդ կուսակցությունը, 7-ը Շարժում-88 կուսակցությունը:

Մեծամասնական ընտրակարգով առաջադրված քաղաքացիներից 34-ն անկուսակցական են: Առաջադրումների մասին մանրամասն տվյալները կհրատարակվեն վաղը՝ մարտի 20-ին:

Մահացել է Հայաստանի ՆԳ նախկին նախարար Վլադիմիր Դարբինյանը

19.03.2015



Կյանքից հեռացավ Հայաստանի ներքին գործերի նախկին նախարար Վլադիմիր Դարբինյանը:

Ծնվել է 1931 թվականին, Իջևանի շրջանի Աչաջուր գյուղում: Ոստիկանության մամուլի ծառայության տարածած հաղորդագրությունում ասվում է. «Երեւանի պետական համալսարանի պատմության, այնուհետև՝ իրավաբանական ֆակուլտետներն ավարտելուց հետո անցել է կուսակցական աշխատանքի:

1969 թվականից մինչև 1975 թվականը Վլադիմիր Դարբինյանը Հայաստանի ներքին գործերի նախարարն էր:

Ներքին գործերի նախարարության եւ նրա ստորաբաժանումների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝ նրա պաշտոնավարության տարիներին մի շարք կարեւորագույն խնդիրներ լուծվեցին, մասնավորապես՝ կադրային, նյութատեխնիկական բազայի եւ համակարգի աշխատողների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման բնագավառներում: Չզայի աշխատանք կատարվեց ներքին գործերի շրջանային բաժինները եւ նախարարության վարչությունները տեխնիկական միջոցներով հագեցնելու ուղղությամբ: Մշտապես ուշադրության կենտրոնում էր հանցագործությունների կանխարգելման, հասարակական կարգի պահպանման խնդիրը:

Հետագայում Վլադիմիր Դարբինյանը մի շարք պատասխանատու պաշտոններ վարեց՝ արդարադատության նախարարի տեղակալ, հանրապետության իրավաբանների միության նախագահ, Մարդարապատի հուշահամալիրի գլխավոր տնօրեն:

Բարձր պատասխանատվության, կատարողական կարգապահության, հաջողությունների վկայությունը շքանշաններն ու բազմաթիվ մեդալներն են, որոնց արժանացել է աշխատանքային գործունեության ընթացքում:

Պետական մտածողությամբ քաղաքացու, օրինակելի մարդու, լավ ընկերոջ հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների սրտերում»:

Լուս Անջելեսում «Հայոց ցեղասպանության հիշատակի հրապարակ» է բացվել

21.03.2015

Լուս Անջելեսի քաղաքային խորհուրդը միաձայն սատարել է Փոքր Հայաստան թաղամասի հրապարակներից մեկը «Հայոց ցեղասպանության հիշատակի հրապարակ» կոչելու առաջարկը: Այս մասին գրում է «[Asbarez](#)» պարբերականը: Ավելի

վաղ [NEWS.am](#)-ը տեղեկացրել էր, որ նման նախաձեռնությամբ հանդես է եկել քաղաքային խորհրդի անդամ Միթչ ՕՖարերը:



Նրա խոսքով, այդպիսով իրենք հնարավորություն ունեն հարգել Օսմանյան Թուրքիայում զոհված 1.5 մլն հայերի հիշատակը, եւ բոլոր նրանց, ովքեր բազմիցս ճնշվել են իրենց բնակության վայրերում:

Մահացել է հայտնի դերասան Կարեն Չանիրեկյանը

22.03.2015



Այսօր՝ մարտի 22-ին, մահացել է հայ ժողովրդական արտիստ Կարեն Չանիրեկյանը:

Նա ծնվել է 1937 թ հուլիսի 1-ին, Երեւանում: 1966 թ ավարտել է Երեւանի գեղարվեստա-թատերական ինստիտուտը: 1966-67 թթ աշխատել է Թբիլիսիի հայկական դրամատիկական թատրոնում, 1967-69 թթ՝ Երեւանի Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում:

Կարեն Չանիրեկյանը նկարահանվել է ավելի քան 50 ֆիլմերում՝ «Հատուկ հանձնարարություն», «Սովի ժամանակներից», «Չախչախ թագավորը», «Մորզանի խնամին», «Քառս», «Աշխատանք», «Արեւիկ», «Խոշոր շահում», «Մեզանից երեքը», «Դեմքով պատին», «Արյուն», «Անկեր Փանջունի», «Լարիբիթոս», «Երեւան ջան», «Լուվեմբեր», «Արահետ», «Անառակ որդու վերադարձը» եւ այլ ֆիլմերում:

1970-ականներին բազմաթիվ դերերով հանդես է եկել հեռուստաթատրոնում:

Կարեն Չանիրեկյանն արժանացել է բազմաթիվ մրցանակների, պատվոգրերի, պետական կոչումների, այդ թվում ՀՀ Սովետ Խորենացու մեդալի: 2004 թ. արժանացել է ՀՀ վաստակավոր, 2010 թ՝ ժողովրդական արտիստի կոչմանը:

Լույս են տեսել «Հայոց ցեղասպանության պատկերային նկարները»

24.03.2015

Հայ ազգային ինստիտուտը (ՀԱԻ՝ Armenian National Institute (ANI)), Ամերիկայում Հայոց Յեղասպանության թանգարանը (AGMA) եւ Ամերիկայի հայկական համագումարը (Համագումար) հայտարարել են թվով 4-րդ՝ «Հայոց ցեղասպանության

պատկերային նկարներ» թվային ցուցահանդեսի մեկնարկը: Վերջինս համախմբում է միասնական հավաքածուի հիմնական պատկերները, որոնք արձանագրում են Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի հանդեպ դաժան վերաբերմունքը եւ նրանց պատմական համայնքների լիակատար ոչնչացումը: Ցուցահանդեսը նախատեսված է ծառայելու որպես դուրամատչելի կրթական գործիք, որը կարող է ցուցադրվել լսարանում թվային կամ տպագիր ձեւաչափով:



Հայոց ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ անգին լուսանկարներ են ոչնչացվել պատերազմի տարիներին եւ այն, ինչ այսօր մնացել է, ցրված է ամբողջ մայրցամաքներով: Հաշվի առնելով, թե ինչքան լուսանկարներ են կորել, սրանք նույնպես վերապրածների շարքում են. նրանք սպասում էին հարմար պահի՝ վկայելու ականատես եղած իրադարձությունների մասին:

Այժմ այս ցրված նկարները հավաքվում են պատմողական ցուցահանդեսում, որը վերականգնում է Հայոց Ցեղասպանության բազմաթիվ դրվագներ: Դրանք միասին վերստեղծում են երիտթուրքերի վարչակարգի կողմից իրականացրած անարեւելյան զգացումը եւ բացահայտում ունեցվածքի զրկման չափն ու հայ ժողովրդի՝ իր պատմական հայրենիքում ոչնչացումը: Լուսանկարները հավաքվել են բազմաթիվ պահոցներից, աղբյուրներից եւ անհատներից, ներառյալ՝ Միացյալ Նահանգների Ազգային արխիվները, Կոնգրեսի գրադարանը, Մերձավոր Արեւելք հիմնադրամը, Օբերլին քոլեջի արխիվը, Մինեսոտա համալսարանի գրադարանը, Կալիֆոռնիայի պետական համալսարանի (Ֆրենզո) Հայագիտական ծրագիրը, Հայաստանի Հանրապետության Ազգային արխիվը, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտը, ՀԲԸՄ Նուբարյան գրադարանը, Ամերիկայի հայկական համագումարը, Հայազգային ինստիտուտի հավաքածուները, Մաուրիս Բելեյանը, եւ «Նեյշնլ Զեդգրաֆիկ» հանդեսի լուսանկարիչ Ալեքսանդրա Ավագյանը:

«Ցուցահանդեսը ստեղծում է Հայոց ցեղասպանության ամբողջ ընթացքի համայնապատկերային տեսարանը: Ցեղասպանության այն բոլոր արտահայտումները, որոնք լուսանկարական արձանագրությունը ցուցադրում է, քայլ առ քայլ ընդգրկում են տեղահանությունները, մահապատիժները, կոտորածները, սպանությունները, սովը, ոչնչացումն ու ավերումը»,-հաղորդեց Հայ ազգային ինստիտուտի տնօրեն Ռուբեն Աղայանը:

Շարունակելով իր խոսքը՝ Ռուբեն Աղայանը նշեց. ««Հայոց ցեղասպանության պատկերային նկարներ» ցուցահանդեսը՝ բոլոր 100 խորհրդանշական պատկերների եւ քարտեզի հետ միասին, ցույց է տալիս երիտթուրքերի՝ հայ ժողովրդին ոչնչացնելու ծրագրի մասշտաբը, միաժամանակ վերականգնելով կոտորածի, տեղահանության բազմաթիվ արտահայտումներն ու հարատև հետևանքները, եւ հայերի արտորդը»:

Նա նաև ավելացրեց. «Հավաքելով եւ դասակարգելով այս հիմնական լուսանկարները՝ վերականգնվում է Հայոց ցեղասպանության համապարփակ պատկերը, որը դասավանդողներին կծառայի որպես մարդու իրավունքների եւ նրանց՝ մի ամբողջ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության տեսքով կիրառված բռնության հետևանքների ուսուցման կառուցողական ուղեցույց»:

Հայ ազգային ինստիտուտի նախագահ Վան Գրիգորյանը հայտարարեց. «Ցուցահանդեսը ստեղծվել է պատվելու Միացյալ Նահանգների դիվանագիտության ծառայության այն օրինակելի

գործիչներին, որոնց բարեխիղճ գեկույցները հանդիսանում են Հայոց ցեղասպանության սարսափելի իրադարձությունների մշտական վկայությունը: Նրանց թվում են՝ Հակոբյան ԱՄՆ հյուպատոս Ջեյ Ջեքսոնը, Խարբերդում ԱՄՆ հյուպատոս Լեայի Դեյսիլը, եւ Կ. Պոլիսում գլխավոր հյուպատոս Գարրիել Ռավինդալը, գործերի հավատարմատար Փիլիպ Հոֆմանը, դեսպալաններ Աբրահամ Էլկուսը եւ Հենրի Մորգենթաուսը»:

«Հայոց ցեղասպանության պատկերային նկարներ» ցուցահանդեսը օնլայն ցուցադրությունների թվով 4-րդն է, որը համատեղ ստեղծվել է Հայ ազգային ինստիտուտի (ՀԱԻ՝ Armenian National Institute (ANI)), Ամերիկայում Հայոց Ցեղասպանության թանգարանի (AGMA) եւ Ամերիկայի հայկական համագումարի (Համագումար) կողմից եւ անվճար է՝ ամբողջ աշխարհում տարածելու համար:

1997թ. հիմնված՝ Հայ ազգային ինստիտուտը Վաշինգտոնում տեղակայված կրթական բարեգործական կազմակերպություն է, եւ կոչված է Հայոց ցեղասպանության ուսումնասիրմանն ու ճանաչմանը: Հայ ազգային ինստիտուտը 501(c)(3) կարգավիճակով հարկերից ազատված անդամակցական կազմակերպություն է:

ՀՅԴ մի խումբ անդամներ միացել են «Հիմնադիր խորհրդարանին» հայտարարություն

24.03.2015



ՀՅԴ մի խումբ անդամներ հանդես են եկել հայտարարությամբ, որով միացել են «Հիմնադիր խորհրդարանին»: Այս մասին հաղորդագրություն է տարածել «Հիմնադիր խորհրդարանը»:

Հայտարարությունում ասվում է. «Մենք՝ ՀՅԴ Արագածոտնի մարզի «Աշոտ Դուլյան» կոմիտեի անդամ Մարգիս Մեդրակյանը, «Նաիրի» կոմիտեի անդամ Վիկտոր Դավթյանը, Արցախի կառույցի «Արթուր Մկրտչյան» կոմիտեի անդամներ Մարինե Մանուկյանը եւ Թորոս Թորոսյանը, Տարիներ շարունակ ականատես լինելով ՀՅԴ-ի ղեկավարության ապագային գործունեությանը, որի ամենագագարելի դրսեւորումը դավանան է հանցագործ ռեժիմի հետ գործակցությունն է, ինչպես նաեւ համոզվելով, որ այդպիսի ղեկավարության պայմաններում ՀՅԴ-ի փրկությունն այլեւս անհույս է, հայտարարում ենք այդ կուսակցությանը մեր անդամությունը դադարեցնելու մասին եւ հետեւելով ՀՅԴ Լոռու մարզի կոմիտեի եւ Արցախի կառույցի մեր ընկերների օրինակին՝ միանում ենք ազգային-ազատագրական շարժման դրոշ պարզած Հիմնադիր խորհրդարանին:

24 մարտի 2015 թ.

ՀՅԴ նախկին անդամներ

1. Մարգիս Մեդրակյան
2. Վիկտոր Դավթյան
3. Մարինե Մանուկյան
4. Թորոս Թորոսյան

Լուրեր Հայաստանից - NEWS.am

ԼԳՎ ԱԺ խմբակցությունների հայտարարությունը՝ Շուշիի ջարդերի 95-րդ տարելիցի առթիվ

25.03.2015

Շուշի քաղաքում հայկական ջարդերի 95-րդ տարելիցի կապակցությամբ 95 տարի առաջ այս օրերին Օսմանյան Թուրքիայի՝ Անդրկովկաս ներխուժած էքսպեդիցիոն կորպուսի կանոնավոր զորամասերը,

նենգորեն խախտելով նախկին Ռուսական կայսրության Ելիզավետպոլի եւ Բարվի նահանգներում իր իսկ կողմից հաստատած Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության մուսավաթական կառավարության եւ ինքնորոշված Արցախի Ազգային խորհրդի միջև ձեռք բերված ժամանակավոր համաձայնագիրը եւ հրահրելով տեղի մուսուլմանական բնակչության վերնախավի մոլեռանդ հայատյացությունը՝ հարձակվեցին Շուշի քաղաքի հայկական թաղամասերի վրա:



Սլանվեց, անհայտ կորավ շուրջ 30 հազար հայ, փրկվածները ցրվեցին աշխարհով մեկ: Ավերվեցին եւ կողոպտվեցին հայերին պատկանող գույքը, բոլոր բնակելի շինությունները, վարչական, կրթական, մշակութային եւ հոգեւոր հաստատությունները: Մեծագույն այդ ոճրագործությունը ծրագրվել եւ իրականացվել է Արցախի վարչական, տնտեսական, քաղաքական եւ մշակութային կենտրոնը կործանելու, հինավուրց հայոց քաղաքի էթնիկ պատկերը փոխելու, արցախահայությանը ինքնորոշման իրավունքը իրականացնելու հնարավորությունից զրկելու նպատակով:

Հատկանշական է, որ Շուշիի փաստացի ավերումը տեղի է ունեցել այդ դեպքերից ընդամենը հինգ տարի առաջ Արեւմտյան Հայաստանում սկիզբ առած ու դեռ շարունակվող մեկ այլ եղերական իրադարձության՝ Հայոց ցեղասպանության դեպքերի խորապատկերի վրա, որի հանդեպ միջազգային հանրության անտարբերությունը նոր ոճիրների առիթ դարձավ:

Վերահաստատելով Արցախի ժողովրդի վճռականությունը՝ զարգացնելու իր անկախ պետությունը՝ հանուն սերունդների բարօրության եւ ազգամիջյան համերաշխության, մենք՝

- դատապարտում ենք 1920թ. մարտի 21-26-ի Շուշի քաղաքի հայկական ջարդերը, դրանք որակում որպես Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ցեղասպանության, հայության հայրենազրկման քաղաքականության շարունակությունը,
- միջազգային հանրության ուշադրություն ենք հրավիրում այն իրողության վրա, որ խորհրդային Ադրբեջանի գոյության 70 տարիների ընթացքում Շուշին հետեւողականորեն վերածվել էր ադրբեջանական անհանդուրժողականության եւ հայատյացության կենտրոնի,
- փաստում ենք 1992թ. մայիսին՝ Շուշիի ազատագրման ռազմագործողության անխուսափելիությունը եւ նրա բացառապես հումանիտար բնույթը, որով կանխվել է Ստեփանակերտի 50 հազար բնակչության դաժան ոչնչացումը կատարյալ շրջափակման հետեւանքով սպառնացող սովի, համաճարակի եւ մշտական հրթիռահրետակոծության միջոցով,
- կոչ ենք անում Ադրբեջանին՝ առերեսվել սեփական անցյալին, դադարեցնել հայատյացությունը եւ ձեռնամուխ լինել Արցախի հետ իրավահավասար հարաբերությունների հաստատմանը՝ ի շահ տարածաշրջանային խաղաղության եւ կայունության:

ԼՂՀ Ազգային ժողովի՝
 «Դաշնակցություն»
 «Ժողովրդավարություն»
 «Հայրենիք» խմբակցություններ եւ
 «Արցախատուն» պատգամավորական խումբ

Հայտարարությանը միացել է նաեւ ԱԺ պատգամավոր Վիտայի Բալասանյանը:

100 տարի անց շատ բան է անվերադարձ կորել. հարցազրույց Ամատունի Վիրաբյանի հետ

26.03.2015



NEWS.am-ը հարցազրույց է ունեցել ՀՀ ՏԿԱԻՆ Ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանի հետ:

Ի՞նչ դժվարությունների է բախվում այսօր Հայաստանի Ազգային արխիվը: Ենթադրում եմ, խնդիրներ կան արխիվային փաստաթղթերի թվայնացման հետ:

Ես դա խնդիր չեի անվանի: Մինչ օրս մենք փաստաթղթերը թվայնացնում էինք երկու հատուկ սրաներների միջոցով, սակայն ամենայն հավանականությամբ շուտով կունենանք եւս 2-ը, այնպես որ կարելի է ասել՝ խնդիր լուծված է: Իհարկե սուտ կլինի, եթե ասեմ, որ մենք կարճ ժամանակահատվածում կարող ենք թվայնացնել բոլոր 300 մլն փաստաթղթերը: 2 սրաներով մենք տարեկան թվայնացնում ենք 200 հազար փաստաթուղթ: Ամբողջական թվայնացման համար մի քանի տարի կպահանջվի: Սակայն առաջին հերթին մենք թվայնացնում ենք այն փաստաթղթերը, որոնք պահանջարկ են վայելում: Միաժամանակ կան փաստաթղթեր, որոնց հանդեպ ոչ մի հետաքրքրություն չկա, սակայն կարող է առաջանալ հետազայում գիտության զարգացման հետ մեկտեղ:

Ասացե՛ք, Օսմանյան Թուրքիայում Հայոց ցեղասպանության մասին քանի՞ փաստաթուղթ է թվայնացվել:

Ցեղասպանությանը վերաբերող բոլոր նյութերը ոչ միայն թվայնացվել են, այլև դրանց մեծ մասը հրապարակվել է, իսկ վերջին տարիներին լույս է տեսել դրանց եռահատոր հրատակությունը: Ավելին՝ դրանք արդեն թարգմանվել են անգլերեն, ռուսերեն եւ թուրքերեն: Այս պահին աշխատում ենք իսպաներեն հրատարակության ուղղությամբ: Պլանավորվում է թարգմանել նաեւ ֆրանսերեն: Յուրաքանչյուր լեզվով գրքերը լույս են տեսել 1000 տպաքանակով:

Ո՞վ է ֆինանսավորում այդ նախաձեռնությունը:

Բյուջեից ոչ մի կոպեկ չի ծախսվել դրա համար: Հիմնական ֆինանսավորումն իրենց վրա են վերցրել բարեգործները, մասնավորապես Գազիկ Մելիքյանը, Խորեն Բոթանջյանը, Լիպարիտ Պետրոսյանը, Ռուբեն Ղալայանը եւ այլք: Ծախսերի մի մասը հոգացել է Ազգային արխիվը:

Եկեք մի փոքր խոսենք գրքից: Ինչի՞ մասին է այն:

Եռահատոր աշխատությունը կոչվում է «Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում»: Նրա հիմնական արժեքն այն է, որ գրքում ներկայացված են հրաշքով փրկված հայերի վկայությունները: Իրենց պատմություններից բացի, նրանք պատմել են՝ որտեղ են ապրել, ինչով են զբաղվել, ոնց են սկսվել

ջարդերը, ովքեր էին մասնակցում դրանց եւ ինչպես է նրանց հաջողվել փրկվել:

Այսպիսով, մենք առաջին անգամ փորձ ենք ձեռնարկել ներկայացնել առանձին մարդկանց ճակատագրերը՝ նրանց ապրումներով եւ ողբերգական կորուստներով:

Չի կարելի ասել, թե նախկինում նման հրապարակումներ չեն եղել, սակայն մեր պատմաբանները, հատկապես Խորհրդային Հայաստանի պատմաբանները շեշտադրումը դնում էին հարցի քաղաքական կողմի վրա, իսկ մարդն իր տառապանքով դուրս էր մնում տեսադաշտից:

Երբ մենք ասում ենք «կոտորվեց 1.5 մլն հայ», դա վերջին հաշվով չոր վիճակագրություն է:

Ինչպես Գուր ճեղքից, Ցեղասպանությանը զոհ գնաց 1.5 մլն հայ: Մենք անուններ ունենք:

Ցավոք, այս ուղղությամբ ոչ մի աշխատանք նախկինում չի տարվել: Այսօր մեր շուրջ 10 աշխատակիցներ զբաղվում են այդ հարցով: Նրանք ուսումնասիրում են արխիվային փաստաթղթերը: Հավաքված ամբողջ տեղեկությունը պահվում է էլեկտրոնային տեսքով: Ցավոք, արդեն 100 տարի է անցել, եւ շատ բան անվերադարձ կորած է:

Օրինակ՝ հրեաները Հոլոքոստի զոհերի մասին տեղեկություններ սկսեցին հավաքել արդեն 1945թ. եւ այդ պատճառով նրանք ունեն 3 մլն լուսանկար եւ գրեթե բոլոր 6 մլն զոհված հայրենակիցների անունները: Եթե մենք այսօր նույն բանն անենք, ապա լավագույն դեպքում կարող ենք հավաքել 1000 լուսանկար:

Մակայն պատճառը միայն այն չէ, որ մենք ուշ ենք հիշել: Չէ՛ որ եղել են գյուղեր, որտեղ բոլորը զոհվել են, եւ հետեւաբար չի եղել գոնե մեկ փրկված, ումից հնարավոր կլինեք տեղեկություններ ստանալ համագյուղացիների մասին: Մենք, հիմնվելով 1912թ. մարդահամարի տվյալների վրա, միայն կարող ենք ասել, որ Թուրքիայի այսինչ գյուղում ապրում էր այսքան հայ:

Ինչպես է լուծվում Ցեղասպանության զոհերի ժառանգների ունեցվածքի վերադարձի հարցը:

Ունեցվածքի հարցը բարձրացնում է կոնկրետ անձը: Մենք տեղեկություններ ունենք 29 300 մարդու սեփականության մասին: Նրանք կարող են զայ մեզ մոտ այդ տեղեկությունների հետեւից եւ հետո դիմել դատարան: Հիմնականում մեր տեղեկություններն այն հայերի մասին են, որոնք Թուրքիայից անմիջապես փախել են Արեւելյան Հայաստան:

Արտասահմանյան արխիվներում կա՞ն մեզ համար կարելու փաստաթղթեր, որոնք մինչ օրս գաղտնագերծված չեն:

Եվրոպայում չգաղտնագերծված արխիվներ չկան: Պետք է ասեմ, որ Թուրքիան ինքն էլ հսկայական արխիվային համալիր է կառուցել: Եվ եթե 5 տարի առաջ ուսումնասիրողների հանդեպ վերաբերմունքը բավական բացասական էր, ապա այսօր յուրաքանչյուր այցելու, անկախ ազգային պատկանելիությունից, կարող է լուսանկարել հազարավոր փաստաթղթեր: Դրանով Անկարան աշխարհին ցանկանում է ցույց տալ, որ ավելի լիբերալ է դարձել, եւ այնտեղ որոշ փոփոխություններ իրականում կան:

Մակայն հիմնական խնդիրն այն է, որ ռազմական արխիվները փակ են, ընդ որում անգամ Թուրքիայի քաղաքացիների համար: Իսկ այնտեղ պահվում են Օսմանյան Թուրքիայի գործունեության մասին նյութեր, որոնք մեզ համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Օսմանյան Թուրքիայի մասին ամենաշատ փաստաթղթերը պահվում են Ստամբուլում, Կահիրեում եւ Բուլղարիայում: Բուլղարիայում կա Թուրքիայի 16-19-րդ դարերի պատմությանը վերաբերող շուրջ 3 մլն փաստաթուղթ, որոնց ուսումնասիրությունը շատ կարելու է, քանի որ նրանց միջոցով հնարավոր է հետեւել հայերի պարբերական ջարդերի քաղաքականությունը:

Ի՞նչ է մեզ խանգարում ուսումնասիրել այդ արխիվները:

Մենք մասնագետներ չունենք: Ցավոք, այդ բոլոր փաստաթղթերը գրվել են օսմաներեն: Դա թուրքերենը չէ, ինչպես շատերը թյուրիմացաբար կարծում են: Օսմաներենը 50 տոկոսով բաղկացած է պարսկերեն, 45 տոկոսով արաբերեն եւ միայն 5 տոկոսով թուրքերեն բառերից: Օսմաներեն իմանալու համար անհրաժեշտ է իմանալ պարսկերեն, արաբերեն եւ թուրքերեն: Իսկ նման մասնագետներ մենք չունենք:

Ամբողջ 60-70 միլիոնանոց Թուրքիայում միայն 300-500 մարդ գիտի օսմաներեն: Ոչ ավել: Պատճառներից մեկն այն է, որ Աթաթուրքի՝

իշխանության գալով արգելվեց օսմաներենը, իսկ մինչեւ 1922թ. բոլոր փաստաթղթերը կազմվում էին բացառապես այդ լեզվով:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Արեւմտյան Հայաստան

«Օսմանյան կայսրության անկումը» գրքում նաեւ Հայոց ցեղասպանության մասին բաժին կա

05.03.2015



Օքսֆորդի համալսարանի Մերձավորարեւելյան հետազոտությունների կենտրոնի տնօրեն Յուզին Ռոզանն իր «Օսմանյան կայսրության անկումը» գրքում, որը նվիրված է Առաջին աշխարհամարտին, «Հայերի ոչնչացումը» անվանումով բաժին է ներառել: Այս մասին գրում է «The Guardian»-ը:

«Պարբերականը գրում է. «Գրքում այդ բաժնի՝ «Հայերի ոչնչացումը» վերնագրի ընտրությունը չի ավելացնի թուրքերի շրջանում Ռոզաննի ընկերների թիվը, որոնք շարունակում են ժխտել Հայոց ցեղասպանությունը: Դրանում հստակ նկարագրվում է Թալեաթ փաշայի եւ նրա երկու խորհրդականների՝ դոկտոր Մեհմեթ Նազիմի եւ դոկտոր Բեհաեթդին Շաքիրի ծրագիրը, որը ենթադրում էր «օսմանյան հայերի մեծ մասի ոչնչացում» վստահ լինելու համար, որ մնացած հայերի թիվը բավարար չի լինի անկախ հայրենիք ունենալու նպատակով պայքարի համար»:

«The Guardian»-ը նաեւ հիշեցնում է, որ թուրք հեղինակները, այդ թվում՝ Նորելյան մրցանակակիր Օրիան Փամուրը, Հայոց ցեղասպանությունն ընդունելու համար մեղադրվել են պետական դավաճանության մեջ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Ստամբուլում հայկական հիվանդանոցի հիմքերն են զգվել

16.03.2015



Թուրքիայի ամենահին հիվանդանոցներից մեկի՝ Սուրբ Հակոբ հիվանդանոցի նոր շենքի հիմքերը գցվել են հատուկ միջոցառումով: Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Ստամբուլի Էյմադադում գտնվող և նախորդ տարի քանդված Սուրբ Հակոբ հիվանդանոցի նախկին շենքի տեղում կառուցվելիք նոր շենքի հիմքերի գցելու արարողությանը մասնակցել են Շիշլիի քաղաքապետ Հայրի Բոնույուն, Թուրքիայի կաթոլիկ հայերի հոգևոր առաջնորդ, արք. Լեւոն Չեքիայնը և հայ համայնքի այլ ներկայացուցիչներ:

Շիշլիի նախկին փոխքաղաքապետ Էմիր Սարըգյուլը անտեղի պատճառաբանություններով հրաժարվել էր թույլտվություն տալ նոր շենքի կառուցմանը, ինչի հետևանքով շինարարության սկիզբը հետաձգվեց 3 ամսով:

Սուրբ Հակոբ հիվանդանոցը հիմնադրվել է 1831-ի փետրվարի 8-ին: Հիվանդանոցի վերջին մասնաշենքը կառուցվել էր 1963-ին, իսկ արդեն 2014-ի մայիսին քանդվել է հին շենքերը և կազմվել նոր շենքի կառուցման նախագիծ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Պետությունն իմ որդու ձեռքը զենք է տվել և սպանել Դինքին. Սամաթի հայր

19.03.2015



Թուրքական պետությունն իմ որդու ձեռքին զենք է տվել և որդուս միջոցով սպանել Հրանտ Դինքին: Այս մասին հայտարարել է Դինքի սպանությունն իրականացրած Օզյուն Սամաթի հայրը՝ Ահմեդ Սամաթը:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոս»-ը, Օզյուն Սամաթի հայրը Թուրքիայի ՆԳ նախարարության կողմից իր դեմ ֆինանսական փոխհատուցման դատական հայցի հետ կապված հանդես է եկել պարզաբանող հայտարարությամբ՝ շեշտելով, թե «խորքային պետությունը» իր որդու միջոցով սպանել է Դինքին և որդուն մեղքի մեջ գցել: Սամաթի հայրը պնդել է, որ Դինքի ընտանիքից հետո այդ գործով ամենաշատ վնաս կրած մարդն ինքն է: Ահմեդ Սամաթը դատարանից խնդրել է մերժել ՆԳՆ-ի հայցն իր դեմ՝ նշելով, որ պետությունը չի կարողացել իր պարտականությունը կատարել և պաշտպանել Դինքի անվտանգությունը, ինչի հետևանքով որդուն դրդել են սպանել Դինքին: Նշենք, որ Դինքի ընտանիքը 2008-ին ընդդեմ ՆԳՆ-ի հայց էր ներկայացրել և պահանջել փոխհատուցում և 2012-ին դատարանը պարտադրել է ՆԳՆ-ին 1 մլն 659 հազար լիրա փոխհատուցում վճարել Դինքի ընտանիքին: ՆԳՆ-ն իր հերթին որոշել է հիշյալ գումարը կորզել Դինքի սպանության գործով անցնող մեղադրյալների ընտանիքներից:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Վանի Աղթամարում հայերը Ցեղասպանությունից 100 տարի անց կնշեն Սուրբ Զատիկը

20.03.2015

Հայոց ցեղասպանությունից 100 տարի անց հայաստանցի ուխտավորները հնարավորություն են ունենալու Սուրբ Զատիկը նշել Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցում: Այս մասին NEWS.am-ի թղթակցիցի հետ զրույցում ասաց «Նարեկավանք Տուր» ընկերության համահիմնադիր Արմեն Հովհաննիսյանը:

Արմեն Հովհաննիսյանի խոսքով՝ «Նարեկավանք Տուրը» Սուրբ Զատիկը Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում նշելու համար հատուկ ուխտագնացություն է կազմակերպում: «Ապրիլի 5-ին ապահովվու ենք հայերի ներկայությունը Վանի Աղթամար կղզում: Պատարագ չի լինելու, քանի որ Պոլստ հայոց պատրիարքարանը տարին մեկ անգամ է պատարագ մատուցում Սուրբ Խաչում՝ սեպտեմբերի 2-րդ կիրակի: Պատարագ չի լինելու, սակայն աղոթք լինելու է», - ասաց Արմեն Հովհաննիսյանը՝ շեշտելով, որ ապրիլին քիչ թվով հայեր են լինում Աղթամարում:



Նրա խոսքով՝ այդ ժամանակ Աղթամար կղզում կարելի է հիանալ ծաղկած նշենիններով և կղզու դիմաց դեռևս ձյունածածկ Տավրոսի լեռնաշղթայով:

Արմեն Հովհաննիսյանը հիշեցրեց, որ Սուրբ Զատիկին ուխտագնացություն են կազմակերպում նաև Իրանում գտնվող Սուրբ Թադեի և Սուրբ Ստեփանոս Նախավկայի եկեղեցիներ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Աղթամար կղզին և Վանի բերդը Նովրուզին Վան այցելած իրանցիների սիրած վայրերն են

25.03.2015

Թեև Նովրուզին Հայաստան այցելող իրանցիների թիվը նախորդ տարիների համեմատ նվազել է, Թուրքիա այցելող իրանցիների թիվը Նովրուզին կտրուկ ան է գրանցել:

Թուրքական Milliyet-ի փոխանցմամբ՝ Նովրուզին Վան այցելած իրանցիների շնորհիվ Վանի հյուրանոցների զբաղվածությունը հասել է ռեկորդային 100 տոկոսի:

Իրանցիները բացի առետուր անելուց, Վանում այցելում են նաև տեսարժան վայրեր: Վան այցելած իրանցիները մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Աղթամար կղզու և Վանի բերդի նկատմամբ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրք կուսակցապետը համաձայնվել է հայ կնոջը պատգամավոր դարձնել

21.03.2015



Թուրքիայի գլխավոր ընդդիմադիր «Ժողովրդա-հանրապետական» (CHP) կուսակցության առաջնորդ Քեմալ Զըրըչդարողուն դրական է արձագանքել ստամբուլահայ կնոջ ցանկությանը՝ իրենց կուսակցությունով դառնալ պատգամավոր:

Թուրքական Ensonhaber կայքի փոխանցմամբ՝ առաջին անգամ ազգային փոքրամասնություններից պատգամավորի թեկնածու

ներկայացնելու որոշում ընդունած «Ժողովրդա-հանրապետական» կուսակցությունը որոշել է հայ համայնքից կին թեկնածու առաջադրել:

Կուսակցության առաջնորդ Քեմալ Քըրքչարոլուն մոտ օրերս կհայտարարի, որ իրենց կուսակցության կողմից պատգամավորի թեկնածու է առաջադրում սրամբուլահայ Թալին Գազերին:

Թալին Էրզրունեշ Գազերը ծնվել է 1977-ին, Ստամբուլում: Սովորել է հայկական Մխիթարյան վարժարանում, որից հետո ուսումը շարունակել է Անադոլու համալսարանի տուրիզմի բաժնում: Ամուսնացած է եւ ունի մեկ երեխա:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Համշենահայի բողոքը Պոլստ հայոց փոխպատրիարքի դեմ. Մենք ո՛վ ենք

22.03.2015



Համշենահայ բողոքը Մահիր Օզքանը Պոլստ հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ արք. Արամ Աթեշյանի հայտարարության հետ կապված իր բողոքն է գրի առել թուրքական Ortakhaber կայքում: Akutq.net-ի թարգմանությամբ ներկայացնում ենք Մահիր Օզքանի հրապարակումը:

Փետրվարի 15-ին՝ կիրակի օրը, պատրիարքի փոխանորդ Արամ Աթեշյանը ելույթով է հանդես եկել Վարդանանց երգչախմբի հիմնադրման 83-րդ տարեիցի կապակցությամբ կազմակերպված միջոցառմանը: Նա իր խոսքում բարձրաձայնել է, թե ինչ է հասկանում՝ հայկական ինքնություն ասելով, եւ արտահայտել է նաեւ մուսուլմանացած հայերի վերաբերյալ իր տեսակետները: Որքանով որ հասկացել եմ՝ նա առավելապես նկատի է ունեցել Յեղսպանության ժամանակաշրջանում իսլամացած «թրից պրծածներին»: Սակայն մահմեդականացած հայերի հարցը միայն վերջին հարյուրամյակի խնդիր չէ: Սույն թեման անմիջականորեն առնչվում է նաեւ շատ ավելի վաղ ժամանակներից մուսուլման դարձած համշենցի հայերին:

Իսլամացած հայերի թեման՝ ընդհանրապես, իսկ մահմեդական համշենահայերինը՝ մասնավորապես, վերջին տարիներին սկսել է ավելի հաճախ օրակարգային լինել: Այդ քննարկումները լուրջ բանավեճերի եւ փնտրտուքների տեղիք են տալիս նաեւ համշենցիների շրջանում: Ամեն ոք վերաորդեգրում է իր դիրքորոշումն այդ հարցի նկատմամբ, ձգտում՝ համապատասխան կեցվածք ընդունել: Մյուս կողմից էլ թե պատմագիտական եւ թե մշակութային աշխատանքներ են տարվում՝ սույն հարցի ուղղությամբ: Հետաքրքրությունը մեծանում է համշենահայերենի հանդեպ: Հայոց լեզվի Համշենի բարբառով հրատարակման են ներկայացվում թե ժողովածուներ եւ թե հեղինակային ստեղծագործություններ: Կազմակերպվում են լեզվի, պարկապզուկի դասընթացներ, եւ այլ մշակութային աշխատանքներ տարվում:

Բնականաբար, նման աշխատանքները ստանում են նաեւ բացասական արձագանք, որը, ինչպես կարելի է ենթադրել, գալիս է թուրք-իսլամական եւ ազգայնամոլական շրջանակներից: Այդ հակազդեցություններում առավելապես առաջ քաշվող փաստարկն այն է, թե «Հայկական ինքնությունը կրոնական է, եւ քանի որ համշենցիները մուսուլման են, ապա անհնար է, որ նրանք կրեն այդ ինքնությունը»:

Սույն փաստարկը համեմվում է այն պնդմամբ, թե համշենցիները հայկականության հետ առնչվել են, երբ մի ժամանակ եղել են Հայ

եկեղեցու հետևորդ, սակայն դրանից առաջ նրանք թուրք են եղել: Այսինքն, նրանք մահմեդական դառնալուց հետո լրիվ հեռացել են արդեն իսկ կրոնական ինքնություն եղող հայությունից: Եվ քանի որ քրիստոնեությունից առաջ էլ թուրք են եղել, ապա այժմ շատ հանգիստ կերպով կարող են համարվել նման ազգայնամոլ շրջանակների համար այդքան ցանկալի թուրք-իսլամական ինքնության կրողներ:

Վերջին տարիներին սկսել են հայտնվել նաեւ ճշմարտությունից այն աստիճանի հեռու անձինք, ովքեր պնդում են, թե համշենցիները երբեք քրիստոնյա չեն եղել, նրանցից եւ ոչ մեկը մուսուլմանացած հայ չէ:

Ի վերջո, անկախ նրանից՝ կրոնական ինքնությունն անկեղծորեն համարում են ինքնությունը որոշող տարր, թե կրոնն են համարում Թուրքիայի հասարակության բոլոր ոչ թուրք եւ ոչ մահմեդական հպատակներին թուրքացնելու միջոց՝ հետեւանքը նույնն է մնում: Կրոնը էական գործառնություն է կատարում համշենցիների ուժացման հարցում: Իսկ այդ գործառնություն իրականացնելու առումով ամենաէական տարրն այն մտայնությունն է, թե «Մուսուլմանը չի կարող հայ լինել», մի ըմբռնում, որը թրթրությունը նույնացնում է մուսուլմանության, իսկ հայությունը՝ քրիստոնեության հետ:

Հիմա անդրադառնանք Աթեշյանի խոսքերին: Աթեշյանն ասում է. ««Իմ մեծ մայրը հայ է եղել»... Բո մեծ հայրն էլ մուսուլման էր: Ո՛րն արյունն ես կրում դու: Հայը կրոնից անբախտելի մի ամբողջություն է: Եթե ուզում ես հայ լինել, կգաս կմկրտվես, Հայոց եկեղեցու անդամը կդառնաս եւ միայն այն ժամանակ կասես՝ «Ես հայ եմ»... Մենք ումից ի՞նչ ենք պահանջում: Աշակերտներից մկրտության փաստաթուղթ ենք ուզում: Դեկավար խորհրդի անդամներից մկրտության փաստաթուղթ ենք պահանջում: Որտեղից ենք իմանում, թե ինչ է: Ասում է՝ «Հայ եմ», հայերեն է խոսում, հերիք է: Մեր կրոնն այդչափ էժանագին չպետք է լինի: Եթե մենք հայ ենք, քրիստոնյա ենք, ապա պետք է պահպանենք մեր կրոնն ու ինքնությունը: Տեր կանգնենք մեր բոլոր ազգային եւ կրոնական արժեքներին: Թե չէ՝ դատարկ խոսք է «Ես հայ եմ» ասելը»:

Մեկ առ մեկ անդրադառնանք նրա ասածներին: Աթեշյանն ասում է, որ եթե նախնիներից հայ եղողը կինն է, ապա տղամարդը մահմեդական է համարվում: Մի սխալ համեմատությունն էս: Հայկական ու մահմեդական ինքնությունները չեն կարող դեմ-հանդիման կիրառվել: Ինչպես որ կարող է լինել թուրք մուսուլման, թուրք քրիստոնյա, թուրք աթեիստ, այնպես էլ՝ հայ մուսուլման, հայ քրիստոնյա, հայ աթեիստ:

Հարցնում է Աթեշյանը՝ «Ո՛րն արյունն ես կրում դու»: Ես էլ Ձե՛զ եմ հարցնում, հարգելի Աթեշյան՝ ո՛ւմ հոգին եք կրում Դո՛ւք: Ո՛րն է արյան եւ ցեղի կապը: Մի՞թե միատարր ցեղ գոյություն ունի աշխարհի երեսին: Դրանք այլեւս չեն մնացել վաղեմի ժամանակներում: Համայն աշխարհում կատարված ԴՆԹ ուսումնասիրությունները բազմիցս ցույց չե՛ն տվել դա:

«Հայը կրոնից անբախտելի մի ամբողջություն է: Եթե ուզում ես հայ լինել, կգաս կմկրտվես, Հայոց եկեղեցու անդամը կդառնաս եւ միայն այն ժամանակ կասես՝ «Ես հայ եմ»,-ասում է Աթեշյանը: Խոսք, որին ի պատասխան՝ քիչ է մնում ասես. «Հրամանքդ, փաշա՛»: Ես ինքս տասնյակ աթեիստ հայերի եմ ճանաչում: Իսկ նրանց ինչ անենք: Ենթադրում են, որ այնքան փորձ ունեք, որ գիտակցեք, թե Ձեր եկեղեցու անդամ լինելը դեմ չի նշանակում հավատացյալ լինել: Հիմա այս ընկերները հայ չե՛ն համարվում: Եթե ոչ, ապա ի՞նչ են համարվում նրանք:

Բացի այդ՝ լա՛վ, ասենք թե՛՝ չգիտեմ քանի սերունդ առաջվա մեր պապերը բռնի մուսուլման են դարձել: Դրանից հետո մարդիկ սերունդներով կամավոր կերպով յուրացրել են մահմեդականությունը: Իսլամն այլեւս դարձել է այդ անձանց բնական կրոնը: Թեեւ բռնի իսլամացումը պատմական անարդարություն է, սակայն փաստ է նաեւ, որ այդ մարդիկ այլեւս անկեղծորեն մահմեդական են դարձել: Հարգելի՛ Աթեշյան, Ձեզ եւ թուրք-իսլամական անձանց հետեւյալ խորհուրդը կտամ. մարդկանց մուսուլմանության միջոցով թուրք, քրիստոնեության միջոցով էլ հայ համարել ձգտելու փոխարեն՝ հաշտվեք մահմեդական հայի գոյության հետ:

Պարոն Աթեշյան, եւ ժողովածու կազմելու աշխատանքներին ընթացքում թե համշենահայերեն խոսող համշենցիների եւ թե չխոսողների շրջանում որոշ աղոթքներ եմ արձանագրել: Այդ աղոթքները հայերեն են եւ բացարձակապես նման չեն մահմեդական աղոթքներին: Բոլորովին նման չեն նաեւ քրիստոնյա

այդոթներին: Դրանք, հավանաբար, քրիստոնեությունից էլ անգամ հին են և՛ հայոց լեզվով: Դրանք որոշված են հայրուրամյակները հաղթահարած և մեր օրեր հասած համշենցիների հիշողության մեջ: Նախաքրիստոնեական ժամանակաշրջանից եկող վարդավառի և խողոյի տոները դեռ նշվում են Համշենի որոշ յայլաներում: Մենք շարունակում ենք դագաղով թաղել մեր մեռելներին: Դեռ մոմ ենք վառում մեր անցավորների գերեզմանների մոտ:

Մեր հեքիաթները, դամբանականները, անեկոտները, խաղիկները, երգերն ու մեղեդիներն ունենք, որոնք կրում են վաղնջական ժամանակների հետքերը: Ժողովում ենք դրանք, փորձում՝ նորերը գրել: Դրանք գրանցվում են որպես նաև ներկայիս հայկական մշակույթը սնող և հարստացնող էլեմենտներ: Համշենցիներն իրենց լեզվով խոսողներին և չխոսողներին, քրիստոնյաներին, մուսուլմաններին վերաբերվում են որպես իրենց միավորողների և բազմաթիվ ընդհանուր արժեքներ ունեցողների:

Այո՛, մարդիկ փոխել են իրենց կրոնը, բայց պահել են իրենց ինքնության այլ բազում տարրեր: «Հայ եմ» ասելը, հայերեն խոսելը Ձեզ չի բավարարում՝ որքան հասկացա:

Շա՛տ լավ, այդ դեպքում եթե Ձեզ պատմեմ, թե իմ պատանեկության տարիներին ինչպես էր մայրս արձագանքում, երբ նրան ասում էի՝ «Մենք հայ ենք», թերեւս կըմբռնեք, թե ինչը նկատի ունեմ: Մայրս նման դեպքերում ասում էր. «Քե՛նա, էմեն դեղ էրմենիյիմ ասա ու քեզի գեղրին»: («Գնա, ամեն տեղ ասա, որ հայ ես, ու քեզ մորթեն»-Ավուրի խմբ.): Կամ էլ, գուցե այսպես պետք է գրեմ. «Գնա, ամեն տեղ էրմենիյիմ ըստ ու քեզի գղրին: Այսինքն, պարո՛ն Աթեշյան, այս երկրում «Ես հայ եմ» ասելը երբեք դատարկ բան չի եղել. հիմա՛ էլ է այդպես:

Երբ մենք վատ բաներից ենք խոսում, բղավում, վատ բաների վրա զարմանում, ասում ենք՝ «Մե՛ն Ասպա՛մ(Աստված-համշենահայերեն)»: Մայրս մի օր էլ, երբ երկնային պահպանության կարիքն ուներ, ասաց. «Ես երկնքի ճերմակ ասպա՛մ ունիմ»:

Հիմա Ձե՛զ եմ հարցնում, պարոն Աթեշյան. «Մե՛ն Ասպա՛մ, մեր վո՛վ իք(Մե՛ն Աստված, մենք ով ենք)»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Դերսիմի հայերի կարևոր հարցերից է, որ մոռացել են իրենց լեզուն. Սերքիան Սարիատաշ

24.03.2015



Դերսիմը եղել է հայերի առաջին բնակատեղիներից մեկը, որի մասին վկայում են Դերսիմում հազարավոր հայկական գերեզմաններն ու քանդված եկեղեցիները: Այս մասին այսօր՝ մարտի 24-ին, լրագրողներին ասաց ՀՀ սփյուռքի նախարարության և «Մոդուս Վիվենդի» կենտրոնի կազմակերպած «Հիշողության արթնացում» ծրագրի շրջանակում Հայաստան ժամանած Դերսիմի հայերի միության ներկայացուցիչ Միհրան Փրկիչը:

«Հայոց ցեղասպանությունը փաստող խոսուն ապացույցներ են Դերսիմում գտնվող գերեզմանները, որոնց վրա հայկական ամուսններ են գրված: Այսօր Դերսիմի հայերն արդեն չեն վախենում և խոստովանում են, որ իրենք հայեր են, և իրենց պապերին

սպանող թուրքերին ասում են, որ իրենց ընդունեն ու ճանաչեն որպես հայեր»,-ասաց Միհրան Փրկիչը:

Դերսիմի հայերի և պեւիների միությունների նախագահ Սերքիան Սարիատաշը տեղեկացրեց, որ ապրիլի 24-ին Դերսիմի Քայիջօղլու Յարմասե կոչվող անդունդի եզրին, որտեղից թուրքերը 1915թ. հայերին գցելով սպանել են հարզելու և Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը:

«Դերսիմի հայերի համար կարևոր հարցերից մեկն այն է, որ մոռացել են իրենց լեզուն: Այդ բացը լրացնելու համար մեր առաջին գործը եղել է դասընթացի կազմակերպումը: Հատկապես ապրիլ ամսին շատ միջոցառումներ են լինելու: Նկարահանել ենք նաև Հայոց ցեղասպանության մասին պատմող կարճամետրաժ ֆիլմ, որտեղ պատմվում է, թե ինչպես են թուրքերը այս անդունդից հայերին նետել: Մենք ուզում ենք, որ ամբողջ աշխարհը տեսնի ու իմանա Հայոց ցեղասպանության մասին և ճանաչի այն»,-ասաց Սարիատաշը:

Դերսիմի Կարաշա գյուղի գյուղապետ, ազգությամբ պեւի Էրոլ Սալտըլը նշեց, որ Թուրքիայի պետությունը պետք է ճանաչի Օսմանյան կայսրության կողմից 1915 թվականին իրականացված Հայոց ցեղասպանությունը. «Հայերի կոտորածի մասին պատմել է ինձ իմ հայրը: Նա ասում էր, որ Դերսիմի կոտորածների ժամանակ, երբ 9 տարեկան էր, մնացել է հայերի դիակների տակ և այդպիսով կենդանի մնացել»,-ասաց Սալտըլը:

Դերսիմի միությունների դաշնակցության ղեկավար Ահմեդ Բակըրն էլ ասաց, որ ««Հիշողության արթնացում» ծրագրի շրջանակներում իրենք որոշել են վերանորոգել Դերսիմի 162 հայկական եկեղեցիներից մեկը:

«Այսպիսով, փորձելու ենք վերակառուցել Դերսիմի պատմամշակութային հուշարձանները, որոնք վառ վկայություններն են այն բանի, որ այնտեղ ապրել են հայեր, որոնք սպանվել են թուրքերի կողմից»,-ասաց Բակըրսը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Հայկազուն Ավրոյան. Աթեշյանի հայտարարությունը լուրջ քաղաքական սխալ էր

26.03.2015



Հայ առաքելական եկեղեցու Պոպոս հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արքեպիսկոպոս Արամ Աթեշյանի հայտարարությունը, թե ապրիլի 23-ին Թուրքիայում հայկական եկեղեցիների զանգերը չեն դողանջի, վախկոտության դրսևորում է: Այս մասին մարտի 26-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց արեւմտահայերի խնդիրների ուսումնասիրման կենտրոնի ղեկավար Հայկազուն Ավրոյանը:

Նրա խոսքով՝ Դերսիմի հայերը պատրաստվում են նշել Հայոց ցեղասպանության 100-ամյակը: «Դրանք այն մարդիկ են, որոնց Աթեշյանը հայ չի համարում: Արամ Աթեշյանի հիշյալ հայտարարությունը լուրջ քաղաքական սխալ էր: Եվ դա այն դեպքում, երբ մեծ քանակությամբ թուրք մտավորականներ մտադիր են հարզել Հայոց ցեղասպանության հիշատակը հենց Թուրքիայում»,- հավելեց Ավրոյանը:

Հիշեցնենք, որ Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին 2-րդ բոլոր հայկական եկեղեցիներին հանձնարարել էր ապրիլի 23-ին կրոնի և հայրենիքի համար զոհվածների հիշատակի պատարագ մատուցել: Ապրիլի 23-ին ժամը 19:15 աշխարհի բոլոր հայկական եկեղեցիներում զանգերը 100 անգամ կողովանջեն: Սակայն Թուրքիան չի մասնակցի այդ միջոցառմանը:

Պոլսոյ հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արքեպիսկոպոս Արամ Աթեշչյանը հայտարարել էր, որ ապրիլի 24-ին միջոցառում կանցկացվի, սակայն ապրիլի 23-ին Թուրքիայի հայկական եկեղեցիների գանգերը չեն ղողանջի: Նա նաեւ հիշեցրել էր, որ ապրիլի 22-ին Ստամբուլի հայկական եկեղեցիներում կկայանա Գալիպոլի ճակատամարտի զոհերի հիշատակին նվիրված հոգեհանգստի արարողություն:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Համընդհանուր ինքնության հարցը համընդհանուր մտավորականի մեկնաբանությամբ

26.03.2015



Համընդհանուր մտավորական Ջեմիլ Աքսուն Akunq.net-ի թղթակցի հետ զրույցում հայտնել է, որ ներկայում քննարկվում է դպրոցներում համընդհանուր որպես ընտրովի դաս ընդգրկելու հարցը:

Ներկայիս Թուրքիայի Հանրապետության կազմում գտնվող Արդվին նահանգի Խոպա քաղաքում բնակվող համընդհանուր մտավորական Ջեմիլ Աքսուն ավարտել է Անադոլու համալսարանի Գրականության ֆակուլտետի փիլիսոփայության բաժնի մագիստրատուրան: Չախակողմյան կողմնորոշում ունեցող Աքսուն իր քաղաքական հայացքների պատճառով 8 տարի ազատազրկվել է:

Նա է 2014 թվականից հրատարակվող համընդհանուր առաջին ամսագրի՝ «Գոր»-ի խմբագրակազմի անդամ է:

Ջեմիլ Աքսունի հետ զրույցից հինգ համընդհանուր ինքնության պահանջներն ուղղված աշխատանքների մասին: Akunq.net-ի այն հարցին, թե Ստամբուլում գործող ՀԱՏԻԿ միությունն ինչու մասնաճյուղ չի բացում համընդհանուրով հոծ բնակեցված Խոպա քաղաքում, Աքսուն պատասխանեց, թե թերևս սույն կազմակերպության օրակարգում այդ հարցը չի եղել, և Խոպայից էլ նման պահանջ չի ներկայացվել:

Ամսագիրը կիրառարակվի վեցամսյա պարբերականությամբ, երկրորդ թիվը յույս կտեսնի 2015 թ. ապրիլին:

Հանդեսի նպատակն է պահպանել Համընդհանուր բարբառն ու համընդհանուր մշակույթը: Ամսագիրը տարածվելու է նաև Կրասնոդարի երկրամասի համընդհանուր շրջանում:

Այն բաղկացած է երեք հիմնական բաժիններից.

1. Գիտական բաժին, որում ներկայացվելու է Համընդհանուր և համընդհանուր պատմությունը:
 2. Լեզվի բաժին, որի նպատակն է Համընդհանուր բարբառի չտիրապետող համընդհանուր սովորեցնել մայրենի բարբառը:
 3. Բանախոսության բաժին, որտեղ հայոց լեզվի Համընդհանուր բարբառով ներկայացվելու է համընդհանուր բանախոսությունը:
- Ջեմիլ Աքսուն շեշտեց, որ հանդեսի հիմնական նպատակներից մեկը համընդհանուր ինքնության խնդիրն է. «Գոր» խմբագրակազմը, համընդհանուր ինքնությունը տեսնում է հայկականից գառ: Չնայած սրան՝ նրանք համոզված են, որ համընդհանուր հայոց լեզվի բարբառ է, քանի որ իննսուներեք տարեկան հայերն է:

Նա նշեց, որ համընդհանուր կասկածանքով են վերաբերվում իրենց հայկական ծագման մասին տեսակետին, քանի որ համընդհանուր ինքնությունը հարյուր տարի է, ինչ կտրված է եղել հայկականից,

իսկ ցեղասպանությունը պատճառ է, որ ժխտվի հայկական ինքնությունը:

Աքսուն նաև հայտնեց, որ համընդհանուր մեծ մասը չի տիրապետում Համընդհանուր բարբառին, որով հաղորդակցվում են միայն Խոպա գավառի համընդհանուրները: Եվ այդ փաստը բարդացնում է Թուրքիայի համընդհանուր ինքնության ընկալումը: Նա նկատեց, որ եթե Կրասնոդարի համընդհանուրներն ասում են՝ մենք համընդհանուր հայ ենք, ապա Թուրքիայի համընդհանուրներն իրենց համարում են համընդհանուր, բայց՝ ոչ հայ:

Նրա կարծիքով համընդհանուր շրջանում ինքնության հարցի նկատմամբ ընդհանուր առմամբ երեք մոտեցում է նկատվում:

Առաջինը ազգայնամոլական մոտեցումն է, որին հակված համընդհանուրները կարծում են, թե համընդհանուր թուրքերն է. այդ տեսակետը հիմնավորում են այն փաստով, որ թուրքերն շատ բառեր կան այդ լեզվում:

Երկրորդ մոտեցումը հակված համընդհանուր համարում են, որ իրենք համընդհանուր են, սակայն ունեն երկու ինքնություն. վերին ինքնությունը թուրքական է, ներքինը՝ համընդհանուր: Այս երկրորդ մոտեցմանն առավելապես կողմնակից են սոցիալ-դեմոկրատները:

Իսկ երրորդ մոտեցումը հակված մարդիկ իրենց ուղղակի համընդհանուր են համարում և կարելի էր լեզվի և մշակույթի պահպանումը:

Ջեմիլ Աքսուն ինքնության նկատմամբ այդ հակասական վերաբերմունքը բացատրեց այն փաստով, որ համընդհանուրներն արդեն ուժացվել են և անտեղյակ են իրենց իսկական ինքնության մասին: Ինքն անձամբ կարծում է, որ համընդհանուրները ծագում են հայերից: Որպես համընդհանուր ինքնության սահմանում՝ Աքսուն առաջարկեց հետևյալ տարբերակը. «Աղբբեջանի ուզբեկներն իրենց համարում են առանձին ժողովուրդ: Համընդհանուրները ևս իրենց պետք է ընկալեն որպես առանձին էթնիկ հանրություն, որը ծագել է հայերից»:

Ըստ նրա՝ քանի որ դեռևս 300 տարի առաջ իսլամացված համընդհանուրները հեռու են եղել հայկական տարածաշրջանից, օտարված՝ Հայ առաքելական եկեղեցուց, չեն ենթարկվել Ցեղասպանության, դրա համար էլ ուժացվել են, կորցրել լեզուն և պատմական ինքնագիտակցությունը:

Ջեմիլ Աքսուն նաև ընդգծեց, որ համընդհանուր ինքնության վերաբերյալ մի շարք հարցեր դեռ կարող են գիտական ուսումնասիրության: Օրինակ՝ պետք է բացահայտել, թե ինչու և ինչպես են համընդհանուրները Խոպա գաղթել Ռիզեից, որտեղ գտնվում է բուն Համընդհանուր: Ինչու են այստեղ գաղթած համընդհանուրները պահպանել լեզուն, իսկ Ռիզեի համընդհանուրները՝ ոչ և այլն: Նա նշեց, որ հարցերի վերաբերյալ փոսքաթիվ ուսումնասիրությունները բավարար չեն:

Անդրադառնալով ինքնության սեփական ընկալմանը՝ Աքսուն ասաց, որ իր համար կարևոր չէ հայ կամ թուրք լինելը: Նա նշեց, թե իրեն չի բնորոշի էթնիկ առումով, քանի որ որպես ճախակողմյան՝ կարծում է, թե ազգային ինքնությունը ամոթ զգալու կամ հպարտանալու առիթ չի կարող լինել: Սակայն ինքնությունը ժխտել, ըստ Աքսունի, նշանակում է հոգեբանական տրավմա ապրել: Համընդհանուր մտավորականը նաև հայտնեց, թե ո՛չ «Գոր» ամսագիրը, ո՛չ էլ ՀԱՏԻԿ միությունը նպատակ չեն դրել համոզել համընդհանուրներին, թե նրանք հայ են: Քանզի եթե ազգությունը հիմնական համարեն, չեն կարողանա առողջ քննարկման մթնոլորտ ձևավորել:

Ջեմիլ Աքսուն նաև հաղորդեց, որ ներկայում քննարկվում է դպրոցներում համընդհանուր որպես ընտրովի դաս ընդգրկելու հարցը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Հայկազուն Ավրեյան. Պոլսոյ պատրիարքությունը հայերի համար խոչընդոտներ է ստեղծում

26.03.2015

Հայ առաքելական եկեղեցու Պոլսոյ պատրիարքությունը խոչընդոտներ է ստեղծում ասլամացած հայերի քրիստոնեության վերադարձի համար: Այս մասին ամայր՝ մարտի 26-ին, մամուլի

ատույիսում նշել է արեւմտահայերի խնդիրների ուսումնասիրման կենտրոնի ղեկավար Հայկազուն Ավրեյանը:



Նա հիշեցրել է Պոլստ հայոց պատրիարքական ընդհանուր փոխանորդ, արքեպիսկոպոս Արամ Աթեշյանի հայտարարությունն այն մասին, որ մարդիկ, որոնք չեն կնքվել հայ եկեղեցում, հայ չեն: Ավրեյանի խոսքով՝ Պոլստ պատրիարքությունը նաեւ մի շարք խնդիրներ է դրել հայերի առջև, որոնք ցանկանում են վերադառնալ քրիստոնեության: «Նրանք պետք է մի քանի ամիս, հիմնականում վեց ամիս, դասընթացներ անցնեն Պոլսում, իսկ այդ դասընթացներն արժեն 4850 թուրքական լիրա, մոտ 2 հազար դոլար»,-նշել է Ավրեյանը՝ հավելելով, որ բարձրացել են նաեւ կնքվելու գները, որը եւս արժե 2 հազար դոլար: «Այս ամենը պետության կողմից կազմակերպված երեսույթ է եւ Պոլստ պատրիարքության կամքի բացակայության հետեւանք»,- ընդգծել է նա:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Հարցազրույց համշենահայ կնոջ հետ

27.03.2015



Համշենահայ բեմադրիչ Օզջան Ալպերի «Աշուն» ֆիլմում գլխավոր հերոսի մոր դերը կատարած Ռայիֆե Յենիգյուլի հետ հարցազրույց է վարել Akunq.net-ը:

Տիկին Ռայիֆեն մեզ ընդունեց համշենահայերին բնորոշ սիրալիրությամբ եւ խանդավառությամբ...

Նա մասնագիտությամբ դերասանուհի չէ, «Աշուն»-ն էլ թերեւս միակ ֆիլմն է, որում խաղացել է, սակայն այնքան բնական է կատարել իր դերը, որ ականայից մտածում եմ՝ այս անսահման բարի համշենահայուհին ընդամենը խաղացել է ինքն իրեն, եղել իրեն այնքան հոգեհարազատ մոր կերպարում...

Ընթերցողները վստահաբար ծանոթ են Օզջան Ալպերի այդ առաջին լիամետրաժ ֆիլմին, նրանցից շատերը նաեւ դիտել են այն 2009 թվականին, երբ «Աշուն»-ը ոչ միայն ցուցադրվեց «Ոսկե ծիրան» կինոփառատոնի շրջանակներում, այլ նաեւ արժանացավ Ժյուրիի հատուկ եւ FIPRESCI մրցանակների:

Այնուամենայնիվ հիշեցնենք՝ համշենահայ բեմադրիչ եւ սցենարիստ Օզջան Ալպերը ծնվել է ներկայիս Թուրքիայի Արդվին նահանգի Խոպա գավառում, ավարտել Տրապիզոնի լիցեյը: 1992 թ. սովորել է Ստամբուլի համալսարանի Բնագիտության ֆակուլտետի ֆիզիկայի բաժնում: Բեմադրիչի առաջին ինքնուրույն ստեղծագործությունը «Մոմի»-ն է, որը Համշենի բարբառով ստեղծված առաջին կարճամետրաժ ֆիլմն է, իսկ «Մելանիտիան եւ ռապսոդիան Տոկիո քաղաքում» վավերագրական ֆիլմը նկարահանվել է Ճապոնիայում: Ռեժիսորի մեկ այլ փաստագրական ֆիլմ է «Մի գիտնականի հետ ճանապարհորդություն» ժամանակի մեջ»-ը:

«Աշուն»-ը նրա առաջին լիամետրաժ ֆիլմն է, որը մրցանակների է արժանացել բազմաթիվ փառատոներում: Սույն ֆիլմը ձախակողմյան քաղաքական հայացքների պատճառով իր երիտասարդության 10 տարիները բանտում անցկացրած մի համշենահայ երիտասարդի՝ Յուսուֆի մասին է, ով երկաթե ճաղերից դուրս գալով՝ վերադառնում է իր հայրենի Խոպա գավառը եւ փորձում վերագտնել իր արմատները: «Աշուն» ֆիլմում ներկայացվում է 1990-ական թվականների Թուրքիան, տարիներ, երբ ձախակողմյան լինելն ըստ էության մեծ հանցանք էր համարվում այս պետությունում:

Օզջան Ալպերը «Դրոշակ»-ի խմբագրատանը Ռուբեն Հովսեփյանի, Կարեն Խանլարյանի եւ Հայկազուն Ավրեյանի հետ ունեցած զրույցում հետեւյալն էր ասում սույն ֆիլմի վերաբերյալ. «Ես շատ եմ կարեւորում տան թեման, սակայն տունն ինձ համար չի սահմանափակվում գուտ շինություն լինելով: Տունը մարմնավորում է անցյալի պատմությունը, մշակույթը, լեզուն... «Աշուն» ֆիլմում ներկայացվում է մի համշենացու պատմությունը, որը տասը տարի տեւած բանտային կյանքից հետո վերադառնում է Խոպա՝ իր տուն: «Աշուն» ֆիլմի հիմքում իրական պատմություն է ընկած: Խոսքը իմ համալսարանական ընկերներից մեկի՝ Ջեմիլ Աքսուլի** մասին է, որը կալանավորված է եղել...»:

Եվ ահա ժամանակավորապես գտնվելով Խոպա քաղաքում՝ ցանկացանք անպատճառ ծանոթանալ ֆիլմում մոր դերը խաղացած Ռայիֆե Յենիգյուլի հետ:

Տիկին Ռայիֆեն մեզ ընդունեց համշենահայերին բնորոշ սիրալիրությամբ եւ խանդավառությամբ: Ռայիֆե Յենիգյուլը թեեւ սակավախոս էր եւ հակիրճ էր պատասխանում մեր հարցերին, այնուամենայնիվ նրա լռության մեջ պերճախոսություն կար, որն արտահայտված էր նրա անսահման բարի աչքերում:

Տիկին Ռայիֆեն ծնվել է Խոպա գավառի Խիկո (պաշտոնական անվանումը՝ Բաշորա) գյուղում: Օզջան Ալպերի ազգականուհի տիկին Ռայիֆեն ֆիլմում խաղացել է 65-66 տարեկան հասակում: Նա այդ դերը կատարել է բեմադրիչի խնդրանքով, առանց որեւէ ակնկալիքի:

Մեր այն հարցին, թե արդյոք նախքան ֆիլմի նկարահանումն իր կյանքում եղել է որեւէ նախադեպ, երբ իր ծանոթներից կամ ազգականներից որեւէ մեկը կալանավորվել կամ հալածվել է ձախակողմյան հայացքների պատճառով, տիկին Ռայիֆեն պատասխանեց, թե իր ամուսնու եղբոր տղան Տրապիզոնում սպանվել էր ձախակողմյան լինելու համար:

Իսկ այն հարցին, թե «Ստահոգություն ունեցե՞լ եք, որ ֆիլմում խաղալը կարող էր վտանգավոր լինել Ձեր ընտանիքի համար», նա պատասխանեց. «Այդ մտավախությունները, բնականաբար, միշտ էլ եղել են: Մանավանդ որ նախքան ֆիլմի նկարահանումը տղաս ձերբակալվել էր եւ 10-12 օրվա ազատագրկման ենթարկվել ձախակողմյան լինելու հետեւանքով...»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Թուրքիայում կատեղծվի «Լեզվի հանձնաժողով» համընտրական հարցով համընտրական լրագրող

28.03.2015



Թուրքիայում «Լեզվի հանձնաժողով», որի նպատակը կլինի «քաղաքացիական» համընտրական ծագումը: Այս մասին, Akunq.net-ին հայտնել է Ռամազան Բայջըօղլուն:

Թուրքիայի Արդվին նահանգի Քեմալպաշա գյուղախմբի համընտրական ընկերակազմի Ռամազան Բայջըօղլուն (47 տարեկան) լրագրող է լուսանկարիչ է, նաև՝ Ստամբուլում 2011 թվականից գործող ՀԱՏԻԿ միության ղեկավարներից մեկը: Մեզ հետ զրույցում Բայջըօղլուն պատմեց ՀԱՏԻԿ-ի հիմնադրման նպատակների և գործունեության մասին, ինչպես նաև՝ ներկայացրեց Թուրքիայի իսլամացած համընտրական ինքնության վերաբերյալ սեփական պատկերացումները:

«ՀԱՏԻԿ-ը ստեղծման օրվանից նպատակադրվել է պահպանել համընտրական և համընտրական մշակույթը: Ինքս եղել եմ այս կազմակերպության կանոնադրությունը կազմողներից մեկը: ՀԱՏԻԿ միության նպատակն է նպաստել համընտրական մշակույթի պահպանմանն այնպիսի մեծ քաղաքներում, ինչպիսին է, օրինակ, Ստամբուլը, քանզի նոր սերունդը հետզհետե կորցնում է լեզուն և մշակույթը: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման այս դարում համընտրական անհետացման վտանգի տակ է, քանի որ համընտրական սկսել են իրարից հեռու ապրել: Լեզուն պահպանել են միայն Խոպայի համընտրականը, քանի որ նրանք չեն խառնվել, մեկուսացված են ապրել-մեզ հետ զրույցում ասաց համընտրական լրագրողը և շարունակեց, Համընտրական իսլամացվելուց հետո սկսել են յուրացնել մահմեդական ինքնությունը: Խոպայի համընտրականի 80 տոկոսն իրեն մուսուլման է համարում, իսկ ոչ ուսլայ 20 տոկոսը կրոնը չի կարևորում: Համընտրականի մոտ առկա է Թուրքիայի պատկանելու գիտակցություն: Նրանցից շատերը կարծում են, թե համընտրականի հայկական ծագմանն ուղղված ուսումնասիրությունները կարող են վնասել իրենց: Նրանց հայ լինելն անընդհատ շեշտելը կարող է զրգռել ազգայնամոլական խմբերին»:

Երբ Ռամազան Բայջըօղլուն նշեց՝ «Թեև սավում է, որ նրանք հայ են, սակայն գիտական ուսումնասիրություններ չեն արվել այդ ուղղությամբ», մենք միջամտեցինք՝ ընդգծելով, որ բազմաթիվ հայ գիտնականներ են կատարել նման ուսումնասիրություններ: Բայջըօղլուն հակադարձեց՝ ասելով, թե այդ ուսումնասիրություններն արվել են միայն հայերի կողմից, այնինչ անհրաժեշտ է, որ համընտրականի հայերն լեզվից ծագելու մասին դրույթն ապացուցվի նաև թուրք գիտնականների կողմից: Նա, սակայն, բացասական պատասխան տվեց մեր այն հարցին, թե արդյոք Թուրքիայում կա՞ն այնպիսի որակյալ հայագետներ, ովքեր կկարողանան նման ուսումնասիրություն կատարել:

«Ես, որպես Թուրքիայում բնակվող համընտրական, ուզում եմ, որ պահպանվի Համընտրական մշակույթը-խոսքը շարունակեց Բայջըօղլուն: Այդ նպատակով ենք հիմնել ՀԱՏԻԿ միությունը: Մայն կազմակերպության ստեղծման հիմնական դրոշմապատճառը մեծ քաղաքներում համընտրական մշակույթի պահպանումն է և Ադաբազարի պես՝ համընտրականը հոծ բնակեցված բնակավայրերում նրա մասնաճյուղերի հիմնումը: Ըստ իս՝ Խոպայում մասնաճյուղ բացելը լավ գաղափար չէ, քանի որ այստեղ մենք ապրում ենք լազերի և վրացիների հետ միասին. Խոպայում

մասնաճյուղ ստեղծելը ճիշտ չի լինի մյուս բնակիչների վերաբերմամբ»:

Ինչպես հայտնեց Բայջըօղլուն, Թուրքիայում համընտրականի երկու խումբ կա՝ Խոպայիսը և Ռիզեիսը: Նրա կարծիքով՝ արևմտյան կամ Ռիզեի խմբի համընտրականի 80-90 տոկոսը թուրքացված է եւ ազգայնամոլ: Արևմտյան խմբի համընտրականը բաժանված են երկու ենթախմբերի՝ լեռներում ապրողներ և ծովափին ապրողներ: Վերջիններս արհամարհանքով են վերաբերվում լեռներում ապրողներին, քանի որ լեռնաբնակների շրջանում պահպանված մշակույթային շատ տարրերի պատճառով ծովափին կամ քաղաքում բնակվողները լեռներում ապրողներին քամահարանքով ասում են՝ դուք հայ եք: Ըստ նրա՝ արևմտյան համընտրականը մշակույթային առումով միախառնվել են թուրքական և իսլամական մշակույթին:

Նրա խոսքով՝ ՀԱՏԻԿ-ի մեկ այլ նպատակն էլ համընտրական տարեցներից խաղիկներ ու երգեր գրառելը և դրանք «Գոր» ամսագրում հրատարակելն է:

Բայջըօղլուն բացասական պատասխանեց տվեց մեր այն հարցին, թե արդյոք ՀԱՏԻԿ միությունը ճնշումների ենթարկվել է պետական մարմինների կողմից: Ավելին՝ նա ընդգծեց, որ նման կազմակերպությունների շնորհիվ դուրսին է այս հարցերը պահել կառավարության վերահսկողության տակ: Նա նաև հայտնեց, որ ՀԱՏԻԿ-ը ներկայումս 280 անդամ ունի:

Ռամազան Բայջըօղլուն Akunq.net-ի թղթակիցների հետ զրույցում նաև նշեց, թե մի խումբ համընտրական նոր հաստատություն են ստեղծում, որը կկոչվի Համընտրականի ժառանգության հիմնադրամ: Ստեղծվելիք սույն հիմնադրամի նպատակը կլինի ֆինանսապես մեծ կարողություն ունեցող համընտրականի միջոցով տնտեսապես վատ դրության մեջ գտնվող համընտրական ընտանիքներին, ուսանողներին, ինչպես նաև արտասահմանում բնակվող համընտրականի աջակցելը: Հիմնադրամը կունենա նաև «Լեզվի հանձնաժողով», որի նպատակը կլինի «քաղաքացիական» համընտրականի ծագումը: Կազմակերպիչները մտադիր են այդ նպատակով հանձնաժողովում մասնագետներ ընդգրկել ինչպես Թուրքիայից, այնպես էլ՝ Հայաստանից և արտերկրից:

Մենք կատակեցինք՝ ասելով, որ այդ հանձնաժողովը նման է Յեղսապանության փաստը կասկածի տակ դնել փորձող թուրքերի՝ «Պատմաբանների հանձնաժողով» ստեղծելու գաղափարին, քանի որ համընտրականի՝ հայոց լեզվի բարբառներից մեկը լինելու փաստը վաղուց է ապացուցված:

Իսկ մեր այն հարցին, թե ինչ կլինի նրանից հետո, երբ «Լեզվի հանձնաժողով» անդամներն ապացուցեն, որ համընտրականի հայերն են, Բայջըօղլուն պատասխանեց. «Թուրքիայի Հանրապետությունում դժվարին ժամանակներ են էթնիկ խմբերի համար... Եթե հիմա նման բան ասվի, քառս կառաջանա: Համընտրականիս մեծ մասի մեջ թորքության պատկանելությունն առաջնային է: Կարծում եմ՝ եթե ապացուցվի համընտրականի հայկական ծագումը, մենք առնվազն երկու-երեք խմբի կբաժանվենք: Բայց և այնպես, կարևոր է, որ լեզվաբաններն ուսումնասիրեն և մի միասնական որոշման հասնեն: Այնուամենայնիվ, կարծում եմ, որ եթե անգամ ապացուցվի, որ համընտրականը Հայաստանից են ծագում, որեւէ բան չի փոխվի...»:

Բայջըօղլուն հայտնեց նաև, որ գնացել է Կրասնոդար, Մոսկ, Աբխազիա և հարցազրույցներ վարել այնտեղի քրիստոնյա համընտրականի հետ՝ բնականաբար օգտագործելով իր մայրենի լեզուն: Իր այդ այցին անդրադառնալով՝ նա նշեց.

«200 հազար քրիստոնյա համընտրական Աբխազիայում: Նրանց ֆինանսական դրությունը լավ է: Ինձ դուր է գալիս, որ նրանք պահպանել են համընտրական մշակույթը: Ինձ երջանիկ զգացի, երբ նույն լեզվով խոսեցինք: Ես անձամբ շատ մոտ եմ գանազան մշակույթներին. Տարբեր մշակույթների հետ եմ առնչվում... Եթե Հայաստանին պատկանեմ, ինձ երջանիկ կհամարեմ, կիմանամ, թե որտեղից եմ: Սակայն երջանիկ եմ նաև, որ Թուրքիայում եմ ապրում: Ես այստեղ ոչ մի խորականության չեմ ենթարկվել, ոչ մի ճնշում չեմ տեսել պետության կողմից: Եվ մենք՝ համընտրական, ամեն բան անում ենք, որ պահպանենք մեր մշակույթն ու լեզուն: Կրոնի հարցում ես զգայուն չեմ: Լայն աշխարհընկալում ունեմ, չեմ ներգրգում այն. աշխարհը տեսնում եմ մեկ ամբողջությամբ մեջ: Կարծում եմ՝ մարդիկ պետք է ապրեն առանց լեզվի, կրոնի սահմանափակումների: Ատում եմ օրենքներն ու

սահմանափակումները: Աստծու ստեղծած ամեն մի արարած պետք է ազատ ապրի այս աշխարհում...»: Չրույցի վերջում Ռամազան Բաջրեօղլուն հայտնեց, որ իրենք նախատեսում են նաև Ստամբուլում բացել մի յուրօրինակ թանգարան՝ Համշենական տուն, որում կցուցադրվեն Համշենի մշակույթի արտացոլող ցուցանմուշներ:

Սփյուռք

Հայաստանը 50 հազարից ավելի դասագիրք կհատկացնի սփյուռքի դպրոցներին

05.03.2015



2015 թվականին Հայաստանը 50,4 հազար դասագիրք կհատկացնի սփյուռքի կրթական հաստատություններին: Այդ որոշումը Հայաստանի կառավարությունը կայացրել է իր այսօրվա՝ մարտի 5-ի նիստում:

Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը նշել է, որ սփյուռքում գործող կրթական հաստատություններին կփոխանցվի նաև 3 հազար էլեկտրոնային նյութեր: Բացի այդ, այս տարի նախատեսվում է ստեղծել 6 նոր ուսումնական ձեռնարկ: Ծրագրի իրականացման համար նախատեսվում է հատկացնել 100 մլն դրամ:

Հայաստանը պարբերաբար դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ է հատկացնում սփյուռքի, այդ թվում՝ Վրաստանի հայկական դպրոցներին: Ընդհանուր առմամբ, սփյուռքում գործում է մոտ 350 ամենօրյա դպրոց (147-ը՝ Ջավախքում) և 600 կիրակօրյա դպրոց:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Հայ առաքելական եկեղեցու Իրաքի թեմի առաջնորդը նամակ է գրել արքայազն Չարլզին

12.03.2015



Այն բանից հետո, երբ յուրեր տարածվեցին, որ Ուելսի արքայազն Չարլզը ներկա է լինելու Գալիլայոյի ճակատամարտի գոհերի հիշատակին նվիրված միջոցառմանը, որը Թուրքիայի կառավարությունը որոշել է նշել ապրիլի 24-ին՝ ակնհայտորեն

նպատակ ունենալով միջազգային հանրության ուշադրությունը շեղել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումներից, Հայ առաքելական եկեղեցու Իրաքի թեմի առաջնորդ, արքեպիսկոպոս Ավագ Ասատուրյանը նամակով դիմել է արքայազնին, հաղորդում է «**Asbarez**»-ը:

«Ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին, Հայաստանի Հանրապետությունը պատրաստվում է կազմակերպել միջոցառում: Նույն օրը Թուրքիայի Հանրապետությունը որոշել է հիշել Գալիլայոյի ճակատամարտը, որի ժամանակ Օսմանյան կայսրությունը կռվել է Անգլիայի և նրա դաշնակիցների դեմ: Անկասկած, այդ արարողությունը որևէ առնչություն չունի Գալիլայոյի ճակատամարտի հետ: Դրա նպատակն է ոչնչացնել ազգի մասին հիշողությունը», - գրել է Ասատուրյանը:

Արքեպիսկոպոսը գրել է, որ արքայազնին որոշել է նամակ գրել, երբ իմացել է, որ Մեծ Բրիտանիայի արքայազնը հրաժարվել է մասնակցել Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի միջոցառումներին, իսկ Գալիլայոյի արարողությանը սպասվում է բրիտանական կառավարության մասնակցությունը՝ բարձրագույն մակարդակով:

«Այն, ինչ գանգվածաբար իրականացվել է հայերի Ցեղասպանության ժամանակ՝ կտրելով մարդկանց կոկորդներն ու ողջ-ողջ այրելով մարդկանց, այսօր իրականացնում է «Իսլամական պետությունը», - գրել է արքեպիսկոպոսը՝ արքայազնին առաջարկելով պատկերացնել, թե ինչ կլիներ, եթե 100 տարի անց Մեծ Բրիտանիայի վարչապետը ներկա գտնվեր այսօրվա «Իսլամական պետության» իրավահաջորդի կազմակերպած միջոցառմանը, և հույս հայտնելով, որ Մեծ Բրիտանիան կգործի իր արժեքներին համապատասխան:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Սինգապուրի Չինական միջազգային դպրոցում հայերեն են դասավանդում. հարցազրույց

12.03.2015

Սինգապուրը Հարավարևելյան Ասիայի կղզիներից մեկի վրա գտնվող քաղաք-պետություն է՝ ավելի քան 5 մլն բնակչությամբ: Սինգապուրն ընդգրկված է, այսպես կոչված, «ասիական վագրերի քաղաքում» և համարվում է աշխարհի ամենագարգացած և հարուստ երկրներից մեկը:

Հայերը Սինգապուրում հաստատվել են 18-րդ դարի վերջին: Նրանք հիմնականում այստեղ են տեղափոխվել Մալայզիայից, Հնդկաստանից և Նոր Զուլայից: Ներգաղթի երկրորդ ալիքը Սինգապուր է բերել հայերի փոքրիկ խմբի Պարսկաստանից և Կալկաթայից: Ներգաղթի երրորդ ալիքը 20-րդ դարի սկզբին էր, հիմնականում Իսպանիայից:



Չնայած փոքրաթիվ համայնքին, հայերին հաջողվել է զգալի հետք եւ դրական հիշողություններ թողնել Սինգապուրի պատմության մեջ:

NEWS.am-ն ընթերցողի ուշադրությանն է ներկայացնում Սինգապուրի Չինական միջազգային դպրոցի ավագ դպրոցի տնօրեն Վահագն Վարդանյանի հետ հարցազրույցը՝ ներկայումս կղզում բնակվող հայերի կյանքի և գործունեության վերաբերյալ:

Մովղաբար հայերն արագ և հաջողությամբ ձուլվում են ընդունող երկրներում: Ի՞նչ կատեք դրա մասին:

Եթե դու որոշակի մշակույթի կրող ես, ապա նաև պատասխանատվության որոշակի բեռ ունես: Չէ՞ որ քեզանից առաջ այդ մշակույթն ու լեզուն նախնիներդ արյան գնով են փորձել պահպանել: Ունե՞ս արդյոք այսօր դա կորցնելու իրավունք: Երբ ամբողջությամբ ձուլվում ես, ազատվում ես այդ պատասխանատվությունից:

Որքա՞ն հայ է բնակվում Սինգապուրում: Երանք հիմնականում գտարյուն հայեր են, թե՛ խառնամուսնություններից ծնվածներ:

Կոզում բնակվող հայերին պայմանականորեն կարելի է 3 խմբի բաժանել:

Առաջին խումբն այն հայերն են, որոնք սերունդներով են այստեղ բնակվում: Երանք հստակ թիվն ինձ հայտնի չէ, սակայն, կարծում եմ՝ 200-300 մարդ: Երանք մեզ գտարյուն հայեր չկան: Ավելին, նրանք հայերեն չեն խոսում և չեն հաճախում հայկական եկեղեցի: Երանք մեծ մասը կաթոլիկ կամ բողոքական է:

Երկրորդ խումբը սփյուռքից եկած հայերն են՝ 40-50 մարդ: Ոմանք ժամանակավոր են բնակվում երկրում, իսկ մյուսների պարագայում կինը կամ ամուսինը Սինգապուրի քաղաքացի են:

Երրորդ խումբն էլ Հայաստանի քաղաքացիներն են՝ 25-30 մարդ: Երանք Սինգապուր են գնացել աշխատանքային հրավերով և այնտեղ բնակվում են իրենց ընտանիքների հետ:

Ո՞ր ոլորտների մասնագետներ են նրանք:

Կա, օրինակ, ֆիզիկոս, շախմատի մարզիչ, SS ոլորտի մի քանի մասնագետներ բանկերում, ուսուցիչներ, գործարարներ: Ես միջազգային կրթության ոլորտում եմ աշխատում:

Երկրում հայկական դպրոց կա՞:

Դպրոց չկա, բայց կա Սուրբ Գրիգոր Լուսավորչի եկեղեցին, որը Սինգապուրի առաջին և հնագույն եկեղեցին է: Հետաքրքիր է, որ եկեղեցի հաճախող հայերի թիվը չի գերազանցում եկեղեցում գոյություն ունեցող նատատեղերի թիվը:

Իսկ նատատեղերը քանի՞ն են:

Հարյուրից ոչ ավելի: Չնայած եկեղեցին արդեն շուրջ 80 տարի մշտապես չի գործում, տարին երկու-երեք անգամ Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչներն այցելում և պատարագ են մատուցում:

Ո՞վ է հոգում եկեղեցու պահպանության ծախսերը:

Եկեղեցին ազգային հուշարձան է և պահպանվում է պետության կողմից: Ծախսերը հոգում են ինչպես Սինգապուրի հայերը, այնպես էլ հարուստ հայեր արտերկրից:

Մի փոքր պատմեք համայնքի մասին: Այն փոքրաթիվ է, իսկ քանի՞ն են ակտիվ:

Համայնքում 30-40 մարդ է ակտիվ: Մենք հավաքվում ենք տարեկան մի քանի անգամ, պատահում է՝ ավելի հաճախ: Համայնքի կազմը պարբերաբար փոխվում է, քանի որ հայերի մի մասը ժամանակավոր է բնակվում Սինգապուրում: Մի մասը մեկնում է, մյուսները՝ ժամանում: Սակայն եկեղեցին շարունակում է հայկական ինքնության կենտրոն մնալ:

Ժամանակին հայերը կարելու դեր են խաղացել երկրի զարգացման գործում: Աշխարհում ամենահայտնի հյուրանոցներից մեկը՝ Սինգապուրի «The Raffles Hotel»-ը, հիմնադրել են Սարգիս եղբայրները: «The Straits Times»-ը՝ ներկայում ամենազդեցիկ պարբերականը, հիմնել է Խաչիկ Մովսեսը: Աշխեն Հովակիմյանը ստացել է խոլորձի հայտնի տեսակը՝ «Վանդա միս Ջոակիմ»-ը, որը Սինգապուրի ազգային ծաղիկն է: Բազմաթիվ հայեր նաև ոսկերչության ոլորտում են աշխատում: Այդ դեպքում ինչպե՞ս է ստացվել, որ հայ համայնքը չի աճել:

Բանն այն է, որ 1930-ականների Մեծ դեպրեսիայի ժամանակ որոշ հարուստ հայեր սնանկացան և չկարողացան վերականգնել նախկին ֆինանսական դիրքերը: Մյուսներն էլ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ հեռացան տարածաշրջանից և հաստատվեցին աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ Ավստրալիայում:

Համայնքը հայերեն սովորելու հնարավորություն ունի՞:

Այդ հարցը քննարկվում է: Օրինակ՝ անցյալ տարվանից մեր կրթօջախի ավագ դպրոցում հայաստանցի ուսանողներին արդեն հայերեն են դասավանդում: Իսկ ընդհանրապես, ինչ վերաբերում է լեզվի պահպանմանը, շատ բան կախված է ընտանիքից: Ես կարծում եմ, որ եթե ծնողները տանը մայրենիով շփում ապահովեն, երեխաները չեն կորվի ազգային մշակույթից:

Եկեք ընդհանուրից անհատականի անցնենք: Ձեր դուստրը շուրջ 7 տարի Ձեզ հետ միասին Սինգապուրում է ապրում: Ո՞ր լեզվով եք շփվում:

Տանը՝ բացառապես հայերեն:

Իսկ նրան ինչպե՞ս են տրվում օտար լեզուները:

Շատ լավ: Ես ապրում եմ աշխատում էի Պեկինում, երբ Աննան ինձ մտա եկավ: Այդ ժամանակ 6 տարեկան էր: Ես նրան չինական պետական դպրոց ուղարկեցի: Նա ոչ մի բառ չգիտեր ո՛չ անգլերեն, ո՛չ չինարեն, բայց ես որոշեցի փորձել: 2 ամիս անց ինձ կանչեցին և ասացին, որ նա դասերի ժամանակ ոչինչ չի հասկանում: Ես անհանգստացա, մտածեցի, որ նա լեզուների հարցում ընդունակ չէ, բայց որոշեցի մի քիչ էլ սպասել: Մեկ ամիս անց նորից կանչեցին: Բայց այս անգամ սկսեցին բողոքել, որ դասերի ժամանակ անընդհատ խոսում է և խանգարում մյուսներին: Շատ զարմացա և հարցրեցի՝ ի՞նչ լեզվով է խոսում: Պատասխանեցին՝ չինարեն: Ժամանակի ընթացքում նաև անգլերեն սովորեց: Հիմա նա հեշտությամբ շփվում է այդ լեզուներով:

Այս տարի նշվում է Սինգապուրի անկախության 50-ամյակը: Հայկական մշակույթի, կոզում հայերի ավելի քան երկդարյա ներկայության հետևապլամ որե՞ն միջոցառում նա խառնվո՞ւմ է:

Անկախության տոնի առիթով բազմաթիվ հետաքրքիր միջոցառումներ են նախանշված, այդ թվում՝ երկրի հայկական ժառանգության հետ կապված: Բացի այդ, ցանկանում եմ նշել, որ 2016թ. մարտին ծրագրում ենք նշել հայկական եկեղեցու օժման 180-ամյակը:

*Չրուցեց Անի Աջոսյան
Լուրեր Հայաստանից - NEWS.am*

Դեր Չորի հայկական եկեղեցին՝ պատերազմից ավերված նշանակալից հուշարձանների շարքում

07.03.2015

Դեր Չորի հայկական Սրբոց Նահատակաց եկեղեցին հայտնվել է հակամարտության հետևանքով ավերված անգին հուշարձանների ցուցակում: Ցուցակը կազմվել էր CNN հեռուստաընկերության կողմից:

Հողվածում նշվում է, որ Դեր Չորում Հայոց ցեղասպանության թանգարանը նվիրված է 1915-1923թթ. սպանված հայերի հիշատակին: Այն այցելում էին աշխարհի բոլոր ծայրերից ժամանած հազարավոր ուխտավորներ: Եկեղեցուց ու թանգարանից բաղկացած համալիր կառույցը ավերվել էր «Իսլամական պետության» գրոհայինների կողմից 2014թ.:



Այդ ցուցակում է նաև Բեյրութի հին քաղաքը, Իրաքում ավերված Սամարրայի մեծ մզկիթը, Հայկաի մեծ մզկիթը, Նեմրուջ ասորական քաղաքը, Սիրիայի Պալմիրա հնագույն քաղաքը և պատմության այլ մեծագույն հուշարձանները:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 21-ին ԻՊ գրոհայինները սիրիական Դեր Չոր անապատում պայթեցրել էին Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված Սրբոց Նահատակաց եկեղեցին: Ահաբեկիչները ականապատել էին եկեղեցին և գործի դրել պայթուցիկ սարքը հեռակառավարման միջոցով, որից եկեղեցին ամբողջովին ավերվել էր:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Մենք բոլորս հայ ենք. լիբանանցի պատգամավոր

14.03.2015



Մարտի 13-ին Լիբանանում ՀՀ դեսպանությունում կազմակերպվել է երախտագիտության երեկո՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

ԱԳՆ մամուլի ծառայությունը տեղեկացնում է, որ միջոցառմանը ներկա են եղել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, Լիբանանի էներգետիկայի, կրթության և բարձրագույն կրթության, գյուղատնտեսության նախարարները, Լիբանանում ՀՀ դեսպան Աշոտ Քոչարյանը, կրոնական առաջնորդներ, խորհրդարանի պատգամավորներ, հասարակական-քաղաքական գործիչներ, դիվանագետներ, լրագրողներ:

Բացման խոսքում Լիբանանում ՀՀ դեսպան Աշոտ Քոչարյանը նշել է, որ աշխարհի տարբեր երկրներում անցկացվող, Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված բազմաթիվ միջոցառումների նպատակն է միջազգային հանրության լայն զանգվածներին իրազեկ պահելը և հայ ժողովրդի պահանջատիրությունը լսելի դարձնելը: Դեսպանը շնորհակալություն է հայտնել Հայոց ցեղասպանությունը ճանաչած Լիբանանի խորհրդարանին, բոլոր երկրներին և միջազգային կազմակերպություններին: Նա ընդգծել է, որ ոգեկոչման միջոցառումներն անցկացվում են «հիշողություն», «երախտագիտություն», «միջազգային պայքար» և «վերածնունդ» հիմնական ուղղություններով:

Այնուհետև ելույթ է ունեցել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի Լիբանանի կենտրոնական մարմնի փոխատենապետ Շահան Կանդահարյանը: Խոսելով Թուրքիայի ժխտողական քաղաքականության մասին՝ նա շեշտել է, որ միջազգային հանրությունը արդար զնահատական պետք է տա կատարված հանցագործությանը:

Լիբանանի խորհրդարանի պատգամավոր, Լիբանանի վարչապետի և խորհրդարանի նախագահի ներկայացուցիչ Ղասան Մուխայբերն, անդրադառնալով Օսմանյան Կայսրությունում հայ և լիբանանցի ժողովուրդների զրկանքներին և տառապանքներին, ընդգծել է. «Մենք բոլորս հայ ենք»: Նա հպարտությամբ խոսել է լիբանանահայ համայնքի մասին, որի հանդեպ Լիբանանի ժողովուրդը ունի հատուկ վերաբերմունք և հարգանք: Մուխայբերը կոչ է արել միջազգային հանրությանը համախմբվելու՝ հետագայում հնարավոր ցեղասպանությունները կանխելու նպատակով:

Երեկոյի վերջում ներկաներին իր խոսքն է ուղղել ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Նախարարն ընդգծել է, որ հայ ժողովուրդը միշտ երախտագիտությամբ է հիշելու արաբական աշխարհի, մասնավորապես Լիբանանի ժողովրդի ցուցաբերած անուրանալի աջակցությունը, ինչի շնորհիվ հայության բեկորները փրկություն և ապաստան գտան, հիմնավորվեցին, ինտեգրվեցին և ակտիվորեն մասնակցեցին քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին: Նախարարը, մեջբերելով ՀՀ Նախագահի՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում ունեցած ելույթը, շնորհակալություն է հայտնել բոլոր պետություններին, միջազգային, կրոնական և հասարակական կազմակերպություններին, որոնք ճանաչել և դատապարտել են մարդկության դեմ կատարված սոսկալի ոճիրը՝ Հայոց ցեղասպանությունը: Անդրադառնալով Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը՝ Հրանուշ Հակոբյանը նշել է, որ ներկայումս Թուրքիան ջանքեր չի ինչպիսիք խեղաթյուրելու, ժխտելու և կեղծելու իրականությունը: Նա համոզմունք է հայտնել, որ

Թուրքիան մի օր ճանաչելու է Հայոց ցեղասպանությունը նաև այն պատճառով, որ թուրքական հասարակությունում մարդիկ սկսել են ուսումնասիրել իրենց իրական պատմությունը, իսկ աշխարհասփյուռ հայ ժողովուրդն այլևս չի լռելու և անընդհատ պահանջելու է համազգային իրավունքների վերականգնում: Նախարար Հակոբյանը ներկայացրել է Համահայկական հոշակագիրի գլխավոր սկզբունքները 100-ամյակի «Հիշում եմ և պահանջում» կարգախոսին համահունչ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Իսպանիայի Պինտո քաղաքը ճանաչել է ցեղասպանությունը

26.03.2015



Մարտի 26-ին Իսպանական Պինտո քաղաքի քաղաքապետարանի լիագումար նիստը միաձայն պաշտոնապես ճանաչեց Հայոց ցեղասպանությունը:

ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, թե որոշման մեջ մասնավորապես սավում է.

«Պինտոյի քաղաքապետարանի լիագումար նիստը միաձայն հաստատում է Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումը եւ դատապարտում օսմանյան թուրքերի կողմից մարդկության դեմ իրականացված հանցագործությունները: Այս տարի լրանում է 20-րդ դարի առաջին ցեղասպանության 100 տարին, որի ընթացքում սպանվեցին 1.5 մլն քաղաքացիներ, իսկ 2 մլն հայեր ստիպված եղան լքել իրենց բնակավայրերը»:

Իտալիայի Տոսկանայի նահանգը ճանաչել է Հայոց ցեղասպանությունը

26.03.2015



Իտալիայի Տոսկանայի նահանգը՝ մարտի 25-ին ընդունել է Հայոց Ցեղասպանությունը ճանաչող բանաձև:

Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի առթիվ Հռոմի հայ հայամերի խորհուրդը, նամակով դիմել է Իտալիայի բոլոր կարևոր նահանգապետարաններին ու քաղաքապետարաններին՝ բանաձևեր ընդունելու խնդրանքով:

Այս առնչությամբ Տոսկանայի նահանգը՝ մարտի 25-ին խորհրդարանական նիստում ընդունել է բանաձև, որով գորակցություն է հայտնել հայ ժողովրդին:

Բանաձևը ներկայացրել են Մաուրո Ռոմանելլին, Դանիելա Լասթին եւ Ջանլուկա Լաձձերին: Բանաձևում սավում է, որ այն պետք է ուղարկվի Հռոմի հայ համայնքի խորհրդի քարտուղարությանը, որպեսզի այն փոխանցեն Հայոց Ցեղասպանության թանգարան:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

Հասարակական

Դր. Էդիկ Բաղդասարյան
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ՄԱՆԻՖԵՍՏ

(Ծրագրային Հայտարարություն՝ Առաջարկ)
2014 Տորոնտո – Կանադա
ISBN: 978-1-927860-27-4

Սկիզբը նախորդ համարից

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թվականությունից առաջ

- 13 դ. մ.թ.ա - Ուրարտուի առաջին հիշատակությունը, Ուրուատրիե ձևով:
- 13-11 դդ. մ.թ.ա - Նաիրի ցեղալին միության գոյությունը:
- 870-590 - Արարատյան (Ուրարտու) թագավորություն:
- 570-560 - Երվանդ Սակավակյաց թագավոր:
- 560-535 - Տիգրան Երվանդյան:
- 522 դեկտ. 31, մայիսի 20, 21, 31 և հունիսի 12 - Հայերի ապստամբությունը Աքեմենյան Դարեհի դեմ:
- 404-360 - Երվանդ, Հայաստանի կառավարիչ:
- 360-337 - Կողոմանոս, Հայաստանի կառավարիչ:
- 330-300 - Երվանդ, Հայաստանի թագավոր:
- 220-201 - Երվանդ վերջին, Հայաստանի թագավոր:
- 189-160 - Արտաշես Ա. թագավոր, Արտաշիսյան թագավ. հիմնադրում:
- 95-55 - Տիգրան Մեծ թագավոր:

Մեր թվականության

- 1 թ. - Արտաշիսյան թագավորության անկումը:
- 2-62 - Օտար թագավորներ Հայաստանում:
- 63-428 - Հայ Արշակունիների թագավորությունը:
- 164 - Մեծ ապստամբություն Հայաստանում հռոմեական զավթիչների դեմ:
- 311-312 - Հայ - հռոմեական ռազմական ընդհարումներ:
- 364-367/8 - Վասակ Մամիկոնյանը գլխավորում է հայ ժողովրդի հերոսական պայքարը Սասանյանների ներխուժումների դեմ:
- 428 - Հայ Արշակունիների հարստության վերացում: Հին հայկական պետության անկումը:
- 428-484 - Մարզպանական Հայաստան:
- 451, մայիսի 26 (շաբաթ օր) - Հայ ժողովրդի մեծ ապստամբությունը Սասանյանների լծի դեմ Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ (Ավարայրի ճակատամարտ):
- 481-484 - Երկրորդ համաժողովրդական ապստամբությունը Սասանյանների դեմ՝ Սահակ Բագրատունու և Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ:
- 485-ից - Հայաստանը տանուտիրական երկիր:
- 492 - Հայերի ապստամբությունը Սասանյան Կավաթի դեմ:
- 536 - Ապստամբությունը Հայաստանում Բյուզանդական կայսրության դեմ:
- 571-572 - Հայ ժողովրդի ապստամբությունը Սասանյան Իրանի դեմ, Վարդան Մամիկոնյանի (Կարմիր Վարդան) գլխավորությամբ:
- 595 - Բյուզանդական և պարսկական տիրապ. դեմ ապստ. Հայաստանում:
- 774-775 - Հայ ժող. մեծ ապստ. արարների դեմ:
- 862 - Աշոտ Բագրատունին իշխանաց իշխան:

- 874/75 - Արաբ ոտիկանի վտարումը Հայաստանից:
- 884/85 - Հայոց պետականության վերականգնումը: Աշոտ Բագրատունին թագավոր հայոց:
- 886-1045 - Բագրատունիների (Հայոց կենտրոնական) թագավորությունը:
- 908-1021 - Վասպուրականի թագավորութ. առաջացումը (Գագիկ Արծրունի):
- 963-1065 - Կարսի թագավորությունը:
- 972-1113 - Տաշիր-Ձորագետի (Կյուրիկյան) թագավորությունը:
- 987-1170 - Այրնյաց թագավորությունը:
- 1080-1375 - Կիլիկիայի հայկական պետությունը:
- 1124, 1174 - Անիի բնակչության ապստամբ. օտար տիրողների դեմ:
- 12րդ դարի վերջին-14րդ դարի կեսին - Զաքարյանների իշխանությունը Հայաստանում:
- 1249 և 1259-61 - Հայ-վրացական ապստ. մոնղոլների դեմ:
- 1376-1424 - Հայ իշխան Կոստանդինը կառավարում է Լեոնային Կիլիկիան:
- 1254-1427 - Մակուի (Արտազի) հայկական իշխանությունը:
- 1549 - Հայ ժողովրդի ազատության խնդրով Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը լինում է Հռոմում:
- 1555 - Հայաստանի բաժանումը Թուրքիայի և Պարսկաստանի միջև:
- 1562 - Հայաստանի ազատագրության համար գաղտնի ժողով է հրավիրվում Միքայել Սեբաստացի կաթողիկոսի կողմից:
- 1575-Թադեոս կաթողիկոսի ուղևորությունը Լվով, Վենետիկ, Հռոմ՝ Հայաստանի ազատագրության խնդրով:
- 1677 - Հակոբ Զուղալեցու գլխավորությամբ էջմիածնում հրավիրվում է գաղտնի ժողով Հայաստանի ազատագրության համար: Իսրայել Օրին մեկնում է Եվրոպա Հայաստանի ազատագրության խնդրով, 1701-ին՝ Մոսկվա:
- 1722-1730 - Ազատագրական կռիվներ՝ Սյունիքում, Դավիթ Բեկի և Մխիթար սպարապետի ղեկավարությամբ: Ազատագրական շարժում Արցախում:
- 1725-1727 - Թուրքական զորքերի ծանր պարտությունը Արցախում:
- 1727-Հալիձորի հերոսական ճակատամարտը թուրքերի դեմ: Հայ-պարսկական դաշինք թուրքական նվաճողների դեմ: Թահմազ շահը ճանաչում է Դավիթ Բեկի իշխանությունը Ղափանի երկրում:
- 1759- Հովսեփ Էմինը գալիս է Հայաստան՝ ազատագրական պայքարը կազմակերպելու նպատակով:
- 1766, օգոստոսի 1- Սիմոն Երևանցի կաթողիկոսը կոնդակ է ուղարկում Եկատերինա II - ին՝ հայ ժողովրդին օգնելու խնդրանքով:
- 1769, հուլիսի 8- Մովսես Սարաֆյանի կազմած Հայաստանի ազատագրման ծրագիրը ներկայացվում է Ռուսաստանի արտաքին գործերի կոլեգիային:
- 1780, հունվար- Հ. Արղունյանի ու Հով. Լազարյանի բանակցությունները գեներալ Սովորովի և իշխան Պոպոյովի հետ. քննարկվում է Հայաստանի Ազատագրման հարցը:
- 1827, մայիսի 17- Հայկական կամավորական առաջին գումարտակը Թիֆլիսից մեկնում է մարտադաշտ:
- 1830-1838 - Հայագի Գեներալ-մայոր Բ. Բեհրեթովը հայկական մարզի վարչության պետ:
- 1832, դեկտ. 21- Թուրքական բանակը Սուլեյման փաշայի գլխավորությամբ արշավում է Զեյթունի վրա, սակայն լեռնականների կողմից ջարդվում է Զերմուկի դաշտում:
- 1833, փետր. 21 - Հայկական մարզի զինանշանի հաստատումը Նիկոլայ I-ի կողմից:
- 1841, դեկտ. 12 - Զեյթուն ներխուժող թուրքական զորքերը դուրս շարվեցին լեռնագավառից:

Լույս Ամսագիր

- 1844, Նոյեմբեր - Թուրքիայում օտարերկրյա մասնագետներն առաջին անգամ մարդահամար են անցկացնում, ըստ որի արևմտահայերի թիվը կազմում էր 2,4 միլիոն մարդ:
- 1849, ապրիլի 27- Փարիզում սովորող արևմտահայ ուսանողները կազմում են ,Արարատյան ընկերությունը»:
- 1862- Վանի գինված ելույթը թուրք. կառավարության դեմ:
- 1862, օգոստ. 2 - Զեյթունի հերոսական ապստամբությունը:
- 1863 - Մուշի գինված ելույթը քուրդ դերբեդյաների դեմ:
- 1866, մայիսի 7- Կ.պոլսում հիմնադրվեց Ֆրանկ մասոնական ,Սերե գաղտնի ընկերությունը»:
- 1872, մարտի 3 - Վանում կազմակերպվեց «Միություն ի փրկություն» գաղտնի կազմակերպությունը:
- 1874, հունիսի 20- Մեծ Դարաքիլիսայում կազմակերպվեց ,Հայրենիք սիրո գրասենյակե կազմակերպությունը»:
- 1875, հոկտեմբեր-Ապստամբ. բռնկվեց Զեյթունում:
- 1876- Կ. Պոլսում հիմնվեց Արարատյան և Արևելյան ընկերությունները:
- 1877- Ռուսական զորքերը հայագրի գեներալներ Տեր-Ղուկասովի, Լորիս-Մելիքովի և լազարեի ղեկավարությամբ գրավեցին Բայազետ քաղաքը, Արդահանը և Կարսը: Կարսում ջախջախվեցին Մուխտար փաշայի թուրքական բանակը:
- 1878, մարտի 8- Հայկական հարցը եվրոպական պետություններին ներկայացնելու և ապա Բեռլինի կոնգրեսին մասնակցելու նպատակով Կ.Պոլսից եվրոպա մեկնեց հայ պատվիրակությունը:
- 1878, օգոստոս-Սկսվեց Զեյթունի ապստամբությունը:
- 1878, հոկտ. 1- Վանում ստեղծվեց «Սև հաշ» գաղտնի կազմակերպությունը:
- 1879, ապրիլի 11- Կ. Պոլսում հիմնվեց Ազգանվեր հայուհյաց ընկերությունը:
- 1879, գարուն- Սկսվեցին Կարինի և Արաբկիրի քաղաքային բնակչության ելույթները իշխանության դեմ:
- 1880- Թիֆլիսում սկսվեց գործել Արևմտահայ ժողովրդի ազատագրման հարցերով զբաղվող Գր. Արծրունու խմբակը:
- 1881, մայիս- հաշատուր Կերեկցյանի նախաձեռնությամբ Կարինում հիմնադրվեց «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը:
- 1881,նոյեմբ.- Մոսկվայի հայ ուսանողության ջանքերով ձևավորվեց «Հայրենասերների միություն» գաղտնի խմբակը:
- 1881-1882- Երևանում գործում էր «Հայասեր-ազգասեր» գաղտնի խմբակը:
- 1884, հունիս-Թուրքական հարկային ռեֆորմի դեմ ապստամբ. բռնկվեց Զեյթունում քաղաքագլուխ Պապիկ իշխանի ղեկավարությամբ:
- 1885,դեկտ. - Մկրտիչ Փորթուգալյանը Մարսելում կազմակերպեց «Հայոց հայրենասիրական միությունը», որը հետագայում դարձավ Արմենական կուսակցության կորիզը:
- 1887- Անգլիահայ գաղտնի ճանաչված գործիչ Կ. Հակոբյանի նախաձեռնությամբ լոնդոնում կազմվեց «Հայկական հայրենասիրական ընկերությունը»:
- 1887- Ժնևում կազմակերպվեց Հնչակյան կուսակցությունը:
- 1890, հունիսի 18-20 - Ընդհարում կառավարական զորքերի և Կարինի անգլեն հայ բնակչության միջև:
- 1890, հոկտիսի 15- Կ. Պոլսում հնչակյանները կազմակերպեցին Գում-Գափուի ցույցը:
- 1890, ամռանը - Թիֆլիսում կազմակերպվեց, «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը, որը հետագայում կոչվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն»:
- 1890, սեպտ. 24- Սարգիս Կուկունյանի խումբը անցավ թուրքական սահման:
- 1894,օգոստ. 1- Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը:
- 1895,մայիսի 11- Կ.Պոլսի՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի ղեկավարները ընդարձակ հուշագիր և հայկական բարենորոգումների նախագիծ ներկայացրին Բ. Դուան:
- 1895, հոկտ. 5-նոյ. 1- Հայերի զանգվածային ջարդեր Արևմտահայաստանում և Անատոլիայում թուրք. պետության միջոցով:
- 1895,հոկտ.12- Զեյթունում ապստամբություն բռնկվեց:
- 1896, հունիսի 3- Սկսվեց Վանի հերոսական ինքնապաշտպանությունը:
- 1896,օգոստ. 14- Կ. Պոլսի Օսմանյան բանկի՝ «Բանկ Օտոմանի գրավումը» Բաբգեն Սյունու ղեկավարությամբ (Հնչակյաններ և դաշնակցականներ):
- 1896- Հայերի զանգվածային կոտորածներ Կ.Պոլսում և Ակնում:
- 1897, օգոստ.- «Նանասորի արշավանք» (Դաշնակցականներ):
- 1898- Բաբգենի կոիվը Սերոբ Աղբյուրի և թուրք գինվորների միջև:
- 1901-Առաքելոց վանքի կոիվը (Հայդուկային, Անդրանիկի ղեկավարությամբ):
- 1902, հուլիսի 4-7- Բրյուսելում կայացավ միջազգային կոնֆերանս հօգուտ Հայկական հարցի արգարացի լուծման:
- 1904,փետրվար- Սկսվեց Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը:
- 1904- Աղթամարի և Շամիրամի կոիվներ Անդրանիկի ղեկավարությամբ թուրք զորքի դեմ:
- 1905, հուլիսի 21- Մահափորձ Աբդուլ Համիդի դեմ:
- 1906- Երզրումի(Կարին) հայերի հուզումները:
- 1909-Ազանայի հայերի կոտորածները:
- 1914,սեպտ.-Հայ կամավորական խմբերի ստեղծումը:
- 1915, ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը: Հայկական մեծ եղեռնի սկիզբը:
- 1915, ապրիլի 20-մայիսի19- Վանի հերոսական ինքնապաշտպանությունը:
- 1915, հունիսի 12-հուլիսի 3- Շապին-Վարահիսարի խիզախ ինքնապաշտպանությունը:
- 1915- Ուրֆայի հայերի հերոսական ինքնապաշտպանությունը:
- 1915,հունիսի 15 - Թուրքական կառավարությունը կախաղան բարձրացրեց հնչակյան կուսակցության 21 ղեկավարներին:
- 1915,հուլիսի 13- Մուսա լեռան նշանավոր ինքնապաշտպանությունը:
- 1915-Մուշի գոյամարտը:
- 1917, մարտի 16- Թիֆլիսում հիմնվեց ,Հայ ժողովրդական կուսակցությունը»:
- 1917,մայիսի 2 - Զորավար Անդրանիկի նախագահությամբ Երևանում բացվեց արևմտահայերի առաջին համագումարը:
- 1917, դեկտ. 29 - Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետը ղեկիբեռ է ընդունում ,Թուրքահայաստանի մասին»:
- 1918, մարտի 12-15 - Թուրքական բանակը գրավեց Երզրումն ու Ալեքսանդրապոլը:
- 1918, ապրիլի 22 - Անդրկովկասի սեյմը Անդրկովկասը հայտարարում է անկախ:
- 1918, մայիսի 21-26 - Սարդարապատի հերոսամարտը:
- 1918, մայիսի 25-28 - Դարաքիլիսայի հերոսամարտը:
- 1918, մայիսի 23-29 - Բաշ-Ապարանի հերոսամարտը:
- 1918, մայիսի 26 - Ցրվեց Անդրկովկասի սեյմը:
- 1918, մայիսի 28 - Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծումը:
- 1919, օգոստոսի 1 -Երևանում բացվում է Հայաստանի Պառլամենտը:
- 1920, օգոստոսի 10- Սևրի դաշնագրի կնքումը:
- 1920, նոյեմբերի 29- Իջևանում Հայաստանի հեղափոխական կոմիտեն հրապարակեց հայտարարություն Հայաստանը հորհրդային Սոցիալիստական Հանրապետություն հռչակելու մասին (երկրորդ հանրապետություն):
- 1920, դեկտ. 2 - Ալեքսանդրապոլի ստրկացնող պայմանագիրը Թուրքիայի և Հայաստանի առաջին հանրապետության կառավարությունների միջև:

- 1920- Հաճրնի հայոց հերոսամարտը թուրքական զորքերի դեմ:
- 1920-21 - Այնթապի հայերի ինքնապաշտպանությունը:
- 1921, ապրիլի 22 - Ալեքսանդրապոլի ազատագրումը թուրքական զավթիչներից:
- 1921, հոկտ. 13 - Կարսի Պայմանագիրը:
- 1921, դեկտ. - Սկսվում է սփյուռքահայության հայրենադարձությունը հորհրդային Հայաստան:
- 1921- հիմնվեց Ռամկավար Ազատական Կուսակցությունը (Կ.Պոլիս):
- 1947- Հիմնվեց Հայկական Համաշխարհային Կոնգրեսը (Նյու Յորք):
- 1975- Հիմնվեցին «Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակը», և «Հայկական Յեղասպանության Արդարադատ Մարտիկներ»: Ձևավորվեց «Հայկական Ժողովրդային Շարժումը», թեև սկզբնապես կազմավորվել էր 1970-ական թթ. կեսին:
- 1983-85- «Հայ Հեղափոխական Բանակի» ստեղծումը:
- 1991, սեպտեմբերի 21 - Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումը:

Արևելյան հարցը և գլխավոր գերուժերի համառոտ դասակարգումը

- 28-26 դ.դ. մթա. - «Ն» - Արատտա-Շումերական
- 25 դ. մթա. - «Ն» - Հայ-Բաբելոնական
- 24-23 դդ. մթա. «Ն» - Աքքադա-Արմանական
- 22-18 դդ. մթա. «Ն» - Բաբելոնա-Խեթական-Կասիթական-Միտանի-Ասորական
- 19-7 դդ. մթա. «Ն» Ասորական-Արարատյան՝ Վանի թագավորություն-Մարական
- 6 - 4 դդ. մթա Աքեմենյան-Լյուդիական-Հունական
- 3-րդ դ. մթա - 2-րդ դ. մթա - Պարթևական-Հունական-Հույն-Բակտրիական-Հռոմական
- 2-րդ դ. մթա - 1-ին դ. մթա - Պարթևական-Հայկական-Հռոմական
- 1 - 3 դդ. մթ. Պարթևական-Հռոմական
- 3 - 7- դդ. մթ. Սասանյան - Հռոմեական-Բյուզանդական
- 7-9 դդ. մթ. Արաբական- Բյուզանդական
- 9-11 դդ. մթ. Արաբական- Հայկական-Բյուզանդական
- 11-15 դդ. մթ. Բյուզանդական-Թուրքական
- 16-19 դդ. մթ. Պարսկական-Թուրքական
- 18-19 դդ. Ռուսական-անգլիական-Ֆրանսիական-գերմանական
- 20 - 21- Անգլո-ռուս-ամերիկյան
- 21 դ. Ամերիկյան-եվրոմիություն-ռուս-չինական

(Շար. 4)

ԾՈՒՇԻԻ ՄԱՐՏՅԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹՅԱՆ 95-ՐԴ ՏԱՐԵԼԻՅԸ

(ԼՈՒՅՍ-ի համար)

Ադրբեջանի պետական ահաբեկչության և էթնիկական գաղամների քաղաքականությունը ենթակա է դատապարտման

ՄՀԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
«Կանառ» գիտական կենտրոնի տնօրեն,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական գաղամների քաղաքականությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջաններում առայսօր միջազգայնորեն չի դատապարտվել, իսկ արյան ու ավերածությունների միջոցով ստեղծված այդ պետությունը պատասխանատվության չի ենթարկվել: Անպատժելիության զգացումը Ադրբեջանի ղեկավարության ոճրագործ ձեռքերին ազատություն է տվել նորից նախճիբներ նյութելու բնիկ ժողովուրդների դեմ, բարբարոսաբար ոչնչացնելու նրանց ստեղծած քաղաքակրթային արժեքները: Այսպես կոչված՝ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության

կարճատև գոյությունն անհամեմատելիորեն հարուստ է պատերազմների սանձազերծումով, բռնություններով, ավազակային հարձակումներով ու կողոպուտներով, էթնիկական գաղամներով և բնիկներին պատկանող պատմաճարտարապետական կոթողների զանգվածային ոչնչացումով: Թուրքական ավիաների օգնությամբ ստեղծված այդ խամաճիկային պետությունն ինքնառիչակման օրից՝ 1918 թ. մայիսի 27-ից ի վեր Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան շրջաններում իրականացնում է պետական ահաբեկչության քաղաքականություն, դառնալով ցեղասպանության թուրքական քաղաքականության կույր գործիքը: Այդ քաղաքականության սահմեղեցուցիչ դրսևորումները Հարավային Կովկասի ողջ տարածաշրջանի պատմության մտայն էջերն են կազմում: Դրանցից հատկանշելի են Բաքվի 1918 թ. և Շուշիի 1920 թ. եղեռնագործությունները: Իր պատմական հայրենիքից հայ ազգաբնակչության բռնի տեղահանության քաղաքականության շուրջ 70-ամյա անպատիժ գործադրումն այսօր հայրենագրել է կես միլիոնից ավելի ադրբեջանահայերի, մարդկային ու մշակութային վիթխարի և անդառնալի կորուստների պատճառ դարձել: Բայց այդ ամենին քաղաքական գնահատական չտալը, չդատապարտելը և հանցագործ Ադրբեջանին պատասխանատվության չենթարկելը հանգեցրել են նրան, որ այդ պետությունն այսօր դարձել է տարածաշրջանի ամենաազդեցիկ, սպառազինությունների մրցավազքով և նոր պատերազմ սանձազերծելու մոլուցքով տառապող մի անկանխատեսելի ու վտանգավոր կազմավորում, պատերազմի մշտական օջախ, որը սպառնում է հարավ-կովկասյան տարածաշրջանի անվտանգությունը, միջազգային կառույցների տնտեսական, քաղաքական և տարածաշրջանային այլ ծրագրերի իրականացմանը: Այդ սպառնալիքը հատկապես կանխադրում է հայկական կողմի համար, քանզի տասնամյակների փորձը վերջինիս օգնում է ավելի լավ ճանաչելու խարդախ հարևաններին, կանխատեսելու նրանցից եկող վտանգը: Միաժամանակ, դա մեզ իրավունք է տալիս դիմելու զինված ինքնապաշտպանության, ինչպես արդեն դա արել ենք XX դարի 90-ականների սկզբներին Ադրբեջանի նախահարձակմանը դիմադրավելու ժամանակ կամ էլ կանխարգելիչ հակահարված հասցնելու սահմանագծում հակառակորդի դիպուկահարների ու դիվերսիոն-հետախուզական խմբերի չդադարող սադրանքների ու ոտնձգությունների զսպման նպատակով: Իսկ համաշխարհային ուժային կենտրոնները, կաշկանդված իրենց հակասական շահերից և կուրացած քաղաքականական քարոզչամեթոդային կեղծիքների խաբուսիկ ցուրթից, դեռևս հապաղում են բռնել պանթուրքական գառանցանքներով տառապող ոճրագործի ձեռքը, դատապարտել պատերազմի սպառնալիքներով ու հրադադարի յեժմիկը խախտելով, զանազան սադրանքներով իրավիճակը ապակայունացնելու և խաղաղարար գործընթացը տապալելու: Ադրբեջանի քաղաքականությունը: Առաջընթացի հասնելու համար հայկական կողմի անելիքները ևս շատ են, մասնավորապես, որ ճշմարտությունը տեղ հասցնելու համար պահանջվում է երկարատև ու անդադար պայքար: Այս տեսակետից կարելի է հատկանշել նաև հասարակության ակտիվության գործոնը: Այդ դաշտում կարելի է առանձնացնել Ադրբեջանի պետական ահաբեկչությունը և էթնիկական գաղամների քաղաքականությունը դատապարտելու և միջազգային հանրությանը դրա անհրաժեշտությունը ներկայացնելու «Կանառ» գիտական կենտրոնի նախաձեռնությունները: Արդեն իններորդ տարին է, ինչ Շուշիում Կենտրոնի կողմից կազմակերպվում են գանազան միջոցառումներ՝ նվիրված 1920 թ. մարտյան ողբերգության հերթական տարեկիցներին: Տեղասպանություն վերապրած մեր հայրենակիցների սերունդների նպատակը ոչ միայն Ադրբեջանի պետական ահաբեկչության ու էթնիկական գաղամների քաղաքականության դատապարտումն է, այլև միջազգային հանրությունից, նախ և առաջ, Ադրբեջան-ԼՂՀ հակամարտության կարգավորման գործընթացում ներգրավված պետություններից նույնն ակնկալելն ու պահանջելն է:

Այսպես կոչված՝ Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության կողմից ծրագրված ու կազմակերպված Բաքու և Շուշի քաղաքների հայ բնակչության ջարդերը և Արցախի երբեմնի ժողովուրդի մայրաքաղաքի իրկիզումը էթնիկական գաղամն ադրբեջանական քաղաքականության հերթական դրսևորումներն էին, ոչ միայն արմենոցիի թուրքական քաղաքականության

շարունակությունը, այլ նաև ունեցածություն ամբողջ մարդկության ու ժողովրդավարության դեմ Կազմակերպված միջոցառումների մասնակիցները դատապարտել են Ադրբեջանի ոճրագործությունները և վստահություն են հայտնել, որ միջազգային հանրության կողմից այդ երկրի պետական անաբեկության ու էթնիկական գտումների շարունակվող քաղաքականության դատապարտումը կամ դրան համարժեք քաղաքական, իրավական գնահատական տալը կարող են դառնալ նման հակամարդկային դրսևորումների կանխարգելման ամենաարդյունավետ միջոցը:

Ներկայիս Ադրբեջանը, լինելով Ադրբեջանի դեմոկրատական հանրապետության իրավահաջորդը, և օգտվելով անպատեկությունից, որդեգրել է իր նախորդի ոճրագործ քաղաքականությունը՝ Դրա վկայությունն են հանդիսանում 1987-91 թվականների ադրբեջանահայության ջարդերը և բռնատեղահանությունները, ագրեսիայի նախաձեռնումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ, իսկ ներկայումս՝ սահմաններ փակելով, հրադադարի ռեժիմը պարբերաբար խախտելով, խաղաղարար գործընթացին խոչընդոտելով պատերազմի ու սպառազինությունների մրցակազմի մշտական հրախուրդը:

Թուրքիայի ու Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականությունը վերապրածների սերունդները դատապարտում և անընդունելի են համարում քաղաքական հիմնախնդիրները բիրտ ուժի միջոցով լուծելու՝ այդ երկու կազմավորումների քաղաքական գիծը՝ Թեև մեր ժողովուրդը միշտ էլ կարծել է, թե միայն քաղաքակիրթ ճանապարհով կարելի է լուծել պետությունների միջև վիճահարույց հիմնախնդիրները, սակայն պատմությունը սովորեցնում է, որ ծառացած խնդիրները պետք է լուծել ապավինելով սեփական ուժերին, մեր ազգի բազկի ու մտքի հավաքական գորությանը: Ուստի, Շուշիի հայերի հանդեպ եղեռնագործության 95-րդ և Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի տարածքում հայ ազգաբնակչության ցեղասպանության 100-րդ տարելիցներին մեր ժողովուրդը միջազգային հանրությունից ընդամենն ակնկալում է դատապարտել Ադրբեջանի՝ տասնամյակներ շարունակվող հակահայկական գործողությունները ու բոլոր հնարավոր միջոցներով այդ երկրի ավտորիտար իշխանություններին հետ պահել Հարավային Կովկասի անվտանգությանը մշտապես սպառնալու անմիտ մարտավարությունից: Կամ՝ գոնե համակողմանիորեն աջակցել Ադրբեջանի ագրեսիվությունը զսպելու կարևոր առաքելությունն արդեն ավելի քան երկու տասնամյակ իրականացնող Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը և նրա փառապանծ Պաշտպանության բանակին...

Անթույլատրելի է այք փակել նաև ամենաբարձր մակարդակով Նախիջևանում իրականացվող հայկական մշակութային արժեքների ոչնչացման վրա: Երբ ծայրահեղական իսլամիստները Սիրիայում զազանաբար ոչնչացնում են մշակութային համամարդկային արժեքները, առավել քան զգացվում է Նախիջևանում ադրբեջանցիների կողմից հայկական բացառիկ խաչքարերի ջարդուփշուր անելու նախադեպը և վանդախզմի այլ գործողությունները դատապարտելու, ինչպես նաև Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Նախիջևանյան թեման շարունակությունն է Ադրբեջանի պետական անաբեկության ու էթնիկական գտումների քաղաքականության մերկացման և Արցախի հետ սերտորեն առնչվում է ինչպես Ադրբեջանի հետ հակամարտության համատեքստում, այնպես էլ այն առումով, որ հենց Նախիջևանի ողբերգական ճակատագիրը մղեց Արցախի հայ ազգաբնակչությանը պարզելու պայքարի դրոշմ՝ Ադրբեջանի ոճրագործ քաղաքականությունից ինքնապաշտպանվելու նպատակով: 1920 թ. մարտյան ողբերգությանը զոհ գնացին նաև ժամանակին Ազուխից Շուշի տեղափոխված մեր հայրենակիցները, ուստի Արցախի ոստանի ու Նախիջևանի կապը ոչ միայն պատմականորեն է, այլ նաև նույն ոճրագործ քաղաքականությանը ենթարկվելու դժբախտությունն ունենալու տեսանկյունից:

Շուշիի մարտյան ողբերգության 95-րդ տարելիցի առթիվ այս հրապարակումը նպատակ ունի ևս մեկ անգամ բարձրաձայնել Արցախի երբեմնի ոստանում Ադրբեջանի կազմակերպած հայերի կոտորածների մասին, միջազգային հանրության ուշադրությունը

սևեռել հիմնահարցի վրա և իրավասու մարմինների ուշադրությանը ներկայացնել սահմանված ընթացակարգով համապատասխան միջազգային ատյաններ դիմելու և Ադրբեջանին իրավական ու քաղաքական պատասխանատվության ենթարկելու անհրաժեշտությունը:

Շուշիում Ադրբեջանի կողմից կազմակերպված ոճրագործությունները հայ ազգաբնակչության նկատմամբ ցեղասպանության տասնամյակներ շարունակվող քաղաքականության հերթական դրսևորումն էին և բացահայտում են Ադրբեջանի անաբեկական, ագրեսիվ ու անմարդկային բնույթը: Մեր օրերում, երբ տեղաբնիկների ցեղասպանության միջոցով ձևավորված Ադրբեջանի ղեկավարները բարձր ամբիոններից ճամարտակում են ժողովրդավարական արժեքների մասին, պետականորեն կազմակերպված ու իրագործված ոճրագործությունների համար ցինիկորեն մեղադրում դրանց զոհ գնացած հայերին, ավելի քան հրատապ է, մանավանդ՝ ներկայումս լայն թափ ստացած տեղեկատվական պատերազմի պայմաններում, անցյալի ողբերգական իրադարձությունների վերախմաստավորումը, դրանց համարժեք գնահատական տալը և, դրանով իսկ Ադրբեջանին դիմակազերծ անելը:

Սրտագին Կոչ Աստուծոյ Առաջ եւ Պատմութեան Համար

ՄԵԻՆԿ ՅԱԿՈԲԵԱՆ

Քանի մը օր առաջ աշխարհը ապշահար եղաւ ի տես համացանցին մէջ յայտնուած տեսագրութեններու, ուր իսլամական ծայրայեղականներ ջարդուփշուր կ'ընէին Մուսուլի թանգարանի պատմական արժեքաւոր արձանները:

Քանիդաձմեռը՝ ըլլան անոնք ցուցանուշ, թէ իսկական, մարդկային քաղաքակրթութեան առաջին իսկ օրերէն մնացած՝ մեզի հասած իրեր էին, մինչ բարբարոսութեան վայրն ալ մեզի ծանօթ մարդկային քաղաքակրթութեան ծննդավայրը համարուող աշխարհագրական շրջանը:

Հինգ վարկեան տեւողութիւն ունեցող տեսաերիզը, որ ըստ նշումին արտադրութիւնն է Տաւշի Նինուէի շրջանի տեղեկատուական գրասենեակին, կը սկսի Քուրանի համարով մը, որ կոտապաշտութիւնը կը դատապարտէ: Խաւարամիտ ծայրայեղականները մարդկային անցեալի քաղաքակրթութիւնը յատկանշող արձաններու թանգարանի մը մէջ պահպանումը կոտապաշտութեան հետ շփոթած՝ մուրճերով եւ քանդիչ գործիքներով, հետեւելով Թալիբանի իրենց գաղափարակիցներուն օրինակին, որոնք իրենց կարգին ատենին Աֆղանիստանի մէջ քանդեցին Պուտայի անգուգական մեծադիր արձանները, տեսաերիզին մէջ ջարդուփշուր կ'ընէին անգին արձաններ ու առարկաներ, որոնց կարգին Ատրեստանը խորհրդանշող Քրիստոսէ առաջ 7-րդ դարէն ի վեր պահպանուած՝ մարդկային դարաւոր պատմութեան ականատես՝ «Թեւաւոր Եզը»:

Ի



տես այս անհաւատալի բայց իրաւ, դարեր առաջ Հուլաղու Խանի Մոնկոլներէններուն Պաղտատի գրադարանի հրկիզումը յիշեցնող տխուր երեւոյթին, (որ ճակատագրի մէկ հեզմանքով պատմութեան մէջ պատահած է գրեթէ միեւնոյն օրերուն՝ 29 Յունուարէն 10 Փետրուար, 1258-ին), տեսաերիզը տեսնողին սիրտը կը ճմուրի ճիշդ այնպէս՝ ինչպէս կը զգանք ի տես մարդկային էակի մը վնասուելուն: Մուսուլի ամբողջ պատմութիւնն է, որ քանի մը վայրկեանի մէջ

ՄՇԱԿՈՒՅՑ

«ABC». Կոմիտասը պահպանել է հայկական ժողովրդական երաժշտությունը

05.03.2015

1990-ական թվականներին դուրդուկն Արեւմուտքում մեծ տարածում ստացավ ֆիլմերի երաժշտություններում, ռադիոյում և տարբեր հավաքածուներում: Այս մասին փաստագրական ռադիոհաղորդումների հեղինակ, գրող Կառա Ռոուզհոուփը գրել է ավստրալական «ABC» ազգային հեռարձակող կորպորացիայի կայքում: Նա նաև հավելել է, որ Հայաստանի ժողովրդական երաժշտությունը, հնարավոր է, չէր ապրի Հայոց ցեղասպանության ժամանակ, եթե չլիներ Կոմիտասը՝ հոգևորական, երաժիշտ, կոմպոզիտոր:



«Հայաստանն այսօր փոքրիկ ազգ-պետություն է Կովկասում, սակայն պատմականորեն այն տարածվել է ամբողջ Արևելյան Անատոլիայում, Արարատ լեռան լանջերին, որտեղ, ինչպես ասվում է, իջել է Նոյան տապանը: Այդ հողը հարուստ է եղել քաղաքների և գյուղերի բանաստեղծությամբ և երգերով: Դրանք եղել են շինական, ծխակարգային երգեր, երգեր բնության, սիրո մասին, ինչպես նաև հնագույն էպոսներ և եկեղեցական արարողություններ և աղոթքներ»,- գրել է նա:

